1810

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆՅՈՒԹԵՐ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

3K23
Ն-82

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1946

30 MAY 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

3K23
Կ-82
03 NOV 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆՅՈՒԹԵՐ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ժողովածու

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

1810
11 SEP 2013
1650
40

В. И. ЛЕНИН
МАТЕРИАЛЫ ПО АГРАРНОМУ ВОПРОСУ
Государственное издательство политической литературы
Ереван ● 1940

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս ժողովածուի մեջ մտել են Վ. Ի. Լենինի այն հոդվածներն ու ճառերը, վորոնք նվիրված են բոլշևիկների 1905 և 1917 թվականների հեղափոխության ժամանակաշրջանի ագրարային ծրագիրը մշակելուն ու գյուղացիության լայն մասսաների մեջ ժողովրդականացնելուն:

Ժողովածուի առաջին բաժնում տրված են այն հոդվածները, վորոնք հրատարակվել են 1905 թ. մարտ—նոյեմբեր ամիսներին «Вперед», «Пролетарий», «Новая Жизнь» բոլշևիկյան լրագրերում:

Երկրորդ հատվածը կազմված է 1917 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր ամսվա վերջը «Солдатская Правда», «Рабочий» և «Правда» լրագրերում տպված «Նյութեր ագրարային հարցի շուրջը» հոդվածներից, վորոնք հավաքված են մի բրոշյուրի մեջ: 1917 թ. դեկտեմբերի 10-ին (նոյեմբերի 27-ին) Վ. Ի. Լենինն այդ բրոշյուրին առաջաբան գրեց: Բրոշյուրը լույս տեսավ նույն թվականի դեկտեմբերի կեսերին:

Բրոշյուրի առաջաբանի մեջ Վ. Ի. Լենինը մատնանշում եր, վոր այդ նյութերն իրենց մեջ առնում են հողային հարցի մասին «լայն տարածման համար պիտանի ամենագլխավոր հոդվածներն ու ճառերը»: Այս ժողովածուն կրում է վերոհիշյալ բրոշյուրի վերնագիրը:

Տպագրվում է ըստ Երկերի VII, VIII, XX, XXI և XXII հատորների տեքստի: 1917 թ. հոդվածները համեմատված են «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրի առաջին (և միակ) հրատարակության հետ, «Прибой» հրատարակություն, Պետերբուրգ, 1917 թ.:

1905 Թիվ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Սկսվում են գյուղացիական ապստամբությունները։ Զանազան նահանգներից լուրեր են գալիս կալվածատիրական դաստակերտների վրա գյուղացիների հարձակումների մասին, գյուղացիների կողմից կալվածատերերի հացը, անասունները գրավելու մասին։ Ցարական զորքը, որը Մանջուրիայում գլխովին ջարդվել է յապոնացիների կողմից, ռեվանշ է տալիս անզեն ժողովրդին, էքսպեդիցիաներ ձեռնարկելով ընդդեմ ներքին թշնամու—ընդդեմ չքավոր գյուղացիության։ Քաղաքային բանվորական շարժումը նոր դաշնակից է ձեռք բերում հանձին հեղափոխական գյուղացիության։ Դեպի գյուղացիական շարժումը պրոլետարիատի գիտակից ավանգարդի—սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի հարցը անմիջական գործնական նշանակություն է ստանում և պետք է մոտակա օրակարգի մեջ դրվի մեր բոլոր կուսակցական կազմակերպություններում, պրոպագանդիստների և ագիտատորների ամեն մի ելույթի ժամանակ։

Սոցիալ-դեմոկրատիան արդեն բազմիցս մատնանշել է, թե գյուղացիական շարժումը նրան երկակի խնդիր է առաջադրում։ Մենք պետք է անպայմանորեն պաշտպանենք և առաջ մղենք նրան, որքանով այդ շարժումը հեղափոխական-դեմոկրատական շարժում է։ Դրա հետ մեկտեղ մենք պետք է անշեղորեն կանգնենք մեր դասակարգային պրոլետարական տեսակետի վրա, գյուղական պրոլետարիատին քաղաքային պրոլետարիատի նման և նրա հետ մեկտեղ կազմակերպենք ու ինքնուրույն դասակարգային կուսակցություն դարձնենք, պարզաբանելով նրան իր շահերի և բուրժուական գյուղացիության շահերի թշնամական հակադրությունը, կոչ անելով պայքարելու հանուն սոցիալիստական հեղափոխության, մատնանշելով նրան, որ ճնշումից և աղքատությունից փրկությունը ոչ թե գյուղացիության մի-

քանի խավերը մանր բուրժուաներ դարձնելն է, այլ այն, որ ամբողջ բուրժուական կարգը փոխարինվի սոցիալիստականով:

Սոցիալ-դեմոկրատիայի այս յերկակի խնդիրը բազմիցս նշվել է հին «Искра»-յում, սկսած № 3-ից*, այսինքն՝ 1902 թվի գյուղացիական առաջին շարժումից էլ դեռ առաջ: Այդ արտահայտված է նաև մեր կուսակցական ծրագրի մեջ: Այն կրկնվել է նաև մեր լրագրի մեջ (№ 3**): Այժմ, յերբ առանձնապես կարևոր է պարզել այս խնդիրն իր պրակտիկ դրվածքով, հետաքրքրական է բերել Կարլ Կաուցկու դիտողությունները, վորը գերմանական սոց.-դեմ. «Die Neue Zeit» ժուռնալում զետեղել է «Գյուղացիները և հեղափոխությունը Ռուսաստանում» հոդվածը: Վորպես սոցիալ-դեմոկրատ, Կաուցկին անշեղորեն պաշտպանում է այն ճշմարտությունը, թե մեր հեղափոխության առջև այժմ դրված է վոչ թե սոցիալիստական հեղաշրջման խնդիր, այլ արտադրության գոյություն ունեցող, այսինքն՝ կապիտալիստական յեղանակի զարգացման ճանապարհից քաղաքական խոչընդոտների վերացման խնդիրը: Յեվ Կաուցկին շարունակում է. «Հեղափոխական քաղաքային շարժումը պետք է չեզոք մնա գյուղացու և կալվածատիրոջ հարաբերությունների հարցում: Այդ շարժումը վոչ մի հիմք չունի կանգնելու գյուղացիների և կալվածատիրոջ միջև, պաշտպան կանգնելու վերջինիս ընդդեմ առաջինների, նրա համակրանքն ամբողջովին գյուղացիության կողմն է: Սակայն հեղափոխական քաղաքային շարժման խնդիրն ամենևին էլ այն չէ, վոր գյուղացիներին դրդի կալվածատերերի դեմ, վորոնք արդի Ռուսաստանում բոլորովին այն դերը չեն խաղում, ինչ խաղում եր թեկուզ ֆրանսական «հին կարգի» ժամանակների ֆեոդալական ազնվականությունը: Ասենք, քաղաքային հեղափոխականները, անգամ յեթե ցանկանային էլ, շատ ու շատ քիչ ազդեցություն կարող եյին ունենալ կալվածատերերի և գյուղացիների հարաբերությունների վրա: Կալվածատերերն ու գյուղացիներն այդ հարաբերություններն արդեն իրենք կսահմանեն իրար միջև»: Ճիշտ հասկանալու համար Կաուցկու այս դիտողությունները, վորոնք ընդհանուր կապից պոկած, կարող եյին շատ թյուրիմացություններ առաջ բերել, հարկավոր է անպայման նկատի ունենալ նաև հոդվածի վերջում դրած նրա հետևյալ դիտողությունը: «Հաղթական հեղափոխությունը,—ասում է նա այն-

* Տե՛ս Յերկերի IV հատորը, եջ 100—106: Խմբ.:
** Տե՛ս Յերկերի VII հատորը, եջ 70—75: Խմբ.:

տեղ,—թերևս առանձին դժվարությունների չեր հանդիպի այն բանում, վոր հեղափոխության ամենավոխերիմ թշնամիների խոշոր լատիֆունդիաները գործածեր պրոլետարների և գյուղացիության կյանքի պայմանները բարելավելու համար»:

Այն ընթերցողը, վորն ուշադրությամբ կարդացել Կաուցկու այս տողերը, դրանց մեջ հեշտությամբ կտեսնի հենց այն սոցիալ-դեմոկրատական հարցադրումը, վոր մենք հիմա ուրվագծեցինք: Կաուցկու արտահայտությունների մեջ յեղած առանձին անճշտություններն ու անորոշությունները կարող են բացատրվել նրա դիտողությունների թռուցիկությամբ և ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագրի[1] հետ բավականաչափ ծանոթ չլինելով: Բանի եյությունն այն է, վոր հեղափոխական պրոլետարիատի վերաբերմունքը գյուղացիների ու կալվածատերերի միջև յեղած դասի նկատմամբ բոլոր դեպքերում և բոլոր պայմաններում միատեսակ չի կարող լինել ռուսական հեղափոխության տարբեր պերիպետիաներում: Մեկ պայմաններում, վորոշ կոնյունկտուրաների պարագաներում այդ վերաբերմունքը պետք է լինի վոչ միայն համակրանքի, այլև ուղղակի պաշտպանության վերաբերմունք, և վոչ միայն պաշտպանության, այլև «դրդելու» վերաբերմունք: Ուրիշ պայմաններում այդ վերաբերմունքը կարող է և պետք է լինի չեզոք: Կաուցկին, նրա բերած դիտողություններից դատելով, ճիշտ է ըմբռնել մեր խնդրի այս յերկակի կողմը,—ի տարբերություն վոչ միայն մեր «սոցիալիստ-հեղափոխականներից», վորոնք ամբողջովին խրվել են հեղափոխական դեմոկրատիայի վուլգար պատրանքների մեջ, այլև շատ սոցիալ-դեմոկրատներից, վորոնք, Ռյազանովի և Իքսի նման, խնդրի «պարզ», բոլոր կոմբինացիաների համար միատեսակ լուծում եյին փնտրում: Այդպիսի սոցիալ-դեմոկրատների և բոլոր սոց.-հեղափոխականների հիմնական սխալն այն է, վոր նրանք հետևողականորեն չեն պահպանում դասակարգային տեսակետը, և ամեն տեսակի կոմբինացիաների համար խնդրի միատեսակ լուծում փնտրելով, մոռանում են ունևոր և միջակ գյուղացիության յերկակի բնության մասին: Իրենց հաշիվներում նրանք, ըստ եյության, գործ են ունենում միայն յերկու դասակարգի հետ. կա՛մ կալվածատերերի և «գյուղացիական-բանվոր դասակարգի» հետ, կա՛մ սեփականատերերի և պրոլետարների հետ: Իսկ իրականում մեր առջև կան իրենց մերձավորագույն և վերջնական նպատակներով յերեք տարբեր դասակարգեր. կալվածատերեր, ունևոր և մասամբ միջակ գյուղացիություն և, վերջապես, պրո-

լետարիատ: Այսպիսի իրադրության պայմաններում պրոլետարիատի խնդիրն իրականում չի կարող յերկկողմանի չլինել, և Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական ագրարային ծրագրի ու ագրարային տակտիկայի ամբողջ դժվարությունն այն բանի ըստ կարելույն ավելի պարզ և ճշգրիտ սահմանելն է, թե վո՛ր պայմաններում պրոլետարիատի համար պարտադիր է չեզոքությունը և վո՛ր պայմաններում՝ աջակցելն ու «գրգռելը»:

Այս խնդիրը կարող է ունենալ միայն մեկ լուծում. գյուղացիական բուրժուազիայի հետ մեկտեղ ընդդեմ ամեն մի ճորտատիրության և ընդդեմ ճորտատեր-կալվածատերերի, քաղաքային պրոլետարիատի հետ մեկտեղ ընդդեմ գյուղացիական և ամեն տեսակի այլ բուրժուազիայի, այս է գյուղական պրոլետարիատի և նրա գաղափարախոս սոցիալ-դեմոկրատի «գիծը»: Ուրիշ խոսքով. գյուղացիությանն աջակցել և առաջ մղել ընդհուպ մինչև ամեն մի «սրբազան» ազնվական «սեփականության» ամեն տեսակի խլումը, վորքանով այդ գյուղացիությունը հանդես է գալիս վորպես հեղափոխական-դեմոկրատական: Անվստահորեն վերաբերվել գյուղացիությանը, նրանից անջատ կազմակերպվել, պատրաստ լինել պայքարելու նրա դեմ, վորքանով այդ գյուղացիությունը հանդես է գալիս վորպես ռեակցիոն և հակապրոլետարական: Մի այլ կերպ ել. աջակցել գյուղացուն, յերբ կալվածատիրոջ դեմ ուղղված նրա պայքարը ոգուտ է բերում դեմոկրատիայի զարգացմանն ու ամրապնդմանը. չեզոքություն պահպանել գյուղացու նկատմամբ, յերբ կալվածատիրոջ դեմ ուղղված նրա պայքարը հանդիսանում է բացառապես հողատիրական դասակարգի յերկու ֆրակցիաների միջև հաշիվների այնպիսի մաքրում, վոր չի շոշափում պրոլետարիատի և դեմոկրատիայի շահերը:

Հասկանալի յե, այսպիսի պատասխանը չի բավարարի այն մարդկանց, վորոնք գյուղացիական հարցին մոտենում են առանց կշռադատված թեորետիկ հայեցողությունների, վորոնք վազում են դյուրընթաց և եֆեկտավոր «հեղափոխական» (խոսքով) լոզունգի հետևից, վորոնք չեն հասկանում հեղափոխական ավանտյուրիզմի հսկայական և լուրջ վտանգը հատկապես գյուղացիական հարցի բնագավառում: Այդպիսի մարդկանց նկատմամբ,— իսկ դրանք արդեն քիչ չեն մեր շրջանում, դրանց թվին են պատկանում սոցիալիստ-հեղափոխականները, և հեղափոխության զարգացումը գյուղացիական շարժման հետ մեկտեղ յերաշխավորում է նրանց շարքերի ավելացումը,—այդպիսի մարդկանց

նկատմամբ սոցիալ-դեմոկրատները պետք է անշեղորեն պաշտպանեն դասակարգային պայքարի տեսակետն ընդդեմ ամեն տեսակի հեղափոխական անորոշության, գյուղացիության տարատեսակ տարրերի զգաստ հաշվառում՝ ընդդեմ հեղափոխական ֆրազի: Գործնականորեն և կոնկրետորեն ասած, ճշմարտության ամենից ավելի կարելի յե մոտենալ հետևյալ պնդումն անելով. ագրարային հարցում սոցիալ-դեմոկրատիայի բոլոր հակառակորդները հաշվի չեն առնում այն փաստը, վոր մեզ մոտ բուն յեվրոպական Ռուսաստանում կա ունևոր գյուղացիների մի ամբողջ խավ (1½—2 միլիոն տնտեսություն տնտեսությունների մոտ 10 միլիոն ընդհանուր թվից): Այդ խավի ձեռքումն է գտնվում գյուղացիության ունեցած արտադրության բոլոր գործիքների և ամբողջ սեփականության կեսից վոչ պակասը: Այդ խավն առանց բատրակների և որամշակ վարձելու չի կարող գոյություն ունենալ: Այդ խավն, անկասկած, թշնամի յե ճորտատիրությանը, կալվածատերերին, չինովնիկությանը, նա ընդունակ է դեմոկրատ դառնալու, բայց ե՛լ ավելի անկասկած է նրա թշնամությունը գյուղական պրոլետարիատի նկատմամբ: Ագրարային ծրագրի և տակտիկայի մեջ այդ դասակարգային թշնամությունը քողարկելու, զանց անելու ամեն մի փորձը նշանակում է գիտակցաբար կամ անգիտակցաբար մի կողմ թողնել սոցիալիստական տեսակետը:

Գյուղական պրոլետարիատի և գյուղացիական բուրժուազիայի միջև գտնվում է միջակ գյուղացիության խավը, վորի դրության մեջ կան յերկու հակոտնյայի, թե՛ մեկի և թե՛ մյուսի գծերը: Այս բոլոր խավերի, ամբողջ գյուղացիության դրության այս ընդհանուր գծերն ամբողջությամբ, անկասկած, դեմոկրատական են դարձնում նրա ամբողջ շարժումը, վորքան ել մեծ լինեն անգիտակցականության և ռեակցիոնականության այս կամ այն արտահայտությունները: Մեր խնդիրն է—յերբեք չշեղվել դասակարգային տեսակետից և քաղաքային ու գյուղական պրոլետարիատի ամենասերտ դաշինք կազմակերպել: Մեր խնդիրն է—մեզ և ժողովրդին պարզել այն իսկական դեմոկրատական և հեղափոխական բովանդակությունը, վորը թաղնված է դեպի «հող և ազատություն» («земля и воля») յեղած ընդհանուր, բայց մշուշային ձգտման հետևում: Ուստի մեր խնդիրն է ամենայեռանդուն կերպով աջակցել և առաջ մղել այդ ձգտումը, դրա հետ մեկտեղ գյուղում ևս սոցիալիստական պայքարի տարրեր պատրաստելով:

Վորպեսզի ճիշտ վորոշվի, թե սոցիալ-դեմոկրատական բան-

վորական կուսակցությունը պրակտիկայում ինչ վերաբերմունք ունի դեպի գյուղացիական շարժումը, մեր կուսակցության յերրորդ համագումարը պետք է գյուղացիական շարժմանն ոժանդակելու բանաձև ընդունի: Ահա՛ այդպիսի բանաձևի նախագիծը, բանաձև, վորը ձևակերպում է վերը.շարադրված և սոց.-դեմոկրատական գրականության մեջ բազմիցս արծարծվող հայացքները և վորը պետք այժմ քննարկվի կուսակցական աշխատողների հնարավորին չափ ավելի լայն շրջանում:

«Ռուսաստանի Ս.Դ.Բ. Կուսակցությունը, վորպես գիտակից պրոլետարիատի կուսակցություն, ձգտում է բոլոր աշխատավորներին լիովին ազատել ամեն տեսակի շահագործումից և պաշտպանում է արդի հասարակական և քաղաքական կարգերի դեմ ուղղված ամեն մի հեղափոխական շարժում: Ուստի Ռուս. Ս.Դ.Բ.Կ. ամենայեռանդուն կերպով աջակցում է և ժամանակակից գյուղացիական շարժմանը, պաշտպանելով բոլոր այն հեղափոխական միջոցները, վորոնք ընդունակ են բարելավելու գյուղացիության վիճակը, այդ գործում կանգ չառնելով կալվածատիրական հողի եքսպրոպրիացիայի յենթարկելու առջև: Ընդսմին Ռուս. Ս.Դ.Բ.Կ., լինելով պրոլետարիատի դասակարգային կուսակցություն, անշեղորեն ձգտում է գյուղական պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային կազմակերպման, վոչ մի րոպե չմոռանալով այն խնդիրը, վոր հարկավոր է նրան պարզաբանել իր շահերի և գյուղացիական բուրժուազիայի շահերի թշնամական հակադրությունը, պարզաբանել նրան, վոր միայն գյուղական ու քաղաքային պրոլետարիատի համատեղ պայքարն ընդդեմ ամբողջ բուրժուական հասարակության կարող է հասցնել սոցիալիստական հեղափոխությանը, վորը միայն ընդունակ է գյուղական չքավորության ամբողջ մասսային իսկապես ազատել աղքատությունից և շահագործումից:

«Վորպես գյուղացիության մեջ ագիտացիա մղելու պրակտիկ լոզունգ և այդ շարժման մեջ առավելագույն գիտակցականություն մտցնելու միջոց, Ռուս. Ս.Դ.Բ.Կ. առաջադրում է հեղափոխական գյուղացիական կոմիտեների անհապաղ ստեղծում՝ բոլոր դեմոկրատական ձևափոխումները հանրակողմանիորեն պաշտպանելու և դրանք մասնավորապես իրականացնելու համար: Յեվ այդպիսի կոմիտեներում Ռուս. Ս.Դ.Բ.Կ. ձգտելու է ստեղծել գյուղական պրոլետարների ինքնուրույն կազմակերպություն, նպատակ ունենալով, մի կողմից, աջակցել ամբողջ գյուղացիությանը նրա բոլոր հեղափոխական-դեմոկրատական յելույթներում, իսկ մյուս կողմից, նպատակ ունենալով պաշտպանելու գյուղական պրոլետարիատի իսկական շահերը՝ գյուղացիական բուրժուազիայի դեմ նրա մղած պայքարում»:

«Вперед» № 11, 1905 թ. մարտի 23 (10):

ԼԻԲԵՐԱԼՆԵՐԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Լեգալ թերթերում բավականին վաղ տպագրվեց մի հաղորդագրություն, թե Մոսկվայում կայացավ Ռուսաստանի զանազան վայրերից ի մի հավաքված զեմստվոյական գործիչների խորհրդակցությունը։ «Московские Ведомости»-ն նույնիսկ փորձ արեց աղմուկ բարձրացնել այդ առթիվ, գոռալով կառավարության կողմից Ռուսաստանում թույլատրվող հեղափոխական համագումարների մասին, միապետական կուսակցության համագումարի անհրաժեշտության մասին և այլն, բայց վոչ վոք այդ աղմուկների վրա լուրջ ուշադրություն չդարձրեց, վորովհետև վոստիկանությունն այժմ բավականին շատ գործ ունի անելու շատ ավելի լուրջ կարգի հուզումների հետ։ Իսկ զեմստվոյականները, ըստ յերևույթին, դուրս չեն յեկել սովորական սահմանադրական ցանկությունների շրջանակներից։ Նրանց խորհրդակցությունները, սակայն, նշանակալից հետաքրքրություն էին ներկայացնում, վորովհետև նրանք ընդգրկում էին ագրարային հարցը։ Բերում ենք ամբողջովին այն դրույթները, վորոնք, ըստ լրագրական հաղորդումների, ընդունվեցին համագումարի ձայների մեծամասնությամբ.

«1) Պետական միջամտությունը տնտեսական կյանքում պետք է տարածվի նաև ագրարային հարաբերությունների բնագավառի վրա։ 2) Ագրարային օրենսդրության ճիշտ դրվածքը պայմանավորվում է արմատական ձևափոխումով (??)։ 3) Առաջիկա ագրարային ռեֆորմը պետք է կառուցվի հետևյալ հիմունքներով. I. Հողագործական դասակարգի տնտեսական դրության բարելավում՝ զանազան կատեգորիաների սակավահող խմբերի օգտին մասնատիրական հողերից պարտադիր կերպով անհրաժեշտ հողակտորներ հետ գնելու միջոցով (այդ հարցի մշակումը հանձնարարված է միքանի անձերի)։ II. Արքունի հողերը և ուդելային հողերի մի մասը վորպես պետական հողային ֆոնդ ճանաչել. այդ ֆոնդի ավելացում՝ մասնատիրական հողերը գնելու և հետ գնելու միջոցով և այդ ֆոնդի շահագործումը հօգուտ աշխատավորական բնակչության։ III. Վարձակալության պայմանների կարգավորում վարձակալական հարաբերություններին պետության կողմից միջամտելու միջոցով։ IV. Հասարակական-պետական միջնորդ հանձնաժողովների ստեղծում վերը մատնանշված հիմունքների համաձայն ագրարային միջոցառումներ կենսագործելու համար։ V. Լայն հի-

մունքներով վերաբնակեցման և տարաբնակեցման ճիշտ դրվածք, վարկի զանազան տեսակներից օգտվելու հեշտացում, գյուղացիական բանկի ռեֆորմ և օժանդակության կոոպերատիվ ձեռնարկություններին։ VI. Բաժնեհատման օրենսդրության արմատական վերանայում՝ հողերի սահմանազատումը հեշտացնելու, արագացնելու և էժանացնելու, մասնատիրական հողերի և բաժնեհողերի չերտընդմեջությունը վերացնելու, հողամասերը փոխանակելու և այլ նպատակներով»։

Նախքան այս չափազանց ուսանելի ծրագիրը կետ առ կետ քննարկելը, փոքր-ինչ կանգ առնենք նրա ընդհանուր նշանակության վրա։ Անկասկած է, վոր կալվածատիրական դասակարգի ներկայացուցիչների կողմից այսպիսի ծրագրով ելույթ ունենալու մեկ փաստն արդեն յերկար դատողություններից ավելի ակնառու ապացուցում է, վոր Ռուսաստանը տարբերվում է ինչ-վոր խոշոր առանձնահատկությամբ արևմտաեվրոպական բոլոր կազմավորված կապիտալիստական ազգերի համեմատությամբ։ Հարցն այն է, թե հատկապես ինչպիսին է այդ առանձնահատկությունը։ Արդյո՞ք դա կիսա-սոցիալիստական համայնական կարգն է և դրան համապատասխան մեզ մոտ բուրժուական ինտելիգենցիայի և բուրժուական դեմոկրատիայի բացակայությունը, ինչպես կարծում էին հին սոցիալիստ-նարոդնիկները և ինչպես կարծում են մասամբ «սոցիալիստ-հեղափոխականները»։ Թե՞ այդ առանձնահատկությունը ճորտատիրական առատ մնացորդներն են, վորոնք խճճում-կաշկանդում են մեր գյուղը, անհնար դարձնելով կապիտալիզմի լայն և ազատ զարգացումը և հենց բուրժուական դեմոկրատիայի տարրերի մոտ նարոդնիկական տրամադրություն են առաջ բերում։ Փոքր-ինչ մտածող սոցիալիստներն իրենց թույլ չեն տա այս հարցից օձիք ազատել խուսափողական պատճառաբանություններով, կամ վկայակոչելով հարցի վերացականությունը և թեորետիկականությունը, վորն իբր թե անտեղի յէ հեղափոխական դարաշրջանում, կամ մատնանշելով գյուղացիական ապստամբությունների փաստը, վորը բավականաչափ բացատրում է կալվածատիրական նախազգուշականությունը։ Թեորետիկական հարցերում խուսափողականությունը կամ անվճռականությունը հատկապես հեղափոխական դարաշրջանում հավասարազոր է լիակատար գաղափարական սնանկության, վորովհետև հատկապես այժմ է հարկավոր մտածված և հաստատակամ աշխարհայացք նրա համար, վորպեսզի սոցիալիստն իշխի դեպքերին, և վոչ թե դեպքերն իշխեն նրան։ Գյուղացիական ապստամբությունները վկայակոչելը նույնպես վոչինչ չի տալիս, վորով-

հետև զեմստվոյական միությունների մեջ այժմ քաղաքականորեն կազմակերպված հողատերերի ընդունած ծրագրի բովանդակությունը կազմում են այն ցանկությունները, վոր մի շարք տասնամյակների ընթացքում շարադրում եյին ամբողջ լիբերալ մամուլը և բոլոր լիբերալ գործիչները: Նարոդնիկական ծրագիրը դարձավ կալվածատերերի ծրագիր,—այս փաստը քաղաքական պարզ պատասխան է տալիս մեր դրած հարցին: Հեղափոխական դարաշրջանում հասարակական թեմաների շուրջը թեորետիկական վեճերը լուծվում են զանազան դասակարգերի բացահայտ ելույթով:

Արդ մոտիկից նայենք լիբերալների ագրարային ծրագրին: Մեր լեգալ մամուլը հակված է այդ ծրագիրը փառաբանելու կողմը: Օրինակ, «Экономическая Газета»-ն «արձանագրում է զեմստվային մարդկանց ագրարային ծրագրով ելույթի փաստը, ընդվորում անհամեմատ ավելի ծայրահեղ ծրագրով» (ահա՛ թե ինչ), «քան կարելի յեր սպասել, յելնելով զեմստվոյական միջավայրի ժամանակակից կազմի մասին ունեցած սովորական պատկերացումից» (այսինքն՝ ծայրահեղ՝ պ. պ. կալվածատերերի՞ տեսակետից): «Այս վկայում է,—շարունակում է լրագիրը,—վոր քաղաքական զեմստվոյական խումբն ունի և՛ քաղաքական տակտ, և՛ մեր շուրջը տեղի ունեցող յերևույթների խորը ըմբռնողություն»...

Պարոնայք կալվածատերերի տակտն ու ըմբռնողությունը կայանում է նրանում, վոր յերբ ագրարային հարաբերությունների բնագավառում սկսեցին ակտիվորեն և վճռականորեն միջամտել իրենք գյուղացիները, այն ժամանակ կալվածատերերը խոսք բաց արին պետական միջամտության անհրաժեշտության մասին: Հի՛ն և շարունակ նո՛ր պատմություն: Պետական միջամտությունը ագրարային հարաբերություններում շարունակ տեղի յե ունեցել Ռուսաստանում. յերբ դա միջամտություն եր հօգուտ բարձր դասակարգերի, այն ժամանակ վոստիկանական լեզվով կոչվում եր «կարգ ու կանոն». յերբ միջամտությունը սկսվում է վարից, այն ժամանակ խոսում են «անկարգությունների» մասին: Բայց թույլ տվեք, հատկապես ի՞նչ միջամտություն են ուզում կալվածատերերը: Նրանց ծրագրից յերևում է, վոր բացառապես՝ հողատիրության և հողոգտագործման հարաբերությունների միջամտություն: Նրանց բոլոր միջոցները, սկսած հողակտորները հետ գնելուց և վերջացրած վարկով և հողամասերը փոխանակելով, վերաբերում են բացառապես նրանց, ովքեր տնտեսապես ոգտվում են հողից, այսինքն՝ զանազան կարգի տնտեսատերերին: Իսկ տնտեսությունից զուրկ գյուղական բանվորնե՞րը: Չե՞ վոր մեզ մոտ Ռուսաստանում միայն «ներքին» 50 նահանգներում դեռ անցյալ դարի 90-ական թվականներին հաշվվում եր վոչ պակաս քան յերեք ու կես միլիոն բատրակ և օրամշակ, վորոնց համար վարձու գյուղական աշխատանքը կազմում եր ապրուստի միջոցների ամենագլխավոր աղբյուրը: Այժմ, անկասկած, գյուղատնտեսական վարձու բանվորների թիվն ե՛լ ավելի մեծ է, ըստվորում նրանց ճնշող մեծամասնությունը բոլորովին կամ համարյա բոլորովին տնտեսություն չունեն: Տուն և տնտեսություն չունեցողներից զատ մեզ մոտ նշված նահանգներում դեռևս տաս տարի առաջ մոտավորապես տաս միլիոն գյուղացիական տնտեսություններից ավելի քան յերեք միլիոն հաշվվում եյին ձիազուրկ տնտեսություններ: Այս ամբողջ մասսան տնտեսատեր է անունով միայն: Նրանց ամենակենսական շահն է ավելի բարձր աշխատավարձը, ավելի կարճ աշխատանքային օրը, աշխատանքի ավելի առողջ պայմանները: Պ. պ. կալվածատերերը խոհեմաբար լռությամբ են անցնում վարձողների և բանվորների հարաբերություններին միջամտելու վրայով: Յեվ կարելի յե հավատացած լինել, վոր այդպիսի միջամտության մասին նույնիսկ վոչ վոք լրջորեն չի մտածի, մինչև վոր չմիջամտեն իրենք՝ գյուղական բանվորները:

Մենք, սոցիալ-դեմոկրատներս, այդ միջամտության վրա ամենալուրջ ուշադրությունը պետք է դարձնենք: Այդ են պահանջում նաև շարժման անմիջական պրակտիկ շահերը և մեր ընդհանուր սկզբունքները: Ռուսական լիբերալիզմի և ռուսական նարոդնիկության բուրժուա-դեմոկրատական բնույթն իմիջի այլոց արտահայտվել և արտահայտվում է հատկապես այն բանում, վոր մանր գյուղատնտեսության շահերը միանգամայն աչքից ծածկում են գյուղական վարձու աշխատանքի շահերը: Իհարկե, համոզված նարոդնիկը, և հաճախ նաև «սոցիալիստ-հեղափոխականը», հակված է այդ համարելու միանգամայն բնական՝ վարձու աշխատանքի «յերկրորդական» (նրա յերևակայության մեջ, բայց վոչ թե մուժիկի կյանքում) դերի պատճառով, վոր «համայնական տրադիցիաների», «աշխատանքային հայեցողությունների» և «հավասարար ոգտագործման» հետագա զարգացման պայմաններում այդ դերը կարող եր և բոլորովին չքանալ: Բայց այդ հակումը, ինչպիսի ջերմ և անկեղծ, սոցիալիստականորեն-ճռճռան ճառերով էլ վոր պատճառաբանվի, իրականում վկայում է

մտահորիզոնի մանր-բուրժուական սահմանափակվածության և ավելի վոչնչի մասին: Այդ տեսակի յերազկոտությունը, վորը հատուկ է թե՛ ռուս գյուղացուն, թե՛ ռուս ինտելլիգենտին, մանր-բուրժուական յերազկոտություն է: Այս նարոդնիկական յերազկոտության ծաղիկները հենց այն կեղծ ծաղիկներն են, վոր զարդարում են աշխատավոր մարդկության շղթաներից մեկը, և սոցիալ-դեմոկրատական քննադատությունը պետք է անողոքաբար պոկի այդպիսի ծաղիկները «վոչ թե նրա համար, վոր մարդկությունը շարունակի այդ շղթաները կրել իրենց ձևով, մարդկություն, վորը զրկված է ամեն տեսակ ուրախությունից և ամեն տեսակ հաճույքից, այլ նրա համար, վոր այդ մարդկությունը դեն գցի շղթաները և ձեռքը մեկնի կենդանի ծաղիկներին»:

Մենք ամբողջովին համակրում ենք գյուղացիական շարժմանը: Մենք թե Ռուսաստանի ամբողջ հասարակական զարգացման և թե ռուսական պրոլետարիատի համար վիթխարի շահում կհամարեյինք այն, յեթե գյուղացիությանը հաջողվեր, մեր ոգնությամբ, հեղափոխական ճանապարհով կալվածատերերից խլել նրանց ամբողջ հողը: Բայց վերցրեք նույնիսկ այս լավագույն յելքը,—և այն ժամանակ էլ գյուղատնտեսական վարձու բանվորների մասսան կարող եր միայն ժամանակավորապես թվով պակասել, բայց վոչ մի կերպ չեր կարող չքանալ: Յեվ այն ժամանակ գյուղական վարձու բանվորների ինքնուրույն շահերը կմնային ինքնուրույն շահեր:

Հողը գյուղացիների ձեռքն անցնելը ամենևին չեր վոչնչացնի Ռուսաստանում արտադրության կապիտալիստական յեղանակի տիրապետությունը, այն, ընդհակառակը, ավելի լայն բազա կտար այդ տիրապետության զարգացման համար, այդ զարգացման տիպն ինչ-վոր իտալականից այն կմոտեցներ ամերիկյան տիպի: Գյուղացիների միջև յեղած գույքային տարբերությունները, վորոնք արդեն այժմ հսկայական են և համեմատաբար քիչ են նկատելի, բացառապես ինքնակալական-ճորտատիրական կարգի ընդհանուր ճնշվածության հետևանքով, ամենևին չեյին դադարի գոյություն ունենալուց: Ներքին շուկայի մեծացումը, փոխանակության և ապրանքային տնտեսության նոր մասշտաբով զարգացումը, արդյունաբերության և քաղաքների արագ աճումը,—գյուղացիների դրության լուրջ բարելավման այս բոլոր անխուսափելի հետևանքներն անխուսափելիորեն կուժեղացնեյին գույքային տարբերությունները: Մեզ մոտ վորքան ավելի յեն տարածված վերոհիշյալի նկատմամբ յեղած պատրանքները, այնքան ավելի վճռականորեն պետք է դրանց դեմ պայքարի սոցիալ-դեմոկրատիան, յեթե նա իրոք ուզում է ներկայացնել բանվորական շարժման շահերն ամբողջովին, և վոչ թե նրա միայն մեկ ստադիայում *:

Մինչև վոր լիակատար սոցիալիստական հեղաշրջում չկատարվի, մինչ այն ժամանակ ագրարային ձևափոխությունների վոչ մի ամենառադիկալ և ամենահեղափոխական միջոցներ չեն վերացնի գյուղատնտեսական վարձու բանվորների դասակարգը: Բոլոր մարդկանց մանր բուրժուա դարձնելու յերազը ռեակցիոն դոնկիխոտություն է: Յեվ ահա թե ինչու մենք պետք է այժմ արդեն աշխատենք գյուղական վարձու բանվորների դասակարգային ինքնագիտակցությունը զարգացնելու վրա, նրանց ինքնուրույն դասակարգային կազմակերպության վրա: Քաղաքային գործադուլային ալիքը կարող է և պետք է փոխադրվի գյուղ վոչ միայն գյուղացիական ապստամբությունների ձևով, այլև իսկական բանվորական գործադուլների ձևով,—առանձնապես խոտհնձի և բերքահավաքի ժամանակ: Մեր ծրագրի բանվորական բաժնի պահանջները, վոր շատ դեպքերում ներկայացնում են քաղաքային բանվորներն իրենց տերերին, պետք է ներկայացնեն նույնպես գյուղական բանվորները՝ կենցաղային պայմանների տարբերության համապատասխան փոփոխություններով: Պետք է ոգտագործել այն, վոր Ռուսաստանում դեռևս չկա վոչ մի հատուկ որենք, վոր նվաստացնի գյուղական բանվորի դրությունը ի տարբերություն քաղաքային բանվորից (յեթե չհաշվենք աշխատանքից ինքնակամ հեռանալու որենքը): Պետք է հոգ տանել, վոր պրոլետարական վոգևորության ալիքը հատուկ պրոլետարական տրամադրություն և պայքարի պրոլետարական մեթոդներ սերմանի բատրակների և որամշակների շրջանում:

Գյուղական բնակչության մանր-բուրժուական խավը, բացի իսկական և նեղ իմաստով գյուղացիությունը, չի կարող հեղափոխական չլինել պատմական վորոշ ժամանակաշրջաններում: Նրա այժմյան հեղափոխականությունն անխուսափելիորեն բղխում է «հին կարգի» բոլոր պայմաններից, և մենք պետք է ուժգնորեն պաշտպանենք և զարգացնենք այդ հեղափոխականությունը:

* Համեմատիր Մարքսի՝ ստորև զետեղված հոդվածը 1846 թվականին: (Տե՛ս ներկա ժողովածուն, եջ 21—28: Խմբ.):

Բայց նույնպես անխուսափելիորեն նոր, ազատ կապիտալիստական Ռուսաստանի կյանքի պայմաններից կրկնի գյուղում մանր բուրժուաների մի մասի անցումը «կարգ ու կանոնի» կողմը,—և գյուղացիներն այժմ վորքան շատ հող խլեն կալվածատերերից, այնքան ավելի շուտ կկատարվի այդ անցումը: Բոլոր և ամեն տեսակի պայմաններում գյուղում իսկական հեղափոխական դասակարգ, մինչև վերջը հեղափոխական դասակարգ կարող է լինել միայն գյուղական պրոլետարիատը: Խղճուկ, ծեծկված մուժիկին ազատ, յեռանդուն յեվրոպական ֆերմեր դարձնելը հսկայական դեմոկրատական նվաճում է, բայց մենք, սոցիալիստներս, վոչ մի րոպե չենք մոռանա, վոր այդ նվաճումը մարդկության ամեն տեսակ ճնշումից լիովին ազատագրելու գործին ռեալ ոգուտ կբերի միայն այն ժամանակ և միայն այն չափով, ինչ չափով ֆերմերի դեմ կկանգնի գիտակից, ազատ, կազմակերպված գյուղական պրոլետարը:

Պարոնայք լիբերալ կալվածատերերը լռության են մատնում գյուղական բանվորին: Ապագա ֆերմերի վերաբերմամբ նրանք իրենց բոլոր ջանքերն ուղղում են այն բանին, վոր վորքան կարելի յե ավելի շուտ և իրենց գրպանի համար ամենաքիչ վնասով (Թերևս ավելի ճիշտ կլինի ասել՝ իրենց գրպանի համար ըստ կարելույն ոգտով) նրան դարձնեն իրենց դաշնակիցը, իսկ տնտեսատեր-սեփականատիրոջը՝ կարգերի հենարան: Ի՞նչ խղճուկ վողորմություններով են նրանք յերազում իրենց ոձիքն ազատել: Միակ հեղափոխական միջոցը, ուղղակի հողերի կոնֆիսկացիան, նրանք սահմանափակում են այդ հողերի մեկ մասով, վախենալով կոնֆիսկացիան կոնֆիսկացիա անվանել և լռության մատնելով յեկեղեցապատկան հողերը: Սակավահող գյուղացիներին հողի ավելացում խոստանալով նրանք հատկապես կառչում են հետգնմանը, վոչ մի բառով չհիշատակելով, թե ով պետք է վճարի այդ հետ գնվող հողերի համար: Նրանք, ակներևորեն, կարծում են, վոր ինքնըստինքյան հասկանալի յե, թե վճարելու յե մուժիկը, 1861 թ. հռչակավոր հետգնման նման: Կալվածատերերը յեռապատիկ թանգ կվաճառեն իրենց ամենավատ հողերը,—ահա թե ինչ է խոստանում մուժիկների հողերի ավելացումը: Վարկի, կոոպերացիայի, հողամասերը փոխանակելու և նրանց առաջարկած այլ բոլոր միջոցներն ամբողջովին մտնում են շահերի նեղ սեփականատիրական շրջանի մեջ: Վարձակալման,—գյուղացիական տնտեսության ամենացավագին հարցերից մեկի,—վերաբերյալ նրանք սահմանափակվում են

«կարգավորման» ամենաանորոշ լոզունգով: Այստեղ կհարմարի այն ամենը, ինչ վոր ուզես, ընդհուպ մինչև նորմավորելու անվան տակ վարձակալման գները բարձրացնելը,—մենք արդեն վերը նշեցինք, թե «կարգ ու կանոն» ասելով ինչ եյին հասկանում և ինչ են հասկանում կառավարող դասակարգերի ներկայացուցիչները:

Բայց լիբերալ ծրագրի ամենակարևոր և ամենավտանգավոր քաղաքական կետը մենք համարում ենք «հասարակական պետական միջնորդ հանձնաժողովների» մասին յեղած կետը: Ագրարային ձևափոխումը կիրառելու յեղանակի հարցը հսկայական նշանակություն ունի, վորովհետև կոնկրետ և ռեալ կերպով կիրառելու յեղանակից է հենց կախված ձևափոխման առավել կամ պակաս լուրջ բնույթը: Նարոդնիկները մեզ սովորեցրին այս հարցի (ինչպես և շատ ուրիշ հարցերի) առթիվ ել գլխավոր ուշադրությունը դարձնել տնտեսական շահին, անտեսելով կամ թեթևագնահատելով գործի քաղաքական կողմը: Այս տեսակետը, վոր բնական է մանր բուրժուայի համար, հասկանալի յե «տնտեսատիրոջ» համար, բացարձակապես անթույլատրելի յե սոցիալ-դեմոկրատի համար: Սոցիալ-դեմոկրատի համար միևնույն է տնտեսատերերի և սեփականատերերի դասակարգերի կամ կարգերի մեջ յեղած տեղաշարժը, յեթե այդ տեղաշարժը չի ուղեկցվում պրոլետարիատի դասակարգային պայքարը հեշտացնող քաղաքական շահումով: Մանր-բուրժուական յերազկոտության տեսակետից կարևոր են «հավասարար ոգտագործման» և այլն մասին յեղած ամեն տեսակի պրոժեկտները: Սոցիալ-դեմոկրատի տեսակետից բոլոր այսպիսի պրոժեկտները դատարկ և վնասակար դատարկամտություն են, վորը հասարակական գիտակցությունը շեղում է ռեալ դեմոկրատական նվաճումների ռեալ պայմաններից: Սոցիալ-դեմոկրատները յերբեք չեն մոռանա, վոր կառավարող դասակարգերը միշտ և ամենուրեք ջանում են աշխատավորներին անջատել ու անբարոյացնել տնտեսական փշրանքներով: Հողային ձևափոխությունների բնագավառում այդ քաղաքականությունը նրանց համար առանձնապես հեշտ է և առանձնապես հմտորեն են կիրառում:

Մենք պետք է ե՛լ ավելի մեծ վորոշակիությամբ ու վճռականությամբ պնդենք մեր ագրարային ծրագրի արմատական պահանջի վրա՝ հիմնել հեղափոխական գյուղացիական կոմիտեներ, վորոնք իրենք կատարեն իսկապես արմատական (և վոչ թե կալվածատիրական ձևով «արմատական») ագրարային ձևափոխու-

թյուններ։ Առանց դրան ամեն մի ագրարային ռեֆորմ անխուսափելիորեն կվերածվի նոր խաբեության, մի նոր, 61 թվականի հռչակավոր «ռեֆորմի» նման, թակարդի։ Իսկ չէ՞ որ «հասարակական(?)-պետական միջնորդ հանձնաժողովները» թակարդի ուղղակի նախապատրաստությո՛ւնն են։ «Հասարակություն» ասելով մենք հասկանում ենք կալվածատերեր, «պետություն» ասելով՝ չինովնիկներ։ «Հասարակական-պետական»՝ նշանակում է կալվածատիրական-չինովնիկական և ուրիշ ոչինչ։

Ահա թե ինչ կետի վրա մենք պետք է անհապաղ դարձնենք մեր ագիտացիայի ծանրության կենտրոնը գյուղում։ Լսո՞ւմ եք արդյոք, գյուղացինե՛ր։ Ձեզ մի անգամ էլ են ուզում բարերարություն անել չինովնիկության ուղիով, ձեր կյանքը «կանոնավորել» կալվածատիրական միջամտությամբ, ձեզ համար հողեր «հետգնել» հին հետգնման անիծյալ օրինակով։ Կալվածատերերն այնքան բարի յեն, այնքա՛ն բարի յեն. տեսնելով, որ սպառնում են իրենցից հողը ձրի վերցնել, նրանք վեհանձնաբար համաձայնվում են վաճառել դրանք,—հասկանալի յե, ձեռնտու գնով... Դուք համաձա՞յն եք արդյոք այդպիսի կալվածատիրական ու չինովնիկական միջամտությանը։ Թե՞ դուք ուզում եք ինքներդ միջամտել և ինքներդ ձեզ ազատ կյանք կառուցեք։ Այն ժամանակ միացե՛ք քաղաքային պրոլետարիատի հետ, պայքարեցեք հօգուտ հանրապետության, դիմեցեք ապստամբության, որը ձեզ կբերի հեղափոխական կառավարություն և հեղափոխական գյուղացիական կոմիտեներ։

«Вперед» № 15, 1905 թ. ապրիլի 20 (7)։

ՄԱՐՔՍՆ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ «ՉՈՐՆԻ ՊԵՐԵԴԵԼԻ» ՄԱՍԻՆ

«Вперед»-ի[3] № 12-ում հրատարակված է Մարքսի յելույթն ագրարային հարցի մասին ընդդեմ Կրիգեյի։ Դա յեղել է ո՛չ թե 1848 թվականին, ինչպես սխալմամբ ասված է ընկ. —Ն-ի հոդվածում, այլ 1846 թվականին։ Մարքսի աշխատակիցը, Հերման Կրիգեն, որ այն ժամանակ դեռևս շատ ջահել մարդ էր, 1845 թ. գաղթեց Ամերիկա և այնտեղ հիմնեց «Volkstribun» («Ժողովրդական Տրիբուն») հանդեսը՝ կոմունիզմի պրոպագանդայի համար։ Սակայն այդ պրոպագանդան նա այնպես տարավ, որ Մարքսն ստիպված էր գերմանական կոմունիստների անունից վճռականորեն ծառանալ ընդդեմ այն վարկաբեկման, որին Հերման Կրիգեն էր յենթարկում կոմունիստական կուսակցությունը։ Կրիգեյի ուղղության քննադատությունը, որ տպագրված է 1846 թվականին «Westfalisches Dampfboot»-ում * և արտատպված Մարքսի յերկերի Մերինգյան հրատարակության յերկրորդ հատորում, հսկայական հետաքրքրություն է ներկայացնում արդի ռուս սոցիալ-դեմոկրատների համար։

Բանն այն է, որ այդ ժամանակ ագրարային հարցը նույնպես առաջ էր քաշվում առաջին տեղերից մեկն ամերիկական սոցիալական շարժման բուն ընթացքով, ինչպես այժմ Ռուսաստանում, ընդորում խոսքը ո՛չ թե զարգացած կապիտալիստական հասարակության մասին էր, այլ՝ կապիտալիզմի իսկական զարգացման համար սկզբնական, հիմնական պայմաններ ստեղծելու մասին։ Այս վերջին հանգամանքն առանձնապես կարևոր է զուգահեռ անցկացնելու համար Մարքսի և ռուս սոցիալ-դեմոկրատների միջև, նկատի առնելով առաջինի վերաբերմունքը դեպի «չորնի պերեդելի» ամերիկական գաղափարները և վերջինների վերաբերմունքը դեպի արդի գյուղացիական շարժումը։

Կրիգեն իր հանդեսում ոչ մի նյութ չէր տալիս ամերիկա-

* — «Վեստֆալյան Շոգենավ»։ Խմբ.։

կան կարգի սոցիալական կոնկրետ առանձնահատկությունների ուսումնասիրելու համար, այն ագրարային ռեֆորմատորների այն ժամանակվա շարժման իսկական բնույթը պարզելու համար, վորոնք ռենտայի վոչնչացման եյին ձգտում: Դրա փոխարեն Կրիգեն (ճիշտ ինչպես մեր «սոցիալիստ-հեղափոխականները») ագրարային հեղափոխության հարցը պաճուճում եր ճոռոմ, մեծաղղորդ ֆրազներով: «Յուրաքանչյուր չքավոր,—գրում եր Կրիգեն,—իսկույն ևեթ դառնում ե մարդկային հասարակության օգտակար անդամ, հենց վոր նրա համար կապահովեն արտադրողական աշխատանքի հնարավորություն: Այդպիսի հնարավորությունը նրա համար ապահովված կլինի ընդմիշտ, յեթե հասարակությունը նրան տա մի կտոր հող, վորի վրա նա կկարողանա կերակրել իրեն և իր ընտանիքը: Յեթե այդ հսկայական հողային տարածությունը (այն ե՝ 1400 միլ. ակր հյուսիս-ամերիկյան պետական հողերը) հանվի առևտրական շրջանառությունից և սահմանափակ քանակներով ապահովվի աշխատանքի համար*, այն ժամանակ Ամերիկայում մի հարվածով վերջ կդրվի աղքատությանը»...

Մարքսը սրա դեմ առարկում ե. «Կարելի յեր սպասել ըմբռնումն այն բանի, վոր օրենսդիրների իշխանությունից դուրս ե Կրիգեյի համար ցանկալի նահապետական կարգի զարգացումը դեպի ինդուստրիալ կարգը դեկրետներով կանգնեցնելը և արևելյան ափի արդյունաբերական ու առևտրական շտատները դեպի նահապետական բարբարոսությունը հետ մղելը»:

Այսպիսով, մեր առջև ամերիկյան սև վերաբաժանման իսկական պլան ե—հողի զանգվածի հանումն առևտրական շրջանառությունից, հողի իրավունքը, հողատիրության կամ հողօգտագործման սահմանների սահմանափակումը: Յեվ Մարքսն սկզբից ևեթ հանդես ե գալիս ուտոպիզմի սուր քննադատությամբ, նշում ե, վոր նահապետական կարգն անխուսափելիորեն փոխակերպվում ե ինդուստրիալի, այսինքն՝ յեթե արդի լեզվով խոսենք, անխուսափելի յե կապիտալիզմի զարգացումը: Սակայն մեծ սխալ կլիներ կարծել, թե շարժման մասնակիցների ուտոպիական յերազները հարկադրում են Մարքսին բացասաբար վերաբերվել

* Տարբերեցե՛ք, թե ինչ եր գրում «Революционная Россия»-ն [4], 8-րդ №-ից սկսած, հողը կապիտալից աշխատանքին անցնելու մասին, պետական հողերի նշանակության մասին Ռուսաստանում, հավասարար հողօգտագործման մասին, հողն առևտրական շրջանառության մեջ գրավելու բուրժուական գաղափարի մասին և այլն: Ի՜սկը Կրիգեյի պես:

առհասարակ բուն շարժմանը: Ամենևին: Դեռևս այն ժամանակ, իր գրական ասպարեզի սկզբումն իսկ, Մարքսը գիտեր զատել շարժման ռեալ առաջադիմական բովանդակությունը նրա գաղափարախոսական պաճուճազեղ զգեստներից: Իր քննադատության յերկրորդ բաժնում, վոր վերնագրված ե ««Ժողովրդական Տրիբունի» եկոնոմիան (այսինքն՝ քաղաքատնտեսությունը) ու այդ թերթի վերաբերմունքը յերիտասարդ Ամերիկային», Մարքսը գրում եր.

«Մենք միանգամայն ընդունում ենք ամերիկյան նացիոնալ-ռեֆորմիստների շարժումը նրա պատմական օրինաչափության մեջ: Մենք գիտենք, վոր այդ շարժումը ձգտում ե հասնել այնպիսի արդյունքի, վորը, ճիշտ ե, տվյալ րոպեյին կխթաներ արդի բուրժուական հասարակության ինդուստրիալիզմի զարգացումը, բայց վորը, պրոլետարական շարժման պտուղը լինելով, անխուսափելիորեն վորպես հարձակում առհասարակ հողային սեփականության վրա և մանավանդ ներկայումս Ամերիկայում գոյություն ունեցող պայմաններում, շնորհիվ իր սեփական հետևանքների, ավելի առաջ, դեպի կոմունիզմ պիտի տանի: Կրիգեն, վոր գերմանական կոմունիստների հետ միասին Նյու-Յորքում հարել ե հակառենտական շարժմանը (Anti-Rent-Bewegung), այս հասարակ փաստը պարուրում ե ճոռոմ ֆրազներով, չմտնելով շարժման բուն բովանդակության քննարկման մեջ: Նա սրանով ապացուցում ե, վոր իր համար բոլորովին պարզ չե յերիտասարդ Ամերիկայի և ամերիկյան հասարակական պայմանների միջև գոյություն ունեցող կապը: Մի օրինակ ևս բերենք նրա ճոռոմ ֆրազների, վորոնք վերաբերում են հողատիրությունն ամերիկյան մասշտաբով պարցելների վերածելու կալվածատիրական պլանին:

«Ժողովրդական Տրիբունի» № 10-ում, «Ի՞նչ ենք կամենում մենք» հոդվածում, ասվում ե. «Ամերիկյան նացիոնալ-ռեֆորմիստները հողն անվանում են բոլոր մարդկանց ընդհանուր սեփականություն... և պահանջում են, վոր ժողովրդական օրենսդրությունն ընդունի այնպիսի միջոցառումներ, վոր դեռևս հափշտակիչ սպեկուլյանտների ձեռքը չընկած 1400 միլ. ակր հողը պահպանվի վորպես ամբողջ մարդկության անօտարելի ընդհանուր սեփականություն»: Յեվ ահա ամբողջ մարդկության համար այդ «անօտարելի և ընդհանուր սեփականությունը» պահպանելու համար, նա ընդունում ե նացիոնալ-ռեֆորմիստների պլանը. «Յուրաքանչյուր գյուղացու, ինչ յերկրից ել լինի նա ծագումով, հատկաց-

նել Նրա սնման համար 160 ակր ամերիկյան հող»: 14-րդ համարում «Պատասխան Կոնզին» (Konze) հոդվածում այդ պլանն այսպես է շարադրվում. «Այդ դեռևս ձեռք չտված ժողովրդական սեփականությունից վոչ վոք չպետք է 160 ակրից ավելի հող ստանա ի տիրություն, այդ քանակն էլ կտրվի այն պայմանով միայն, վոր նա ինքը մշակի այդ հողը»: Այսպես, ուրեմն, հողն իբրև «ընդհանուր անօտարելի սեփականություն» և այն էլ «ամբողջ մարդկության» սեփականություն պահպանելու նպատակով հարկավոր է անհապաղ այդ հողը բաժանելուց սկսել: Կրիգեն յերևակայում է, թե ինքն ուժ կունենա վորևէ օրենքով արգելելու այդ վերաբաժանման անհրաժեշտ հետևանքները՝ համակենտրոնացումը, արդյունաբերական առաջադիմությունը և այլն: 160 ակր հողը նա պատկերացնում է իբրև ինչ-վոր ինքն իրեն հավասար բան, կարծես թե այդպիսի հողային տարածության արժեքը տարբեր չէ, նայած նրա վորակին: «Գյուղացիները» միմյանց միջև և ուրիշ մարդկանց հետ կփոխանակեն յեթե վոչ բուն հողը, ապա նրա պրոդուկտները: Իսկ քանի վոր բանը դրան կհասնի, ապա շուտով դուրս կգա, վոր մեկ «գյուղացին» առանց կապիտալի էլ՝ շնորհիվ իր աշխատանքի ու իր 160 ակրի բնական ավելի մեծ պտղաբերության՝ մյուսին կհասցնի իր բատրակի դրության: Իսկ հետո, մի՞թե մեկ չէ՝ արդյոք հո՞ղը, թե հողի «պրոդուկտները «կընկնեն հափշտակիչ-սպեկուլյանտների ձեռքը»: Լուրջ քննարկենք այս նվերը, վոր Կրիգեն տալիս է մարդկությանը: 1400 միլիոն ակրը պետք է պահպանվի «իբրև ամբողջ մարդկության անօտարելի ընդհանուր սեփականություն»: Ընդմին յուրաքանչյուր գյուղացու պետք է հասնի 160-ական ակր: Հետևապես, մենք կարող ենք հաշվել, թե վորքան մեծ է Կրիգեյի «մարդկությունը»՝ ուղիղ 8¾ միլիոն «գյուղացի», կամ ընտանիքին 5 շունչ հաշվելով՝ 43¾ միլիոն մարդ: Մենք կարող ենք նմանապես հաշվել, թե վորքան յերկար կտևեն այն «հավիտենական ժամանակները», վորոնց ընթացքում պետք է «ամբողջ հողին տիրանա պրոլետարիատը, իբրև մարդկության ներկայացուցիչ»—գոնե Միացյալ Նահանգներում: Յեթե Միացյալ Նահանգների բնակչությունը նույնպես արագ կրկնապատկվի, ինչպես մինչև օրս, այսինքն՝ յուրաքանչյուր 25 տարում, այն ժամանակ այդ «հավիտենական ժամանակները» կտևեն վոչ լրիվ 40 տարի: 40 տարվա մեջ կբռնվի այդ 1400 միլիոն ակրը և հետագա սերունդներին տիրանալու վոչինչ էլ չի մնա: Բայց վորովհետև հողի ձրի բաժանումը չափազանց կուժեղացնի ներգաղ-

թը, ապա Կրիգեյի «հավիտենական ժամանակները» կարող են վերջանալ ե՛լ ավելի վաղ, մանավանդ յեթե նկատի ունենանք, վոր հողի քանակը 44 միլ. մարդուն չի հերիքի նույնիսկ յեվրոպական արդի պաուպերիզմի համար, վորպես նրա հեռատար խուղակը: Յեվրոպայում յուրաքանչյուր տասներորդ մարդը պաուպեր է. միայն բրիտանական կղզիներում հաշվվում է 7 միլիոն պաուպեր: Նույնպիսի քաղաքատնտեսական պարզամտություն հանդիպում ենք 13-րդ համարում «Կանանց» հոդվածում, վորտեղ Կրիգեն ասում է, վոր յեթե Նյու-Յորք քաղաքը տար իր Լոնգ-Այլենդի 52.000 ակր հողը, ապա դա բավական կլիներ, վորպեսզի «մեկեն» ընդմիշտ ազատվեր Նյու-Յորքն ամեն տեսակ պաուպերիզմից, թշվառությունից ու հանցագործություններից:

«Յեթե Կրիգեն հողի ազատագրմանը ձգտող շարժումը դիտեր վորպես պրոլետարական շարժման վորոշ պայմաններում անհրաժեշտ առաջին ձև, յեթե նա այդ շարժումը գնահատեր վորպես այնպիսին, վորը դա ստեղծած դասակարգի կենսական վիճակի մղումով պետք է անհրաժեշտաբար ավելի զարգանա, փոխակերպվելով կոմունիստական շարժման, յեթե նա ցույց տար, թե ինչ կերպ պետք է կոմունիստական ձգտումներն Ամերիկայում սկզբնապես հանդես գային այդ ագրարային ձևով, վոր առաջին հայացքից հակասում է ամեն տեսակ կոմունիզմին,—այն ժամանակ դրա դեմ վոչինչ առարկել չէր կարելի: Իսկ Կրիգեն վորոշ իրական մարդկանց շարժման այդ ձևը, վոր ունի սոսկ ստորադիր նշանակություն, հայտարարում է առհասարակ մարդկության գործ: Կրիգեն այդ գործն առաջադրում է վորպես առհասարակ ամեն մի շարժման վերջին, բարձրագույն նպատակ, այսպիսով շարժման վորոշ նպատակները դարձնելով զառանցույն ձոռոմ անհեթեթություն: 10-րդ համարի նույն հոդվածում նա այսպիսի հաղթական յերգեր է յերգում. «Յեվ ահա, այս կերպ կկատարվեյին վերջապես յեվրոպացիների վաղեմի յերազանքները, նրանց համար ովկիանոսի այս կողմում կպատրաստվեր հող, վոր նրանք միայն պետք է վերցնեյին ու արդասավորեյին իրենց ձեռքերի աշխատանքով, վորպեսզի հպարտ հայտարարություն նետեն աշխարհի բոլոր բռնակալների յերեսին՝ սա իմ խրճիթն է, վոր դուք չեք շինել, սա իմ ոջախն է, վոր ձեր սրտերը լցնում է նախանձով»:

«Կրիգեն կարող էր ավելացնել. սա գոմաղբի իմ կույտն է, վոր արտադրել ենք յես, իմ կինն ու յերեխաները, իմ բատրակն ու իմ անասունները: Յեվ այդ ի՞նչ յեվրոպացիներ կտեսնեյին

այստեղ իրենց յերազանքների իրագործումը: Միայն ոչ կոմունիստական բանվորնե՛րը: Թերևս այն սնանկացած խանութպաններն ու համքար վարպետները կամ քայքայված գյուղացիները, որոնք Ամերիկայում մանր բուրժուաներ և գյուղացիներ դառնալու յերջանկությա՛նն են ձգտում նորից: Յեվ ինչի՞ մեջ ե կայանում այդ 1400 միլիոն ակրի օգնությամբ իրագործվող «յերազանքը»: Ոչ այլ ուրիշ բանում, քան նրանում, որ բոլոր մարդիկ դառնան մասնավոր սեփականատերեր: Այդպիսի յերազանքը նույնքան անիրագործելի յե և նույնքան կոմունիստական, որքան բոլոր մարդկանց կայսրեր, արքաներ և պապեր դարձնելու յերազանքը»:

Մարքսի քննադատությունը լի յե թույնով ու սարկազմով: Նա Կրիգեյին խարազանում ե նրա հայացքների հենց այն գծերի համար, որ մենք այժմ տեսնում ենք մեր «սոցիալիստ-հեղափոխականների» մոտ—ֆրազի տիրապետություն, մանր-բուրժուական ուտոպիաներ, որ առաջադրվում են իբրև հեղափոխական բարձրագույն ուտոպիզմ, արդի տնտեսակարգի և նրա զարգացման ռեալ հիմքերի անըմբռնումն: Մարքսը, որ այն ժամանակ իրենից միայն ապագա տնտեսագետ եր ներկայացնում, յերևելի խորաթափանցությամբ նշում ե ապրանքային տնտեսության փոխանակային դերը: Յեթե ոչ հողը,—ասում ե նա,—ապա հողի պրոդուկտները կփոխանակեն գյուղացիները միմյանց հետ, իսկ դրանով արդեն ասված ե ամե՛ն ինչ: Այս ամբողջ հարցադրումը շատ և շատ կողմերով կիրառելի յե ռուսական գյուղացիական շարժման ու նրա մանր-բուրժուական «սոցիալիստական» գաղափարախոսների նկատմամբ:

Բայց Մարքսը միևնույն ժամանակ հեռու յե այդ մանր-բուրժուական շարժման հասարակ «բացասումից», նրա դոկտրինյորական անգիտացումից, շատ տիրացուներին հատուկ վախից, որոնք չեն ուզում իրենց ձեռքերը կեղտոտել հեղափոխական մանր-բուրժուական դեմոկրատիային կպչելով: Անխնա ծաղրի յենթարկելով շարժման գաղափարախոսական պաճուճման անհեթեթությունը՝ Մարքսն աշխատում ե մատերիալիստորեն-զգաստ որոշել նրա իրական պատմական բովանդակությունը, նրա անխուսափելի հետևանքները, որոնք պետք ե վրա հասնեն օբյեկտիվ պայմանների մղումով՝ այս կամ այն անձերի կամքից ու գիտակցությունից, յերազանքներից ու թեորիաներից անկախ: Ուստի Մարքսը չի հանդիմանում, այլ ամբողջովին հավանություն ե տալիս, որ կոմունիստներն աջակցում են այդ շարժ-

ման: Կանգնած լինելով դիալեկտիկական տեսակետի վրա, այսինքն՝ շարժումը բազմակողմանի քննարկելով, ուշադրության առնելով և՛ անցյալը, և՛ ապագան, Մարքսն ընդգծում ե հողային սեփականության դեմ ուղղված հարձակման հեղափոխական կողմը, Մարքսը մանր-բուրժուական շարժումն ընդունում ե որպես պրոլետարական, կոմունիստական շարժման յուրահատուկ նախասկզբնական մի ձև: Այն բանին, ինչի որ յերազում եք հասնել այդ շարժմամբ,—ասում ե Մարքսը Կրիգեյի հասցեյին,—դուք չեք հասնի,—յեղբայրության փոխարեն կստացվի մանր-բուրժուական մեկուսացվածություն, գյուղացիական հողաբաժինների անօտարելիության փոխարեն՝ հողի գրավումն առևտրական շրջանառության մեջ, հափշտակիչ-սպեկուլյանտների դեմ ուղղված հարվածի փոխարեն՝ բազայի ընդլայնում կապիտալիստական զարգացման համար: Բայց այն կապիտալիստական չարիքը, որից դուք իզուր եք կարծում, թե խուսափել եք, պատմականորեն բարիք ե հանդիսանում, որովհետև նա սոսկալի կարագացնի հասարակական զարգացումն ու բազմապատիկ կմոտեցնի կոմունիստական շարժման նոր, բարձրագույն ձևերը: Հողային սեփականությանը հասցրած հարվածը կհեշտացնի հետագա անխուսափելի հարվածներն առհասարակ սեփականության դեմ. ստորին դասակարգի հեղափոխական յելույթը մի բարեփոխությամբ հանդերձ, որ ժամանակավորապես նեղլիկ բարորություն ե տալիս ամենևին ել ոչ ամենքին, կհեշտացնի ամենաստորին դասակարգի հետագա հեղափոխական յելույթը մի բարեփոխությամբ, որն իրոք կապահովի մարդկային լիակատար յերջանկությունը բոլոր աշխատավորների համար:

Մեզ, ռուս սոցիալ-դեմոկրատներիս համար Մարքսի հարցադրումն ընդդեմ Կրիգեյի պետք ե տիպար ծառայի: Ռուսաստանում արդի գյուղացիական շարժման բուրժուական բնույթը կասկածի յենթակա չե. մենք պետք ե մեր բոլոր ուժերով պարզաբանենք այդ և անխնա, անհաշտ պայքարենք այս առթիվ ամեն տեսակի «սոցիալիստ-հեղափոխականների» կամ պրիմիտիվ սոցիալիստների ամեն տեսակ պատրանքների դեմ: Այն հատուկ կազմակերպությունը պրոլետարիատի ինքնուրույն կուսակցության, որը դեմոկրատական բոլոր հեղաշրջումների միջով ձգտում ե սոցիալիստական լիակատար հեղափոխության, պետք ե լինի մեր մշտական, ոչ մի րոպե աչքաթող չարվող նպատակը: Բայց թե այդ պատճառով գյուղացիական շարժումից յերես դարձնելը կլիներ ամենաանհուսալի ֆիլիստերություն ու պե-

դաշնակիցը: Ո՛չ, այդ շարժման հեղափոխական-դեմոկրատական բնույթն անտարակուսելի յե, և մենք պետք ե մեր բոլոր ուժերով աջակցենք նրան, զարգացնենք, քաղաքականորեն-գիտակցական ու դասակարգայնորեն-վորոշ դարձնենք, դեպի առաջ հրենք այն, մինչև վերջը գնանք նրա հետ միասին, ձեռք ձեռքի տված, —վորովհետև մենք գնում ենք ամեն մի գյուղացիական շարժման վերջից շատ ավելի առաջ, մենք գնում ենք հասարակության դասակարգերի բուն բաժանման լիակատար վերջը: Հազիվ թե աշխարհում գտնվի ուրիշ յերկիր, վորտեղ գյուղացիությունը կրեր այնպիսի տառապանքներ, այնպիսի ճնշում ու ծանակում, ինչպես Ռուսաստանում: Վորքան ավելի անխուսափելի եր այդ ճնշումը, այնքան հզոր կլինի այժմ գյուղացիության արթնացումը, այնքան անհաղթելի կլինի նրա հեղափոխական գրոհը: Հեղափոխական գիտակից պրոլետարիատի գործը բոլոր ուժերով այդ գրոհին աջակցելն ե, վորպեսզի նա քարը քարի վրա չթողնի հին, նզովված, ճորտատիրական-ինքնակալական ստրկային Ռուսաստանում, վորպեսզի նա ստեղծի ազատ ու համարձակ մարդկանց նոր սերունդ, ստեղծի հանրապետական նոր յերկիր, վորի մեջ ազատորեն կծավալվի մեր պրոլետարական պայքարը սոցիալիզմի համար:

«Вперед» № 15, 1905 թ. ապրիլի 20 (7):

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ներկայումս Ռուսաստանի ապրած դեմոկրատական հեղափոխության մեջ գյուղացիական շարժման ունեցած հսկայական նշանակությունն արդեն շատ ու շատ անգամ պարզաբանվել ե ամբողջ սոցիալ-դեմոկրատական մամուլի կողմից: Ինչպես հայտնի յե, ՌՍԴԲԿ յերրորդ համագումարն այս հարցի վերաբերյալ մի առանձին բանաձև ե ընդունել, վորպեսզի ճշգրտորեն վորոշի ու միավորի գիտակից պրոլետարիատի ամբողջ կուսակցության գործունեյությունը գյուղացիության հենց այժմյան շարժման նկատմամբ: Չնայած վոր այս բանաձևը պատրաստված եր նախորոք (առաջին նախագիծը տպագրվել եր «Вперед»-ի № 11-ում, ս. թ. մարտի 23 (10)-ին*), չնայած վոր այն խնամքով մշակված եր կուսակցության համագումարի կողմից, վորն աշխատում եր ձևակերպել ամբողջ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի արդեն հաստատված հայացքները, չնայած սրան, Ռուսաստանում աշխատող մի շարք ընկերների շրջանում բանաձևը տարակուսանք առաջ բերեց: Սարատովի կոմիտեն այս բանաձևը միաձայն անընդունելի ճանաչեց (տես «Пролетарий»-ի № 10): Դժբախտաբար, հենց այն ժամանակ այս վերդիկտի բացատրությունն ստանալու առթիվ արտահայտած մեր ցանկությունն առայժմ անիրագործելի յե մնացել: Մենք գիտենք միայն, վոր Սարատովի կոմիտեն նույնպես անընդունելի յե ճանաչել նաև նոր-իսկրայական կոնֆերենցիայի ագրարային բանաձևը,—հետևաբար, նրան չի բավարարել այն, ինչ յերկու բանաձևի համար ել ընդհանուր ե, և վոչ թե այն, ինչով նրանք տարբերվում են մեկը մյուսից:

Այս հարցի վերաբերմամբ նոր նյութ ե հանդիսանում մեր ստացած՝ (հեկտոգրաֆված թերթիկի ձևով հրատարակված) Մոսկվայի ընկերոջ նամակը: Այս նամակը տպագրում ենք ամբողջությամբ.

* Տե՛ս ներկա ժողովածու, եջ 10: Խմբ.:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Ընկերնե՛ր. Մոսկվայի կոմիտեյի ոկրուգային կազմակերպությունն ընդհուպ մոտեցել է գյուղացիության մեջ տարվող աշխատանքին: Նման աշխատանք կազմակերպելու փորձի պակասությունը, մեր կենտրոնական գյուղի առանձին պայմանները, այլև այս հարցի նկատմամբ III համագումարի բանաձևերի դիրեկտիվների անբավականաչափ պարզությունն ու, ինչպես պարբերական, այնպես էլ ընդհանուր մամուլում, գյուղացիության մեջ տարվող աշխատանքի վերաբերյալ գրականության համարյա կատարյալ բացակայությունը մեզ ստիպում են դիմել Կենտկոմին, խնդրելով մեզ ուղարկել ինչպես սկզբունքային, այնպես էլ գործնական բնույթ կրող մանրամասն դիրեկտիվներ, իսկ ձեզ, աշխատակից ընկերներիդ, խնդրում ենք մեզ ծանոթացնել այն գործնական տվյալների հետ, վոր ունի ձեր փորձը:

Անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել այն տարակուսանքների հետ, վորոնք ծագել են մեզանում «գյուղացիական շարժման հանդեպ ունենալիք վերաբերմունքի մասին» III համագումարի հանած բանաձևն ընթեռնելիս, և այն կազմակերպական պլանի հետ, վորը մենք արդեն սկսում ենք գործադրել մեզ մոտ գյուղում:

«§ ա) Պրոպագանդա մղել ժողովրդի լայն խավերում, վոր սոցիալ-դեմոկրատիան իրեն խնդիր է դնում ամենայեռանդուն կերպով պաշտպանել գյուղացիության այն բոլոր հեղափոխական միջոցառումները, վորոնք ընդունակ են նրա դրությունը բարելավելու, ընդհուպ մինչև կալվածատիրական, պետական, յեկեղեցապատկան, վանքապատկան ու արքունի հողերի բռնագրավումը» (Ռ. Ս.-Դ. Բ. Կ. III համագումարի բանաձևից):

Ամենից առաջ այս պարագրաֆում պարզ չէ, թե կուսակցական կազմակերպությունները պրոպագանդան ինչ յեղանակով են մղելու և պետք է մղեն: Պրոպագանդան ամենից առաջ պահանջում է մի կազմակերպություն, վորը բոլորովին մոտ կանգնած լինի նրանց, ում կամենում են պրոպագանդա մղել: Արդյոք կլինե՞ն նման կազմակերպություն գյուղական պրոլետարիատից կազմըված կոմիտեները, թե՞ հնարավոր են նաև ուրիշ կազմակերպական ուղիներ, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր պրոպագանդայի համար—հարցը մնում է բաց:

Նույնը կարելի յե ասել նաև յեռանդուն պաշտպանություն խոստանալու մասին: Պաշտպանել, և այն էլ յեռանդուն կերպով, նույնպես հնարավոր է միմիայն տեղերում կազմակերպություն ունենալու դեպքում: «Յեռանդուն պաշտպանության» հարցն առհասարակ մեզ չափազանց աղոտ է թվում: Սոցիալ-դեմոկրատիան կարո՞ղ է արդյոք պաշտպանել կալվածատիրական այն հողերի եքսպրոպրիացիան, վորոնք ամենաինտենսիվ յեղանակով են մշակման յենթարկվում, գործադրելով մեքենաներ, բարձր կուլտուրաներ և այլն: Նման հողերի անցումը մանր-բուրժուական սեփականատերերի ձեռքը, ինչքան էլ կարևոր լիներ նրանց դրությունը բարվոքելը, հանդիսանում է մի քայլ դեպի հետ՝ տվյալ տնտեսության կապիտալիստական զարգացման իմաստով: Յեվ մենք, մնալով սոցիալ-դեմոկրատներ, «պաշտպանության» մասին յեղած այս կետում, մեր կարծիքով, պետք է մի վերապահում անեյինք. «յեթե այս հողերի եքսպրոպրիացիան գյուղացիական (մանր-բուրժուական) սեփականության համար՝

կլինի տվյալ տնտեսության զարգացման ամենաբարձր ձևը տվյալ հողերի վրա»:

Այնուհետև.

«§ դ) Ձգտել գյուղական պրոլետարիատին ինքնուրույնորեն կազմակերպելու, սոցիալ-դեմոկրատական կուսակցության դրոշակի տակ նրան քաղաքայինի հետ ձուլելու ու նրա ներկայացուցիչներին գյուղացիական կոմիտեների մեջ անցկացնելու»:

Կասկածներ ծագում են այս պարագրաֆի վերջին մասի նկատմամբ: Բանն այն է, վոր «Գյուղացիական միության» նման բուրժուական-դեմոկրատական և սոց.-հեղափոխականների նման ռեակցիոն-ուտոպիական կազմակերպություններն իրենց դրոշակի տակ կազմակերպում են գյուղացիության ինչպես բուրժուական, այնպես էլ պրոլետարական տարրերին: Գյուղական պրոլետարիատի կազմակերպություններից մեր ներկայացուցիչներին մտցնելով «գյուղացիական» այդպիսի կոմիտեների մեջ, մենք ինքներս կհակասենք մեզ, bloc*-ի մասին ունեցած մեր հայացքներին և այլն:*

Մեզ թվում է, թե այստեղ էլ անհրաժեշտ են ուղղումներ և այն էլ շատ լուրջ ուղղումներ:

Ահա մի քանի ընդհանուր դիտողություններ III համագումարի բանաձևերի նկատմամբ: Ցանկալի յե, վոր դրանք քննվեն վորքան կարելի յե շուտ և վորքան կարելի յե ավելի մանրամասն:

Ինչ վերաբերում է «գյուղական» կազմակերպության պլանին մեր Օկրուգային կազմակերպության մեջ, մենք ստիպված ենք աշխատելու այնպիսի պայմաններում, վորոնց մասին III համագումարի բանաձևերը բոլորովին լռություն են պահպանում: Ամենից առաջ անհրաժեշտ է նշել, վոր մեր գործունեության շրջանը—Մոսկվայի նահանգն ու հարևան նահանգների նրա հետ սահմանակցվող գավառները—առավելապես զբաղված է ինդուստրիալ արդյունաբերությամբ, ունենալով համեմատաբար թույլ զարգացած տնայնագործական զբաղմունքներ և բնակչության շատ աննշան մի մաս, վորը բացառապես *գյուղատնտեսությամբ է զբաղվում: 10—15 հազար բանվոր ունեցող ահագին մանուֆակտուրաներն ընդմիջվում են 500—1000 մարդ ունեցող փոքրիկ ֆաբրիկաներով, վորոնք սփռված են հեռ ընկած գյուղերում ու շեներում: Թվում եր, թե այսպիսի պայմաններում սոցիալ-դեմոկրատիան այստեղ իր համար շատ հարմար հող կգտնի, բայց գործը ցույց տվեց, վոր այս յերևացող նախադրյալները քննադատության չեն դիմանում: Դեռ մինչև այժմ մեր «պրոլետարիատը» հսկայական մեծամասնությամբ, չնայած վոր ֆաբրիկաներից վոմանք 40—50 տարի գոյություն ունեն, հողից չի կտրվել: «Գյուղն» այնպես ամուր է կպել նրան, վոր այն բոլոր հոգեբանական ու այլ նախադրյալները, վորոնք «զուտ» պրոլետարիատի մոտ ստեղծվում են կոլեկտիվ աշխատանքի պրոցեսում, մեր պրոլետարիատի մոտ չեն զարգանում: Մեր «պրոլետարների» հողագործական տնտեսությունն ինչ-վոր խառնակ ձևեր է ներկայացնում: Գործարանի ջուլհակն իր հողակտորը մշակելու համար բատրակ է վարձում: Հենց այս հողակտորի վրա յեն աշխատում նրա կինը (յեթե նա ֆաբրիկայում չէ), յերեխաները, ծերունիները, ինվալիդները և ինքն էլ կաշխատի նրա վրա, յերբ կծերանա, խեղություն կստանա կամ կվռնդվի անզուսպ կամ անբարեհույս վարքի համար: Այսպիսի «պրոլետարներին» դժվար է պրոլետար անվանել: Իրենց տնտեսական դրությամբ դրանք պաուպերներ են: Իրենց իդեոլոգիայով—մանր բուրժուա: Նրանք տգետ են ու պահպանողական: Նրանցից են հա-*

վաքագրվում «սևհարյուրյակային» տարրերը: Բայց վերջին ժամանակներս ինքնագիտակցությունը նրանց մոտ էլ սկսում է արթնանալ: Մենք «գլուխ» պրոլետարիատից վերցրած կեռիքներով այս խավար մասսային զարթեցնում ենք դարավոր քնից, և ոչ առանց հաջողության: Կեռիքներն աճում են, տեղ-տեղ ամրանում, պառուպները յենթարկվում են մեր ազդեցությանը, ընդունում են մեր իդեոլոգիան ինչպես գործարանում, այնպես էլ գյուղում: Յեվ մենք կարծում ենք, որ կազմակերպությունների տարածումը ոչ-«գլուխ» պրոլետարական միջավայրում ոչ-օրթոդոքսալ չի լինի: Ուրիշ միջավայր մենք չունենք, և յեթե մենք սնդենք օրթոդոքսալության վրա, կազմակերպենք միմիայն գյուղական «պրոլետարիատին», ապա ստիպված կլինենք լուծելու մեր և մեզ հաքեան կազմակերպությունները: Մենք գիտենք, որ մեզ համար դժվար է պայքարել կալվածատիրոջ կողմից լքված հեքիկլի ու այլ հանդամասերը կամ այն հողերը եքսպրոպրիացիայի յենթարկելու փորձի դեմ, որոնց վրա վեղարավոր ու ֆարաջավոր հայրերը տնտեսությունը չեն կարողացել դնել, ինչպես հարկն է: Մենք գիտենք, որ բուրժուական դեմոկրատիան, սկսած «դեմոկրատորեն»-միապետական ֆրակցիայից (այսպիսին գոյություն ունի Ռուսայի գավառում) և վերջացրած «գյուղացիական» միությամբ, կփորձեն պայքարել մեր դեմ «պառուպների» վրա ազդեցություն ձեռք բերելու համար, բայց մենք վերջիններին կլինենք առաջինների դեմ: Մենք կոդատարընենք շրջանում գտնըված բոլոր սոցիալ-դեմոկրատական ուժերը, ինչպես ինտելիգենտական, այնպես էլ պրոլետարական-բանվորական, որպեսզի «պառուպներից» կազմված մեր սոցիալ-դեմոկրատական կոմիտեները փոքր կանդնեցնենք ու ամրապնդենք: Յեվ դա մենք կանենք այսպիսի պլանով: Մենք յուրաքանչյուր գավառական քաղաքում կամ արդյունաբերական մեծ կենտրոնում կդնենք Ռկրուգային կազմակերպության խմբերի գավառային կոմիտեներ: Գավառային կոմիտեն կազմակերպում է «գյուղացիական» կոմիտեներ, բացի իր շրջանում յեղած ֆաբրիկաններից ու գործարաններից: Այդպիսի կոմիտեները չպետք է բազմաթիվ լինեն՝ կոնսպիրատիվ նկատառումներով, և նրանց կազմը որոշվում է ամենից ավելի հեղափոխականորեն տրամադրված և ընդունակ գյուղացի-պառուպներով: Այնտեղ, որտեղ կան թե՛ գործարաններ և թե՛ գյուղացիներ— նրանց անհրաժեշտ է կազմակերպել յենթախմբի մի կոմիտեյի մեջ:

Այդպիսի կոմիտեն ամենից առաջ պետք է պարզորեն ու ճշգրտորեն հաշվառե շրջապատող պայմանները. Ա) Հողային հարաբերություններ. 1) Գյուղացիական հողաբաժիններ, վարձակալություն, տիրապետության ձև (համայնական, ծխային և այլն): 2) Շրջակա հողերը. ա) ումն են պատկանում. բ) ինչքան հող կա. գ) գյուղացիներն ինչպիսի վերաբերմունք ունեն այս հողերի հանդեպ. դ) ինչպիսի պայմաններով է տեղի ունենում այս հողերի օգտագործումը. 1) աշխատավճարումներ, 2) չափազանց մեծ վարձավճար «օտրեզկաների» համար և այլն. ե) պարտաբեռնվածությունը կուլակների, կալվածատերերի և ուրիշն. հանդեպ: Բ) Հարկեր, տուրքեր, գյուղացիական ու կալվածատիրական հողերի հողային հարկման բարձրությունը: Գ) Տարավայր ու տնայնագործական զբաղմունքներ, անձնագրեր, չկա՞ արդյոք ձմեռային վարձում և այլն: Դ) Տեղական ֆաբրիկներն ու գործարանները. աշխատանքի պայմանները նրանցում. 1) աշխատավարձ, 2) աշխատանքային օր, 3) ադմինիստրացիայի վերաբերմունքը, 4) բնակարանային պայմանները և այլն: Ե) Ադմինիստրացիա. զեմսկի նաչալնիկները, տանուտերը, գրագիրը, վոլոստային դատավորները, ուրադնիկները, տերտերը: Զ) Զեմստվո. գյուղացիների ձայնավորները, զեմստվոյի ծառայողները—ուսուցիչը, բժիշկը, գրադարաններ, դպրոցներ, թեյատներ: Է) Վոլոստային ժողովներ. նրանց կազմն ու գործերի վարումը: Ը) Կազմակերպություններ՝ «Գյուղացիական միություն», սոցիալիստ-հեղափոխականներ, սոցիալ-դեմոկրատներ:

Ծանոթանալով այս տվյալների հետ՝ գյուղացիական սոցիալ-դեմոկրատական կոմիտեն պարտավոր է ժողովներում անցկացնել այն որոշումները, որոնք կբխեն իրերի այս կամ այն աննորմալ դրությունից: Սրա հետ միասին այդպիսի կոմիտեն նույնպես մղում է սոցիալ-դեմոկրատիայի գաղափարների ուժեղ պրոպագանդա ու ագիտացիա մասսայի մեջ, կազմակերպում է խմբակներ, թռուցիկ ժողովներ, մասովկաներ, տարածում է պրոկլամացիաներ ու գրականություն, փող է հավաքում կուսակցական դրամարկղի համար և գավառային խմբի միջոցով կապ է պահպանում Ռկրուգային կազմակերպության հետ:

Յեթե մեզ հաջողվի մի շարք նման կոմիտեներ կազմակերպել, ապա սոցիալ-դեմոկրատիայի հաջողությունն ապահովված կլինի:

Ռկրուգային կազմակերպիչ:

Ըստինքյան հասկանալի յե, որ մենք հանձն չենք առնի այն մանրամասն գործնական դիրեկտիվները մշակելու խնդիրը, որոնց մասին ընկերը խոսում է. այդ՝ տեղերում աշխատողների ու գործնականորեն ղեկավարող ռուսական կենտրոնի գործն է: Մենք մտադիր ենք օգտվել Մոսկվայի ընկերոջ բովանդակալից նամակից՝ լուսաբանելու համար III համագումարի բանաձևը և առհասարակ կուսակցության կենսական խնդիրները: Նամակից յերևում է, որ այն տարակուսանքները, որ III համագումարի բանաձևն է հարուցել, մասամբ միայն առաջ են յեկել թեորիական կասկածներից: Դրանց մյուս աղբյուրը—նոր, առաջներում չծագած այն հարցն է, որ վերաբերում է «հեղափոխական գյուղացիական կոմիտեների» ու գյուղացիության մեջ աշխատող «սոցիալ-դեմոկրատական կոմիտեների» փոխհարաբերությանը: Հենց այս վերջին հարցի դրումն արդեն վկայում է գյուղացիության միջև տարված սոցիալ-դեմոկրատական աշխատանքի նշանակալից առաջադիմական քայլի մասին: Արդեն որահերթի յեն դրվում համեմատաբար մանրամասնություններին վերաբերող հարցեր, որոնք ծագել են «գյուղական» ագիտացիայի գործնական պահանջմունքներից, որն սկսել է ամրանալ ու հաստատուն, մշտական ձևեր ընդունել: Յեվ նամակի հեղինակը հաճախ մոռանում է, որ, կշտամբելով, թե համագումարի բանաձևը պարզ չէ, նա, խիկապես, մի այնպիսի հարցի պատասխան է որոնում, որը կուսակցության համագումարը չեր դրել և չեր կարող դնել:

Այսպես, որինակ, վոչ բոլորովին ուղիղ է հեղինակի այն կարծիքը, վոր թե՛ մեր գաղափարների պրոպագանդան, թե՛ գյուղացիական շարժման պաշտպանությունը հնարավոր են «միայն» տեղերում կազմակերպություն ունենալու դեպքում: Հասկանալի յե, այսպիսի կազմակերպությունները ցանկալի յեն և, աշխատանքի աճման պարագայում, անհրաժեշտ, բայց մատնանշած աշխատանքը մինչև անգամ այնտեղ է հնարավոր ու անհրաժեշտ, վորտեղ այդպիսի կազմակերպություններ չկան: Մեր ամբողջ գործունեյության մեջ թեկուզ միայն քաղաքային պրոլետարիատի շրջանում մենք պետք է աչքաթող չանենք գյուղացիական հարցը և տարածենք այն հայտարարությունը, վոր արել է գիտակից պրոլետարիատի ամբողջ կուսակցությունը՝ հանձին III համագումարի. մենք պաշտպանում ենք գյուղացիական ապստամբությունը: Գյուղացիները պետք է իմանան այս—գրականության միջոցով, բանվորների միջոցով, առանձին կազմակերպությունների միջոցով և այլն: Գյուղացիները պետք է իմանան, վոր այս պաշտպանության մեջ ս.-դ. պրոլետարիատը կանգ չի առնի հողի վոչ մի բռնագրավման (այսինքն էքսպրոպրիացիայի՝ առանց սեփականատերերին հատուցում տալու) առաջ:

Նամակի հեղինակն այստեղ մի թեորիական հարց է բարձրացնում. արդյոք հարկ չկա՞ առանձին վերապահումով սահմանափակել «գյուղացիական մանր-բուրժուական սեփականության» ոգտին արվող խոշոր կալվածքների էքսպրոպրիացիան: Բայց, այս վերապահումն առաջարկելով, հեղինակը կամայականորեն նեղացրել է III համագումարի բանաձևի իմաստը: Բանաձևում խոսք անգամ չի ասվում այն մասին, թե ս.-դ. կուսակցությունը պարտավորվել է պաշտպանել բռնագրավված հողերի անցումը հատկապես մանր-բուրժուական սեփականատերերի ձեռքը: Բանաձևն ասում է. մենք պաշտպանում ենք «ընդհուպ մինչև բռնագրավումը», այսինքն՝ ընդհուպ մինչև առանց հատուցման խլումը, բայց այն հարցը, թե ո՛ւմ հանձնվի խլվածը, բանաձևը բոլորովին չի վճռում: Այս հարցը բաց թողնելը պատահական չէ. «Вперед» (№№ 11, 12, 15) [5] լրագրի հոդվածներից յերևում է, վոր այս հարցը նախապես վճռելն անբանական էր համարվում: Այնտեղ, որինակ, մատնանշվում էր, վոր դեմոկրատական հանրապետության ժամանակ սոցիալ-դեմոկրատիան չի կարող ուխտել և իր ձեռքերը կաշկանդել հողի նացիոնալիզացիայի նկատմամբ:

Իսկապես, ի տարբերություն մանր-բուրժուական սոցիալիստ-հեղափոխականների, մեզ համար այժմ ծանրության կենտրոնը գյուղացիական ապստամբությունների հեղափոխական-դեմոկրատական կողմն ու գյուղական պրոլետարիատի առանձին կազմակերպումն է դասակարգային կուսակցության մեջ: Այժմ հարցի էությունը վո՛չ թե «չորնի պերեդելի» կամ նացիոնալիզացիայի պրոյեկտներն են, այլ գյուղացիության կողմից հին կարգի հեղափոխական խորտակումը գիտակցելն ու նրա կողմից իրականացնելն է: Ուստի և սոցիալիստ-հեղափոխականները շեշտը դնում են «սոցիալիզացիայի» և այլնի վրա, իսկ մենք—հեղափոխական գյուղացիական կոմիտեների վրա. առանց նրանց, ասում ենք մենք, բոլոր ձևափոխումները վոչինչ են: Նրանց հետ միասին և հենվելով նրանց վրա հնարավոր է գյուղացիական ապստամբության հաղթությունը:

Գյուղացիական ապստամբությանը մենք պետք է ամեն կերպ ոգնենք մինչև հողերի բռնագրավումը,—բայց վոչ յերբեք ընդհուպ մինչև ամեն տեսակի մանր-բուրժուական պրոժեկտները: Մենք պաշտպանում ենք գյուղացիական շարժումը, վորչափով այն հեղափոխական-դեմոկրատական է: Մենք պատրաստվում ենք (իսկույն ևեթ, անհապաղ պատրաստվում ենք) պայքարել նրա դեմ, վորչափով այն հանդես կգա վորպես ռեակցիոն, հակապրոլետարական: Մարքսիզմի ամբողջ էությունն այս կրկնակի խնդրի մեջն է, վորը մարքսիզմը չըմբռնող մարդիկ միայն կարող են պարզեցնել կամ տափակացնել իբրև միասնական և հասարակ խնդիր:

Վերցնենք մի կոնկրետ որինակ: Յենթադրենք, թե գյուղացիական ապստամբությունը հաղթել է: Հեղափոխական գյուղացիական կոմիտեներն ու ժամանակավոր հեղափոխական կառավարությունը (վորը, մասամբ, հենվում է հենց այս կոմիտեների վրա) կարող է կատարել խոշոր սեփականության ամեն մի բռնագրավում: Մենք կողմնակից ենք բռնագրավման, մենք արդեն հայտարարել ենք այդ: Բայց մենք ո՞ւմ խորհուրդ կտանք հանձնել բռնագրավված հողերը: Մենք այստեղ չենք կաշկանդել մեր ձեռքերը և յերբեք չենք կաշկանդի այնպիսի հայտարարություններով, վոր նամակի հեղինակն անզգուշաբար առաջարկում է: Հեղինակը մոռացել է, վոր III համագումարի նույն բանաձևում խոսվում է «գյուղացիական շարժման հեղափոխական-դեմոկրատական բովանդակությունն ամեն տեսակ ռեակցիոն խառնուրդից մաքրելու» մասին, այս մեկ. և յերկրորդ՝ «բոլոր դեպքերում և բոլոր հանգամանքներում գյուղական պրոլետարիատի

ինքնուրույն կազմակերպություն ունենալու» անհրաժեշտության մասին։ Ահա մեր դիրեկտիվները։ Գյուղացիական շարժման մեջ ռեակցիոն խառնուրդներ միշտ կլինեն, և մենք առաջուց պատերազմ ենք հայտարարում նրանց։ Դասակարգային հակամարտությունը գյուղական պրոլետարիատի ու գյուղացիական բուրժուազիայի միջև անխուսափելի յե, և մենք առաջուց բացահայտում ենք այն, պարզաբանում ենք այն, պայքարի յենք պատրաստվում այդ հողի վրա։ Նման պայքարի առիթներից մեկը շատ հավանական է, վոր կլինի այն հարցը, թե ո՞ւմ և ի՞նչպես հանձնել բռնագրավված հողերը։ Յեվ մենք չենք սքողում այս հարցը, չենք խոստանում հավասարար բաժանում, «սոցիալիզացիա» և այլն, այլ ասում ենք. մենք այնտեղ դեռ պայքարելու յենք, դարձյալ պայքարելու յենք, նոր ասպարեզում պայքարելու յենք և՛ այլ դաշնակիցների հետ. մենք այնտեղ կլինենք անպայման գյուղական պրոլետարիատի հետ, ամբողջ բանվոր դասակարգի հետ ընդդեմ գյուղացիական բուրժուազիայի։ Գործնականորեն այս կարող է նշանակել և՛ հողի անցում մանր գյուղացի-տնտեսների դասակարգին, այնտեղ, վորտեղ գերակշռում է ստրկական, ճորտատիրական խոշոր տնտեսությունը, վորտեղ դեռ չկան խոշոր սոցիալիստական արտադրության նյութական պայմանները, և՛ նացիոնալիզացիա, դեմոկրատական հեղափոխության կատարյալ հաղթության դեպքում, և՛ խոշոր կապիտալիստական կալվածքների հանձնում բանվորների ասոցիացիաներին, վորովհետև դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն նեթ կսկսենք անցնել հենց մեր ուժի, գիտակից ու կազմակերպված պրոլետարիատի ուժի չափով, կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխության։ Մենք կողմնակից ենք անընդհատ հեղափոխության։ Մենք կանգ չենք առնի կես ճանապարհին։ Յեթե մենք իսկույն նեթ և անհապաղ չենք խոստանում ամեն տեսակ «սոցիալիզացիա», ապա հենց այն պատճառով, վոր մենք գիտենք այս խնդրի իրական պայմանները և գյուղացիության ընդերքում հասունացող նոր դասակարգային պայքարը վո՛չ թե քողարկում, այլ մերկացնում ենք։

Մենք սկզբում պաշտպանում ենք մինչև վերջը, բոլոր միջոցներով, մինչև բռնագրավումը,—գյուղացուն առհասարակ կալվածատիրոջ դեմ, իսկ հետո (և մինչև անգամ վո՛չ թե հետո, այլ հենց միևնույն ժամանակ) մենք պաշտպանում ենք պրոլետարիատին առհասարակ գյուղացու դեմ։ Այս րոպեյին հաշվել, թե ի՛նչպես կլինի ուժերի կոմբինացիան գյուղացիության ներ-

սում հեղափոխությունից (դեմոկրատական) հետո «յերկրորդ որը»—դատարկ ուտոպիա յե։ Ավանտյուրիզմի մեջ չընկնելով, մեր գիտական խղճին չդավաճանելով, էժան ժողովրդականության հետևից չընկնելով, մենք մի բան միայն կարող ենք ասել և ասում ենք. մենք ամբողջ գյուղացիությանը բոլոր ուժերով կօգնենք դեմոկրատական հեղափոխություն կատարելու, վորպեսզի դրանով մեզ համար, պրոլետարիատի կուսակցության համար, ե՛լ ավելի հեշտ լինի վորքան կարելի յե ավելի արագ անցնել նոր ու ամենաբարձր խնդրին—սոցիալիստական հեղափոխությանը։ Մենք այժմյան գյուղացիական ապստամբության հաղթությունից վո՛չ մի ներդաշնակություն, վոչ մի հավասարություն, վո՛չ մի «սոցիալիզացիա» չենք խոստանում,—ընդհակառակը, մենք «խոստանում ենք» նոր պայքար, նոր անհավասարություն, նոր հեղափոխություն, վորին և ձգտում ենք մենք։ Մեր ուսմունքն ավելի պակաս «քաղցր է», քան սոցիալիստ-հեղափոխականների հեքիաթները, բայց ով կամենում է, վոր իրեն մենակ քաղցր բան խմացնեն միայն, թող նա հենց սոցիալիստ-հեղափոխականների մոտ գնա. այսպիսի մարդկանց մենք կասենք՝ բարի ճանապարհ։

Այս մարքսիստական տեսակետը վճռում է, մեր կարծիքով, նաև կոմիտեների հարցը։ Սոցիալ-դեմոկրատական գյուղացիական կոմիտեներ, մեր կարծիքով, չպետք է լինեն. յեթե սոցիալ-դեմոկրատական է, նշանակում է վոչ միայն գյուղացիական է. յեթե գյուղացիական է, նշանակում է զուտ պրոլետարական չէ, սոցիալ-դեմոկրատական չէ։ Այս յերկու գործը խառնելու անթիվ ցանկացողներ կան, մենք նրանց թվից չենք[6]։ Ամենուրեք, վորտեղ հնարավոր է, մենք ձգտելու յենք կազմակերպելու մեր կոմիտեները, սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կոմիտեները։ Այնտեղ կմտնեն թե՛ գյուղացիները, թե՛ պաուպերները, թե՛ ինտելիգենտները, թե՛ պոռնիկուհիները (նորերս մի բանվոր նամակով մեզ հարցնում եր, թե ինչո՛ւ մենք ագիտացիա չմղենք պոռնիկուհիների միջև), թե՛ զինվորները, թե՛ ուսուցիչները և թե՛ բանվորները,—մի խոսքով՝ բոլոր սոցիալ-դեմոկրատները և վոչ վոք, բացի սոցիալ-դեմոկրատներից։ Այս կոմիտեները տանելու յեն սոցիալ-դեմոկրատական ամբողջ աշխատանքը, իր ամբողջ ընդարձակությամբ, ձգտելով, սակայն, հատկապես և առանձնապես կազմակերպել գյուղական պրոլետարիատին, վորովհետև սոցիալ-դեմոկրատիան պրոլետարիատի դասակարգային կուսակցությունն է։ «Վոչ-որթոդոքսալ» գործ

համարել այն պրոլետարիատի կազմակերպումը, վորը լիովին չի մաքրվել հնության զանազան մնացորդներից, մեծագույն մոլորություն է, և մենք կկամենայինք կարծել, վոր նամակի սրան վերաբերող տեղերը հիմնված են հասարակ թյուրիմացության վրա: Քաղաքային և արդյունաբերական պրոլետարիատն անխուսափելիորեն լինելու յե մեր սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հիմնական միջուկը, բայց մենք պարտավոր ենք դեպի այն գրավել, լուսավորել, կազմակերպել բոլոր աշխատավորներին ու շահագործվողներին, ինչպես մեր ծրագիրն ել ասում է, առանց բացառության բոլորին՝ թե՛ տնայնագործներին, թե՛ պաուպերներին, թե՛ մուրացկաններին, թե՛ սպասավորներին, թե՛ բոսյակներին և թե՛ պոռնկուհիներին,—հասկանալի յե, այն անհրաժեշտ ու պարտադիր պայմանով, վոր նրանք հարեն սոցիալ-դեմոկրատիային, և վոչ թե սոցիալ-դեմոկրատիան՝ նրանց, վոր նրանք անցնեն պրոլետարիատի տեսակետին, և վոչ թե պրոլետարիատը՝ նրանց տեսակետին:

Այն ժամանակ ել ինչո՞ւ համար են հեղափոխական գյուղացիական կոմիտեները—կհարցնի ընթերցողը: Նշանակում ե՝ նրանք պետք չե՞ն: Վո՛չ, պետք են: Մեր իդեալն ե՝ ամենուրեք գյուղերում զուտ սոցիալ-դեմոկրատական կոմիտեներ ունենալ և ապա՝ նրանց համաձայնությունը գյուղացիության բոլոր հեղափոխական-դեմոկրատական տարրերի, խմբերի, խմբակների հետ՝ հեղափոխական կոմիտեներ կազմելու համար: Այստեղ կա կատարյալ անալոգիա քաղաքի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ինքնուրույնության և նրա ունեցած դաշինքի հետ բոլոր հեղափոխական դեմոկրատների հետ՝ ապստամբության նպատակով: Մենք կողմնակից ենք գյուղացիության ապստամբությանը: Մենք անպայմանորեն դեմ ենք տարատեսակ դասակարգային տարրերը և տարատեսակ կուսակցությունները խառնելուն ու ձուլելուն: Մենք կողմնակից ենք այն բանին, վոր ապստամբության նպատակով սոցիալ-դեմոկրատիան առաջ հրի ամբողջ հեղափոխական դեմոկրատիային, ոգնի նրան ամբողջապես կազմակերպվելու, նրա հետ կողք կողքի ընթանա, բայց չձուլվելով նրա հետ, դեպի բարիկադները՝ քաղաքներում,—կալվածատերերի ու վոստիկանության դեմ՝ գյուղերում:

«Пролетарий» № 16, 1905 թ· սեպտեմբերի 14 (1):

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի ապրած հեղափոխությունը համաժողովրդական հեղափոխություն ե: Ամբողջ ժողովրդի շահերն անհաշտելի հակասության մեջ են մտել այն մի բուռ անձերի շահերի հետ, վորոնք ինքնակալական կառավարություն են կազմում և պաշտպանում նրան: Ժամանակակից հասարակության բուն իսկ գոյությունը, հասարակություն, վոր կառուցված ե ապրանքային տնտեսության հիմքի վրա, բնակչության տարբեր դասակարգերի ու խմբերի շահերի հսկայական տարբերության ու հակասության պայմաններում, պահանջում ե ինքնակալության վոչնչացում, քաղաքական ազատություն, տիրող դասակարգերի շահերի բացահայտ ու անմիջական արտահայտություն պետության կառուցման ու կառավարման գործում: Դեմոկրատական հեղաշրջումը, վոր բուրժուական ե իր հասարակական-տնտեսական եյությամբ, չի կարող ամբողջ բուրժուական հասարակության պետքերը չարտահայտել:

Սակայն ինքը՝ այդ հասարակությունը, վորն այժմ միասնական ու ամբողջական ե թվում ինքնակալության դեմ մղվող պայքարում, անդառնալիորեն ճեղքված ե կապիտալի ու աշխատանքի միջև յեղած անդունդով: Ինքնակալության դեմ ապստամբած ժողովուրդը միասնական ժողովուրդ չե: Սեփականատերերն ու վարձու բանվորները, աննշան թվով հարուստները («վերին տաս հազարը») և տասնյակ-միլիոնավոր չունևորներն ու աշխատավորները, այդ, իսկապես վոր, «յերկու ազգ են», ինչպես ասել ե մի հեռատես անգլիացի դեռ XIX դարի առաջին կեսում[7]: Պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև պայքարը որահերթի յե դրված ամբողջ Յեվրոպայում: Այս պայքարը վաղուց արդեն անցել ե Ռուսաստան: Արդի Ռուսաստանում վո՛չ թե յերկու կռվող ուժեր են կազմում հեղափոխության բովանդակությունը, այլ յերկու տարբեր ու այլասեռ սոցիալական պատերազմներ· մեկը ժամանակակից ինքնակալական-ճորտատիրական կարգի ընդերքում, մյուսը՝ ապագա, արդեն մեր աչքի առջև

ծնվող բուրժուական-դեմոկրատական կարգի ընդերքում: Մեկը համաժողովրդական պայքար է ազատության համար (բուրժուական հասարակության ազատության համար), դեմոկրատիայի համար, այսինքն՝ ժողովրդի ինքնակալության համար, մյուսը— պրոլետարիատի դասակարգային պայքարն է բուրժուազիայի դեմ հանուն հասարակության սոցիալիստական կառուցման:

Սոցիալիստների վրա այդպիսով ծանր ու դժվարին խնդիր է դրվում—միաժամանակ յերկու պատերազմ մղել, վորոնք բոլորովին տարբեր են թե՛ բնույթով, թե՛ նպատակներով, թե՛ այն սոցիալական ուժերի կազմով, վորոնք կարող են վճռական մասնակցություն ունենալ այս կամ այն պատերազմում: Այդ դժվարին խնդիրը պարզ ձևով դրել և հաստատապես վճռել է սոցիալ-դեմոկրատիան շնորհիվ այն բանի, վոր նա իր ամբողջ ծրագրի հիմքում դրել է գիտական սոցիալիզմը, այսինքն՝ մարքսիզմը, շնորհիվ այն բանի, վոր նա մտել է համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի բանակի մեջ վորպես նրա ջոկատներից մեկը, սոցիալ-դեմոկրատիայի, վորն ստուգել, հաստատել, պարզաբանել ու ավելի մանրամասնորեն զարգացրել է մարքսիզմի դրույթները յեվրոպական ամենատարբեր յերկրների մի յերկար շարք դեմոկրատական ու սոցիալիստական շարժումների փորձով:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան վաղուց ցույց եր տալիս և ցույց տվեց ռուսական դեմոկրատիզմի բուրժուական բնույթը, սկսած նրա լիբերալ-ժողովրդական ձևակերպումից և վերջացրած «ոսվոբոժդենյականով»: Նա միշտ ցույց է տվել բուրժուական դեմոկրատիզմի անխուսափելի կիսատությունը, սահմանափակությունը, անձկությունը: Նա սոցիալիստական պրոլետարիատի առջև դեմոկրատական հեղափոխության դարաշրջանում խնդիր դրեց՝ իր կողմը գրավել գյուղացիության մասսային և, խափանելով բուրժուազիայի անկայունությունը, ընկճել ու ճզմել ինքնակալությունը: Դեմոկրատական հեղափոխության վճռական հաղթությունը հնարավոր է միայն վորպես պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա: Սակայն վորքան ավելի շուտ ու լիովին իրագործվի այդ հաղթությունը, այնքան ավելի արագ ու խորը կծավալվեն նոր հակասությունները ու նոր դասակարգային պայքարը լիովին դեմոկրատականացված բուրժուական հասարակարգի ասպարեզում: Վորքան ավելի ամբողջությամբ կենսագործենք մենք դեմոկրատական հեղաշրջումը, այնքան ավելի մոտ կկանգնենք մենք դեմ առ դեմ սոցիալիստական հեղաշրջման

խնդիրներին, այնքան ավելի խիստ և սուր կլինի պրոլետարիատի պայքարը բուրժուական հասարակության բուն հիմքերի դեմ:

Պրոլետարիատի հեղափոխական-դեմոկրատական և սոցիալիստական խնդիրների այդ դրումից ամեն մի խուսափելու դեմ սոցիալ-դեմոկրատիան պետք է անշեղ պայքար մղի: Անհեթեթություն է անտեսել այժմյան հեղափոխության դեմոկրատական, այսինքն՝ իր հիմքում բուրժուական բնույթը, անհեթեթություն է այդ պատճառով այնպիսի լոզունգներ դնելը, ինչպես հեղափոխական կոմունաներ կազմակերպելն է: Անհեթեթություն է ու ռեակցիոն՝ նվաստացնել պրոլետարիատի կողմից դեմոկրատական հեղափոխության մեջ մասնակցությունը, և այն էլ ղեկավար մասնակցություն ունենալու խնդիրները, խուսափելով թեկուզ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի լոզունգից: Անհեթեթություն է շփոթել դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների խնդիրներն ու պայմանները, վորոնք տարբեր բաներ են, կրկնում ենք, թե՛ բնույթով և թե՛ նրանց մեջ մասնակցող սոցիալական ուժերի կազմով:

Ահա այդ վերջին սխալի վրա մենք էլ մտադիր ենք այժմ մանրամասն կանգ առնել: Դասակարգային հակասությունների անզարգացածությունը ժողովրդի մեջ ընդհանրապես, գյուղացիության մեջ հատկապես, անխուսափելի յերևույթ է դեմոկրատական հեղափոխության դարաշրջանում, վորն առաջին անգամ հիմքեր է ստեղծում կապիտալիզմի իսկապես լայն զարգացման համար: Իսկ եկոնոմիկայի այդ անզարգացածությունն առաջացնում է սոցիալիզմի հետամնաց ձևերի վերապրում ու վերակենդանացում այս կամ այն ձևով, սոցիալիզմ, վորը մանր-բուրժուական սոցիալիզմ է, քանի վոր իդեալականացնում է մանր-բուրժուական հարաբերությունների շրջանակներից դուրս չեկող ձևափոխումները: Գյուղացիների մասսան չի գիտակցում և չի էլ կարող գիտակցել այն բանը, վոր ամենակատարյալ «ազատությունը» և նույնիսկ թեկուզ նաև ամբողջ հողի ամենա«արդարացի» բաշխումը վո՛չ միայն չի վոչնչացնի կապիտալիզմը, այլ, ընդհակառակը, պայմաններ կստեղծի նրա առանձնապես լայն ու հզոր զարգացման համար: Յեվ այն ժամանակ, յերբ սոցիալ-դեմոկրատիան առանձնացնում և պաշտպանում է մուժիկային այդ ձգտումների միայն հեղափոխական-դեմոկրատական բովանդակությունը, մանր-բուրժուական սոցիալիզմը բարձրաց-

նում, Թեորխայի յէ վերածում գյուղացիական անգիտակցությունը, չփոթելով ու միաձուլելով իսկապես դեմոկրատական և յերևակայած սոցիալիստական հեղաշրջման պայմաններն ու խնդիրները:

Այդ վոչ-պարզ մանր-բուրժուական գաղափարախոսության ամենատկնառու արտահայտությունն է «սոցիալիստ-հեղափոխականների» ծրագիրը,—ավելի ճիշտ, ծրագրի նախագիծը, վորոնք այնքան ավելի շուտ շտապեցին իրենց կուսակցություն հռչակել, վորքան ավելի քիչ եյին նրանց մոտ զարգացած կուսակցականության ձևերն ու նախադրյալները: Քննելով նրանց ծրագիր-նախագծերը (տե՛ս «Вперед» № 3*), մենք արդեն առիթ ենք ունեցել ցույց տալու, վոր սոցիալիստ-հեղափոխականների հայացքների արմատը ռուսական հին նարոդնիկությունն է: Բայց քանի վոր Ռուսաստանի ամբողջ տնտեսական զարգացումը, ռուսական հեղափոխության ամբողջ ընթացքն անխնա ու անողոք կերպով ամեն որ ու ամեն ժամ խլում է հողը զուտ նարոդնիկության հիմքերի տակից, ուստի սոցիալիստ-հեղափոխականների հայացքներն անխուսափելիորեն եկլեկտիկ են դառնում: Նարոդնիկության ճեղքերը նրանք աշխատում են շտկել մարքսիզմի մոդայական ապորտունիստական «քննադատության» կարկատաններով, բայց դրանից հնամաշ զգեստն ավելի դիմացկուն չի դառնում: Ընդհանրապես և ամբողջովին վերցրած՝ նրանց ծրագիրը մի ինչ-վոր բացարձակապես անկենդանի, ներքուստ-հակասական բան է, վորը ռուսական սոցիալիզմի պատմության մեջ լոկ արտահայտում է ճորտատիրականից դեպի բուրժուական Ռուսաստանը տանող ճանապարհի, «նարոդնիկությունից դեպի մարքսիզմ» տանող ճանապարհի էտապներից մեկը: Այս բնորոշմանը, վոր տիպիկ է արդի հեղափոխական մտքի մի ամբողջ շարք շատ թե քիչ մանր առվակների համար, հարմարում է նաև Լեհական սոցիալիստական կուսակցության (Լ.Ս.Կ.) հողային ծրագրի նորագույն նախագիծը, վոր տպագրված է «Przeds'vit»[8] № 6—8-ում:

Այդ նախագիծն ագրարային ծրագիրը յերկու մասի յե բաժանում: I մասը տալիս է «այն ռեֆորմները, վորոնց կենսագործման համար հասարակական պայմաններն արդեն հասունացել են». II մասը—«ձևակերպում է I մասում բերված ագրարային ռեֆորմների պսակումն ու ինտեգրացիան»: I մասը, իր

* Տե՛ս Երկերի VII հատորը, եջ 70: «Նարոդնիկությունից դեպի մարքսիզմ»: Խմբ.:

հերթին, յենթաբաժանվում է յերեք բաժնի. Ա) աշխատանքի պաշտպանություն—պահանջներ հօգուտ գյուղատնտեսական պրոլետարիատի. Բ) ագրարային ռեֆորմներ (նեղ մտքով, կամ, այսպես ասած, գյուղացիական պահանջներ) և Գ) գյուղական բնակչության պաշտպանություն (ինքնավարություն և այլն):

Մի քայլ է դեպի մարքսիզմն այդ ծրագրում այն փորձը, վորով ուզում են ծրագիր-մինիմումի պես ինչ-վոր մի բան բաժանել ծրագիր-մաքսիմումից,—այնուհետև զուտ պրոլետարական բնույթի պահանջների միանգամայն ինքնուրույն դրումը,—ապա՝ ծրագրի հիմնավորումների մեջ այն բանի ընդունումը, վոր սոցիալիստի համար բոլորովին անթույլատրելի յե «շոյել գյուղացիական մասսաների սեփականատիրական բնազդները»: Ճիշտն ասած, յեթե լրիվին խորը մտածենք այդ վերջին շարադրանքի մեջ պարունակվող ճշմարտության մասին և այն զարգացնենք հետևողականորեն մինչև վերջը, ապա անխուսափելիորեն կստացվի մի խիստ մարքսիստական ծրագիր: Սակայն դժբախտությունն էլ հենց այն է, վոր Լ.Ս.Կ. հետևողականորեն-պրոլետարական կուսակցություն չէ, իր գաղափարները վերցնելով նույնքան սիրով մարքսիզմի ապորտունիստական քննադատության աղբյուրից: «Հողային սեփականության համակենտրոնացման չապացուցված տենդենցի հետևանքով—կարդում ենք մենք ծրագրի հիմնավորումների մեջ—հնարավոր չէ հանդես գալ ի պաշտպանություն տնտեսության այդ ձևի լիակատար անկեղծությամբ ու հավատով և գյուղացուն համոզել, վոր մանր տնտեսություններն անխուսափելիորեն անհետանալու յեն»:

Այդ վոչ այլ ինչ է, յեթե վոչ բուրժուական քաղաքատնտեսության արձագանքը: Բուրժուական տնտեսագետները բոլոր ուժերով աշխատում են մանր գյուղացուն կապիտալիզմի ու մանր հողագործ-սեփականատիրոջ բարորության համատեղելիության գաղափարը ներշնչել: Նրանք այդ պատճառով սքողում են ապրանքային տնտեսության, կապիտալի ճնշման, մանր գյուղացիական տնտեսության անկման ու նսեմանալու ընդհանուր հարցը հողային սեփականության համակենտրոնացման մասնավոր հարցով: Նրանք աչք են փակում այն բանի հանդեպ, վոր խոշոր արտադրությունը հողագործության հատուկ առևտրական ճյուղերում զարգանում է թե՛ մանր և թե՛ միջին հողային սեփականության վրա, վոր այդ սեփականությունը ստորաբաժանվում է թե՛ վարձակալության աճման հետևանքով, թե՛ հիպոթեկների և թե՛ վաշխառության ճնշման տակ: Նրանք ասվերումն

են թողնում խոշոր տնտեսության տեխնիկական գերազանցության անժխտելի փաստը հողագործության մեջ և գյուղացիական կյանքի պայմանների վատթարացումը կապիտալիզմի դեմ նրա մղած կռվում: Լ.Ս.Կ. խոսքերում վոչինչ չկա, բացի այդ բուրժուական նախապաշարմունքների կրկնությունից, վորոնք հարություն են առնում արդի Դավիդների կողմից:

Տեսական հայացքների անկայունությունն արտահայտվում է նաև գործնական ծրագրի մեջ: Վերցրե՛ք I մասը—ագրարային ռեֆորմները նեղ մաքով: Մի կողմից, դուք կկարդաք կետ 5) «ամեն տեսակ սահմանափակումների վերացում բաժնեհողերը գնելիս և 6) չարվարկների ու սայլակուրի (բնապարհակներ) վերացում»: Սրանք զուտ մարքսիստական նվազագույն պահանջներ են: Առաջադրելով դրանք (հավելված 5-րդ կ.), Լ.Ս.Կ. մի քայլ առաջ է գնում մեր սոցիալիստ-հեղափոխականների համեմատությամբ, վորոնք «Московские Ведомости»-ի հետ միասին թուլություն են տածում դեպի «բաժնեհողերի» տխրահռչակ «անօտարելիությունը»: Դրանք առաջադրելով, Լ.Ս.Կ. կիպ մոտենում է մարքսիզմի ճորտատիրության մնացորդների դեմ կռվելու գաղափարին, վորպես այժմյան գյուղացիական շարժման հիմքին ու բովանդակությանը: Սակայն, մոտենալով այդ գաղափարին, Լ.Ս.Կ. հեռու յե լրիվին ու գիտակցաբար այդ ընդունելուց:

Մեր կողմից քննության առնվող ծրագիր-մինիմումի գլխավոր կետերն սրանք են. «1) արքունի, պետական ու հոգևորականության պատկանող կալվածքների նացիոնալիզացիա կոնֆիսկացիայի միջոցով. 2) խոշոր հողային սեփականության նացիոնալիզացիա անմիջական ժառանգներ չլինելու դեպքում. 3) անտառների, գետերի և լճերի նացիոնալիզացիա»: Այդ պահանջներն ունեն այն ծրագրի բոլոր թերությունները, վորը տվյալ ժամանակի համար հողի նացիոնալիզացիայի պահանջն առաջին պլանի վրա յե դնում: Քանի դեռ փաստորեն չկա լիակատար քաղաքական ազատություն և ժողովրդի ինքնակալություն, քանի դեռ չկա դեմոկրատական հանրապետություն,—նացիոնալիզացիայի պահանջ առաջադրելը վաղաժամ է և աննպատակ, քանի վոր նացիոնալիզացիան անցումն է պետության ձեռքը, իսկ այժմյան պետությունը վոստիկանական է ու դասակարգային, վաղվա պետությունը համենայն դեպս դասակարգային կլինի: Իսկ վորպես դեմոկրատացման ուղղությամբ առաջ տանող լոզունգ, այդ

պահանջն առանձնապես անպետք է, քանի վոր ծանրության կենտրոնը նա փոխադրում է վո՛չ թե գյուղացիների վերաբերմունքի վրա դեպի կալվածատերերը (գյուղացիները վերցնում են կալվածատիրական հողերը), այլ կալվածատերերի վերաբերմունքի վրա դեպի պետությունը: Հարցի այդպիսի դրումը հիմնովին կեղծ է մի այնպիսի մոմենտի համար, յերբ գյուղացիները հեղափոխական ճանապարհով կռվում են հողի համար թե՛ կալվածատերերի դեմ և թե՛ կալվածատերերի պետության դեմ: Հեղափոխական գյուղացիական կոմիտեներ կոնֆիսկացիայի համար, վորպես կոնֆիսկացիայի գործիք—ահա միակ լոզունգը, վորը համապատասխանում է այդպիսի մոմենտին և առաջ է շարժում կալվածատերերի դեմ մղվող դասակարգային պայքարը, դա անխզելիորեն կապելով կալվածատիրական պետության հեղափոխական խորտակման հետ:

Հողային ծրագիր-մինիմումի մնացած կետերը Լ.Ս.Կ. նախագծում հետևյալներն են. «4) սեփականության իրավունքի սահմանափակում, վորքան այդ իրավունքն արգելք է դառնում ամեն մի հողագործական բարելավման (մելիորացիայի), յեթե այդ բարելավումներն անհրաժեշտ համարվեն շահագրգռվածների մեծամասնության կողմից... 7) հացաբույսերը հրդեհից ու կարկտահարությունից, իսկ անասունները՝ համաճարակներից ապահովագրելու նացիոնալիզացիա. 8) օրենսդրական աջակցություն պետության կողմից՝ հողագործական արտելների ու կոոպերացիաների կազմակերպմանը. 9) գյուղատնտեսական դպրոցներ»:

Այդ կետերը լրիվին սոցիալիստ-հեղափոխականների վոգով են կամ (վոր նույնն է) լրիվին բուրժուական ռեֆորմատորության վոգով են: Նրանց մեջ հեղափոխական վոչինչ չկա: Նրանք, իհարկե, առաջադիմական են, անվիճելի յե, սակայն առաջադիմական են սեփականատերերի շահերի համար: Դրանք առաջադրել սոցիալիստի կողմից՝ նշանակում է հենց շոյել սեփականատիրական բնազդները: Դրանք առաջադրել—նույնն է, թե պահանջել պետության աջակցությունը արհեստներին, կարտելներին, սինդիկատներին, արդյունաբերողների ընկերություններին, վորոնք պակաս «առաջադիմական» չեն, քան կոոպերացիաները, ապահովագրությունները և այլ կազմակերպությունները հողագործության մեջ: Այդ բոլորը կապիտալիստական առաջադիմություն է: Նրանց մասին հոգալը մեր գործը չէ, այլ տնտեսատերերի, ձեռ-

նարկատերերի գործն է: Պրոլետարական սոցիալիզմը, տարբերվելով մանր-բուրժուականից, կոմս դե-Մոկլինյիներին, կալվածատեր-զեմեցներին և ուրիշներին է թողնում հոգալ մեծ ու փոքր տնտեսատերերի կոոպերացումների մասին, իսկ ինքն ամբողջովին ու բացառապես վարձու բանվորների կոոպերացման մասին է հոգում տնտեսատերերի դեմ պայքարելու նպատակով:

Նայեցե՛ք այժմ ծրագրի II մասին: Այն բաղկացած է հետևյալ մեկ կետից. «Խոշոր հողային սեփականության նացիոնալիզացիա կոնֆիսկացիայի միջոցով: Այդ ձևով ժողովրդի ձեռք բերած վարելահողերն ու մարգագետինները պետք է հողաբաժինների վերածվեն ու հանձնվեն հողագուրկ և սակավահող գյուղացիներին յերկարամյա ապահովված վարձակալությամբ»:

Ի՞նչ խոսք, լավ «պսակումն է»: Իրեն սոցիալիստական անվանող կուսակցությունը, վորպես «հողային ռեֆորմների պսակում ու ինտեգրացիա», վոչ յերբեք հասարակության սոցիալիստական կառուցում է առաջարկում, այլ մի անհեթեթ մանր-բուրժուական ուտոպիա: Մեր առաջ է դեմոկրատական ու սոցիալիստական հեղաշրջումների կատարյալ շփոթման՝ նրանց տարբեր նպատակները կատարելապես չհասկանալու մի ակնառու օրինակ: Հողի անցումը կալվածատերերից գյուղացիներին կարող է լինել — և ամենուրեք Յեվրոպայում յեղել է — դեմոկրատական հեղաշրջման բաղկացուցիչ մասը, բուրժուական հեղափոխության էտապներից մեկը, բայց այդ «պսակում» կամ «մինչև վերջը հասցնել» անվանել՝ կարող են միայն բուրժուական ռադիկալները: Հողի վերաբաշխումը սեփականատերերի այս կամ այն կարգերի միջև, տնտեսատերերի այս կամ այն դասակարգերի միջև կարող է շահավետ ու անհրաժեշտ լինել դեմոկրատիայի հաղթանակի համար, ճորտատիրության հետքերը լիովին վոչնչացնելու համար, մասսայի կյանքի մակարդակը բարձրացնելու, կապիտալիզմի զարգացումն արագացնելու համար և այլն, — նման միջոցի ամենավճռական պաշտպանությունը կարող է պարտադիր լինել սոցիալիստական պրոլետարիատի համար դեմոկրատական հեղափոխության դարաշրջանում, սակայն «պսակում և մինչև վերջը հասցնել» կարող է լինել միայն սոցիալիստական, և վոչ թե մանր գյուղացիական արտադրությունը: Մանր-գյուղացիական վարձակալության «ապահովումն» ապրանքային տնտեսության ու կապիտալիզմի պահպանման պայմաններում ռեակցիոն մանր-բուրժուական ուտոպիա յե և ուրիշ վոչինչ:

Մենք տեսնում ենք այժմ, վոր Լ.Ս.Կ. հիմնական սխալը միայն նրան չի հատուկ, յեզակի չէ, պատահական չէ: Այն ավելի պարզ ու վորոշակի ձևով (քան սոցիալիստ-հեղափոխականների տխրահռչակ «սոցիալիզացիան», վորը չեն հասկանում հենց իրենք՝ սոցիալիստ-հեղափոխականները) արտահայտում է ամբողջ ռուս նարոդնիկության, ամբողջ ռուս բուրժուական լիբերալիզմի ու ռադիկալիզմի հիմնական սխալը հողային հարցում, կից մինչև այն, վորն արտահայտվեց զեմեցների Մոսկվայի վերջին (սեպտեմբերյան) համագումարի վիճաբանությունների ժամանակ:

Այդ արմատական սխալը կարելի յե այսպես արտահայտել.

Լ.Ս.Կ. ծրագիրը մերձավորագույն նպատակները դնելու տեսակետից հեղափոխական չէ: Իր վերջնական նպատակներով այն սոցիալիստական չէ:

Կամ այլ կերպ. դեմոկրատական և սոցիալիստական հեղաշրջման միջև յեղած տարբերության չըմբռնումը հասցնում է այն բանին, վոր դեմոկրատական խնդիրներում չի արտահայտվում դրանց իսկապես հեղափոխական կողմը, իսկ սոցիալիստական խնդիրների մեջ մտցվում է բուրժուական-դեմոկրատական աշխարհայացքի ամբողջ անպարզությունը: Ստացվում է՝ դեմոկրատի համար մի վոչ-բավականաչափ հեղափոխական, սոցիալիստի համար աններելիորեն խճճված լոզունգ:

Ընդհակառակը, սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրը բավարարում է թե՛ իսկապես-հեղափոխական դեմոկրատիզմին աջակցելու, թե՛ պարզ սոցիալիստական նպատակներ դնելու բոլոր պահանջներին: Այժմյան գյուղացիական շարժման մեջ մենք տեսնում ենք պայքար ճորտատիրության դեմ, պայքար կալվածատերերի ու կալվածատիրական պետության դեմ: Այս պայքարը մենք պաշտպանում ենք մինչև վերջը: Այդպիսի պաշտպանության համար միակ ճիշտ լոզունգն է — կոնֆիսկացիա հեղափոխական գյուղացիական կոմիտեների միջոցով: Ինչ անել կոնֆիսկացիայի յենթարկված հողերը, — այս յերկրորդական հարց է: Այդ վո՛չ թե մենք ենք լուծելու, այլ գյուղացիները: Նրա լուծման ժամանակ էլ հենց սկսվելու յե պրոլետարիատի ու բուրժուազիայի պայքարը գյուղացիության մեջ: Ահա թե ինչու մենք կամ այդ հարցը բաց ենք թողնում (վոր նույնպես դուր չի գալիս մանր-բուրժուական ֆանտաստիկ ծրագրագործներին), կա՛մ մեր կողմից միայն ուղու սկիզբն ենք մատնանշում՝ ոտրեզկաները խլելու ձևով (վորի մեջ քիչ մտածող մարդիկ արգելք են տեսնում

շարժման դեմ, հակառակ սոցիալ-դեմոկրատիայի բազմաթիվ պարզաբանումներին):

Վորպեսզի արդի Ռուսաստանում անխուսափելի հողային ռեֆորմը հեղափոխական-դեմոկրատական դեր խաղա,— միայն մի միջոց կա․ այդ ռեֆորմը կատարել հենց իրենց գյուղացիների հեղափոխական նախաձեռնությամբ, հակառակ կալվածատերերի ու բյուրոկրատիայի, հակառակ պետության, այսինքն՝ կատարել հեղափոխական ճանապարհով: Հողի ամենավատթար բաշխումն այդպիսի ձևափոխումից հետո այժմյանից ավելի լավ կլինի բոլոր տեսակետներից: Յեվ այդ ուղին մենք մատնանշում ենք, անկյունաքար դարձնելով հեղափոխական գյուղացիական կոմիտեների պահանջը:

Սակայն դրա կողքին մենք ասում ենք գյուղական պրոլետարիատին. «Գյուղացիների ամենաարմատական հաղթությունը, վորին դու պետք է այժմ ոգնես բոլոր ուժերով, քեզ չի ազատելու աղքատությունից: Այդ նպատակի համար կա միայն մի միջոց. թե՛ արդյունաբերական, թե՛ գյուղատնտեսական ամբողջ պրոլետարիատի հաղթությունն ամբողջ բուրժուազիայի դեմ, սոցիալիստական հասարակության կառուցումը»:

Գյուղացի-տնտեսատերերի հետ միասին՝ կալվածատերերի ու կալվածատիրական պետության դեմ, քաղաքային պրոլետարիատի հետ միասին՝ ամբողջ բուրժուազիայի և բոլոր գյուղացի-տնտեսատերերի դեմ: Ահա գիտակից գյուղական պրոլետարիատի լոզունգը: Յեվ յեթե այս լոզունգը միանգամից չընդունեն, կամ նույնիսկ բոլորովին չընդունեն մուժիկ տնտեսատերերը, ապա դրա փոխարեն այդ կդառնա բանվորների լոզունգը, այդ անխուսափելիորեն կհաստատվի ամբողջ հեղափոխության կողմից, այդ մեզ կազատի մանր-բուրժուական պատրանքներից, այդ պարզ ու վորոշակի ձևով ցույց կտա մեզ մեր սոցիալիստական նպատակը:

«Пролетарий» № 20․
1905 թ․ հոկտեմբերի 10 (սեպտեմբերի 27):

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայում այժմ տեղի ունեցող գյուղացիական համագումարը նորից որակարգի մեջ է դնում այն հրատապ հարցը, թե ինչ վերաբերմունք պետք է ցույց տա սոցիալ-դեմոկրատիան դեպի գյուղացիական շարժումը: Ռուս մարքսիստների համար այդ հարցը միշտ հրատապ հարց է յեղել նրանց ծրագրերն ու տակտիկան վորոշելիս: Դեռ ռուս սոցիալ-դեմոկրատների ծրագրի առաջին նախագծում, վոր 1884 թվին արտասահմանում տպագրվել է «Աշխատանքի Ազատագրություն» խմբի կողմից, ամենալուրջ ուշադրություն է հատկացված գյուղացիական հարցին:

Այդ ժամանակներից սկսած չի կարելի հիշատակել մարքսիստների՝ ընդհանուր հարցերին նվիրված և վոչ մի խոշոր աշխատություն, մամուլի և վոչ մի սոցիալ-դեմոկրատական օրգան, վորը չկրկներ, չզարգացներ մարքսիստական հայացքներն ու լոզունգները, կիրառելով դրանք առանձին դեպքերի նկատմամբ:

Այժմ գյուղացիական շարժման վերաբերյալ հարցը հրատապ է դարձել վո՛չ միայն իր տեսական, այլև ամենաանմիջական գործնական նշանակությամբ: Այժմ պետք է մեր ընդհանուր լոզունգները դարձնել հեղափոխական պրոլետարիատի կողմից հեղափոխական գյուղացիությանն ուղղված անմիջական կոչեր: Այժմ հասել է րոպեն, յերբ գյուղացիությունը հանդես է գալիս վորպես ռուսական նոր կացութաձևի գիտակից ստեղծիչ: Յեվ գյուղացիության գիտակցականության աճումից է կախված հսկայական չափով՝ ռուսական մեծ հեղափոխության ընթացքն ու յելքը:

Ի՞նչ է ուզում գյուղացիությունը հեղափոխությունից: Ի՞նչ կարող է տալ հեղափոխությունը գյուղացիությանը. ահա յերկու հարց, վորը պարտավոր է լուծել ամեն մի քաղաքական գործիչ և մանավանդ ամեն մի գիտակից բանվոր, վոր քաղաքական գործիչ է այդ բառի լավագույն, բուրժուական պոլիտիկանությամբ չգռեհկացված իմաստով:

Գյուղացիությունը հող և ազատություն է ուզում: Այս մա-

սին յերկու կարծիք լինել չի կարող: Բոլոր գիտակից բանվորները բոլոր ուժերով պաշտպանում են հեղափոխական գյուղացիությանը: Բոլոր գիտակից բանվորներն ուզում են և աշխատում են, վորպեսզի գյուղացիությունն ստանա ամբողջ հողն ու ամբողջ ազատությունը: Ամբողջ հողը — այդ նշանակում է չբավարարվել վոչ մի մասնակի զիջումներով ու փշրանքներով, այդ նշանակում է նկատի ունենալ վո՛չ թե գյուղացիների համաձայնությունը կալվածատերերի հետ, այլ կալվածատիրական հողային սեփականության վոչնչացումը: Յեվ գիտակից պրոլետարիատի կուսակցությունը, սոցիալ-դեմոկրատիան, ամենավճռական ձևով արտահայտվել է այդ մասին. իր III համագումարում, վոր տեղի ունեցավ այս տարվա մայիսին, Ռ.Ս.-Դ.Բ.Կ. մի բանաձև ընդունեց, վորի մեջ ուղղակի խոսվում է, թե պետք է պաշտպանել գյուղացիական հեղափոխական պահանջները, կիպ մինչև բոլոր մասնատիրական հողերի կոնֆիսկացիան: Այս բանաձևը պարզ ցույց է տալիս, վոր գիտակից բանվորների կուսակցությունը պաշտպանում է ամբողջ հողի գյուղացիական պահանջը: Յեվ այս տեսակետից Ռ.Ս.-Դ.Բ.Կ. III համագումարի բանաձևի հետ միանգամայն զուգադիպում է իր բովանդակությամբ այն բանաձևը, վոր ընդունվել է մեր կուսակցության մյուս կեսի կոնֆերենցիայում:

«Ամբողջ ազատությունը», այդ նշանակում է այն չինովնիկների և պաշտոնյաների ընտրովիությունը, վորոնք վարում են հասարակական ու պետական գործերը: «Ամբողջ ազատությունը», դա նշանակում է այնպիսի պետական իշխանության լիակատար վոչնչացում, վորն ամբողջովին ու բացառապես կախված չի լինի ժողովրդից, վորն ընտրված չի լինի ժողովրդի կողմից, հաշվետու չի լինի ժողովրդի առաջ, չի փոփոխվի ժողովրդի ձեռքով: «Ամբողջ ազատությունը», դա նշանակում է, վոր վո՛չ թե ժողովուրդը պետք է յենթարկվի չինովնիկներին, այլ չինովնիկները պետք է յենթարկվեն ժողովրդին:

Իհարկե, հողի ու ազատության համար պայքարող գյուղացիներից դեռ բոլորը լիովին գիտակցաբար չեն վերաբերվում այդ պայքարին և չեն հասնում հանրապետության պահանջին: Սակայն գյուղացիական պահանջների դեմոկրատական ուղղությունը կասկածից վեր է: Ուստի այդ պահանջների պաշտպանությունը գյուղացիության համար ապահովված է պրոլետարիատի կողմից: Գյուղացիները պետք է իմանան, վոր քաղաքներում բարձրացված

կարմիր դրոշը պայքարի դրոշն է հանուն վո՛չ միայն արդյունաբերական ու գյուղական բանվորների մերձավոր ու կենսական պահանջների, այլ նաև հանուն միլիոնավոր ու տասնյակ-միլիոնավոր մանր հողագործների պահանջների:

Ճորտատիրական իրավունքի մնացորդները բոլոր ու ամեն տեսակ ձևերով մինչև այժմ անխնա ճնշումով խեղդում են ամբողջ գյուղացիական մասսային, և պրոլետարները կարմիր դրոշի տակ պատերազմ են հայտարարել այդ ճնշման դեմ:

Սակայն կարմիր դրոշը չի նշանակում միայն գյուղացիական պահանջների պաշտպանություն պրոլետարիատի կողմից: Այդ նշանակում է նաև պրոլետարիատի ինքնուրույն պահանջները: Այդ նշանակում է պայքար վո՛չ միայն հողի ու ազատության համար, այլ նաև պայքար մարդու ամեն մի շահագործման դեմ մարդու կողմից, պայքար ժողովրդական մասսաների աղքատության դեմ, պայքար կապիտալի տիրապետության դեմ: Յեվ ահա այստեղ մեր առջև յերկրորդ հարցն է կանգնում. ինչ կարող է տալ հեղափոխությունը գյուղացիությանը: Գյուղացիների շատ անկեղծ բարեկամներ (վորոնց թվում, օրինակ, սոցիալիստ-հեղափոխականները) հաշվի չեն առնում այդ հարցը, չեն նկատում դրա կարևորությունը: Նրանք կարծում են, թե բավական է դնել ու վճռել այն հարցը, թե ինչ են ուզում գյուղացիները, բավական է ստանալ հող և ազատություն պատասխանը: Այդ մեծ սխալ է: Լիակատար ազատությունը, բոլոր չինովնիկների, կիպ մինչև պետության գլխի լիակատար ընտրովիությունը, չեն վերացնի կապիտալի տիրապետությունը, չեն վոչնչացնի վո՛չ քչերի հարստությունը և վո՛չ էլ մասսաների աղքատությունը: Հողի մասնավոր սեփականության լիովին վոչնչացումը նույնպես չի վոչնչացնելու վո՛չ կապիտալի տիրապետությունը, վո՛չ մասսաների աղքատությունը: Ամբողջ ժողովրդին պատկանող հողի վրա ևս ինքնուրույն կերպով տնտեսություն կվարի միայն նա, ով կապիտալ ունի, միայն նա, ով ունի գործիքներ, անասուն, մեքենաներ, սերմացուի պաշարներ, ընդհանրապես դրամական միջոցներ և այլն: Իսկ նա, ով վոչինչ չունի, բացի բանվորական ձեռքերից, անխուսափելի մնալու յե կապիտալի ստրուկը, նույնիսկ դեմոկրատական հանրապետության ժամանակ, նույնիսկ հողն ամբողջ ժողովրդին պատկանելու դեպքում: Հողի «սոցիալիզացիայի» միտքն առանց կապիտալի սոցիալիզացիայի, հավասարաչափ հողօգտագործության հնարավորության միտքը կապիտալի և ապրանքային տնտեսության գոյության պայմաններում՝ մոլո-

քություն է: Սոցիալիզմը Յեվրոպայի համարյա բոլոր յերկրներում այնպիսի ժամանակներ է ապրել, յերբ այդ և դրա նման մոլորությունը բաժանում եր մեծամասնությունը: Բանվոր դասակարգի պայքարի փորձը բոլոր յերկրներում գործնականապես ցույց տվեց այդպիսի սխալի ամբողջ վտանգավորությունը, և դրանից լիովին ազատագրվել են այժմ Յեվրոպայի ու Ամերիկայի պրոլետար-սոցիալիստները:

Այսպիսով, գիտակից բանվորների կարմիր դրոշը նշանակում է նախ այն, վոր մենք բոլոր ուժերով պաշտպանում ենք գյուղացիական պայքարը հանուն ամբողջ ազատության և ամբողջ հողի: Յերկրորդ, այդ նշանակում է, վոր մենք կանգ չենք առնում դրա վրա, այլ ավելի հեռու յենք գնում: Մենք, բացի ազատության ու հողի համար պայքարելուց, սոցիալիզմի համար ենք պայքար մղում: Սոցիալիզմի համար մղվող պայքարը պայքար է կապիտալի տիրապետության դեմ: Այդ պայքարն ամենից առաջ մղում են վարձու բանվորները, վորոնք ուղղակի և ամբողջովին կախված են կապիտալից: Իսկ մանր տնտեսատերերն իրենք են մասամբ կապիտալի տեր, իրենք են հաճախ շահագործում բանվորներին: Ուստի մանր գյուղացիներից դեռ բոլորը սոցիալիզմի մարտիկների շարքերը չեն մտնում, այլ միայն նրանք, ովքեր վճռաբար ու գիտակցորեն անցնում են բանվորների կողմն ընդդեմ կապիտալի, ընդհանուր սեփականության կողմը՝ ընդդեմ մասնավոր սեփականության:

Ահա ինչու յեն սոցիալ-դեմոկրատներն ասում, վոր նրանք պայքարում են ամբողջ գյուղացիության հետ կալվածատերերի ու չինովնիկների դեմ, իսկ բացի դրանից, նրանք, քաղաքային պրոլետարները, գյուղական պրոլետարների հետ միասին պայքարում են կապիտալի դեմ: Հողի և ազատության համար մղվող պայքարը դեմոկրատական պայքար է: Կապիտալի տիրապետությունը վոչնչացնելու համար մղվող պայքարը սոցիալիստական պայքար է:

Ջե՛րմ վողջույն ուղարկենք, ուրեմն, գյուղացիական միությանը, վորը վորոշում է ընդունել համերաշխ ու հաստատ, անձնվիրաբար ու առանց տատանումների պայքար մղել հանուն լիակատար ազատության և հանուն ամբողջ հողի: Այդ գյուղացիներն իսկական դեմոկրատներ են: Նրանց սխալները դեմոկրատիզմի ու սոցիալիզմի խնդիրներն ըմբռնելու հարցում մենք պետք է համբերությամբ, տոկունորեն պարզաբանենք, վորպես դաշնակից-

ների, վորոնց հետ մեզ միացնում է ընդհանուր մեծ պայքարը: Այդ գյուղացիներն իսկական հեղափոխական դեմոկրատներ են, վորոնց հետ միասին մենք պետք է գնանք և կգնանք պայքարելու հանուն այժմյան հեղափոխության լիակատար հաղթանակի: Ընդհանուր գործադուլի պլանին, հետևյալ անգամ թե՛ քաղաքային բանվորների և թե՛ ամբողջ գյուղացիական չքավորության համերաշխ, միատեղ վոտքի կանգնելու վճռին,—այդ պլանին ու վճռին մենք ամենամեծ, լիակատար համակրանքով ենք վերաբերվում: Բոլոր գիտակից բանվորներն ամեն ջանք գործ կդնեն, վորպեսզի ոգնեն այդ պլանի իրագործմանը: Բայց վո՛չ մի դաշինք, նույնիսկ ամենաազնիվ ու վճռական հեղափոխական դեմոկրատների հետ, չի հարկադրի պրոլետարներին մոռանալու իրենց ե՛լ ավելի մեծ ու կարևոր նպատակը,—սոցիալիզմի համար, կապիտալի տիրապետությունը բոլորովին վոչնչացնելու, բոլոր աշխատավորներին ամեն մի շահագործումից ազատելու համար մղվող պայքարը: Առա՛ջ, բանվորնե՛ր ու գյուղացինե՛ր, դեպի ընդհանուր պայքար հանուն հողի, հանուն ազատության: Առա՛ջ, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի միջոցով համախմբված պրոլետարնե՛ր, դեպի պայքար հանուն սոցիալիզմի:

«Новая Жизнь» № 11, 1905 թ. նոյեմբերի 25 (12):

«ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ 1905—1907 Թ. Թ. ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԳՐՔԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ *

Այս աշխատությունը գրված է 1907 *թվականի վերջին:* 1908 *թվականին դա տպագրվել է Պետերբուրգում, բայց ցարական գրաքննությունը գրավեց և ոչնչացրեց այն: Անվնաս մնաց միայն մեկ օրինակ, որի վերջին մասը չկա (տվյալ հրատարակության* 269*-րդ էջից հետո), այնպես որ այս վերջին մասը լրացվել է այժմ:*

Ներկայումս հեղափոխությունն ագրարային հարցը Ռուսաստանում դրել է անչափելիորեն ավելի լայն, ավելի խորը և ավելի սուր, քան թե 1905—1907 *թվականներին: Առաջին հեղափոխության մեջ մեր կուսակցական ծրագրի պատմության հետ ծանոթանալը, յես հույս ունեմ, կօգնի ավելի ճիշտ հասկանալու այժմյան հեղափոխության խնդիրները:*

Հատկապես պետք է ընդգծել հետևյալը: Պատերազմն այնպիսի չլսված աղետներ է հասցրել պատերազմող երկրներին, իսկ միևնույն ժամանակ նա այնպիսի վիթխարի չափով ուժեղացրել է կապիտալիզմի զարգացումը, մոնոպոլիստական կապիտալիզմը փոխարկելով պետական-մոնոպոլիստականի, որ ո՛չ պրոլետարիատը, ո՛չ էլ հեղափոխական մանր-բուրժուական դեմոկրատիան չեն կարող *սահմանափակվել կապիտալիզմի շրջանակներով:*

Կյանքն արդեն այդ շրջանակներից ավելի հեռու յե գնացել, օրահերթի դնելով արտադրության և բաշխման կարգավորումը համապետական մասշտաբով, ընդհանուր աշխատանքային պարհակը, հարկադրական սինդիկացումը (միությունների մեջ համախմբելը) և այլն:

Այսպիսի իրադրության պայմաններում հողի նացիոնալիզացիան էլ ագրարային ծրագրի մեջ անխուսափելիորեն այլ դըրվածք է ստանում: Այն է՝ հողի նացիոնալիզացիան ո՛չ միայն բուրժուական հեղափոխության «վերջին խոսքն է», այլև՝ մի քայլ դեպի սոցիալիզմ: *Չի կարելի առանց այդպիսի քայլեր անելու պայքարել պատերազմի աղետների դեմ:*

Պրոլետարիատը, ղեկավարելով չքավորագույն գյուղացիությանը, հարկադրված է, մի կողմից, ծանրության կենտրոնը գյուղացիական դեպուտատների Խորհուրդներից փոխադրել գյուղական բանվորների դեպուտատների Խորհուրդների վրա, իսկ մյուս կողմից, պահանջել կալվածատիրական տնտեսությունների ինվենտարի նացիոնալիզացիա, ինչպես նաև նրանցից կազմել օրինակելի տնտեսություններ այդ վերջին Խորհուրդների վերահսկողության տակ:

*Ես, իհարկե, չեմ կարող ավելի մանրամասն կանգ առնել այստեղ այս կարևորագույն հարցերի վրա և հետաքրքրվող ընթերցողին պետք է մատնանշեմ ընթացիկ բոլշևիկյան գրականությունը և իմ հետևյալ բրոշյուրները. «Նամակներ տակտիկայի մասին» և «Պրոլետարիատի խնդիրները մեր հեղափոխության մեջ» («Պրոլետարական կուսակցության պլատֆորմի նախագիծը» *):*

1917 *թ. սեպտեմբերի* 28:

Տպագրված է 1917 թ. «Ս.-դ. ագրարային ծրագիրը 1905—1907 թ. թ. առաջին ռուսական հեղափոխության մեջ» գրքում:

* *Տե՛ս Երկերի* XI *հատորը, էջ* 329—498: Խմբ.:

* *Տե՛ս Երկերի* XX *հատորը, էջ* 90 *և* 111: Խմբ.:

1917 ԹԻՎ

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆՅՈՒԹԵՐ» ԲՐՈՇՅՈՒՐԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Ընթերցողների ուշադրությանն առաջարկվող սույն բրոշյուրում հավաքված են (ո՛չ թե հեղինակի, այլ բոլշևիկներից մեկի նախաձեռնությամբ) հողային հարցի վերաբերյալ՝ լայն տարածման համար պիտանի իմ հոդվածներից ու ճառերից գլխավորները: Այստեղ հավաքված հոդվածներն ու ճառերն ընդգրկում են 1917 *թվի ապրիլի վերջից մինչև հոկտեմբերի վերջը ընկած ժամանակաշրջանը: Հոդվածներին ավելացված են՝ Ռ.Ս.-Դ.Բ.Կ. (բոլշևիկների) ապրիլյան կոնֆերենցիայի բանաձևը և* 1917 *թ. նոյեմբերի* 8*-ին (հոկտեմբերի* 26*-ին) բանվորների և զինվորների դեպուտատների Խորհուրդների Համառուսական Յերկրորդ Համագումարի ընդունած դեկրետը հողի մասին: Այս յերկու փաստաթղթերի բնագրերն իրենց սկզբնական կերպարանքով (այսինքն* նախագծերը) *յես եմ գրել:*

Այդ փաստաթղթերն ու հոդվածներն ամբողջապես վերցրած տալիս են հեղափոխության կես տարվա ընթացքում բոլշևիզմի հայացքների զարգացման և այդ հայացքները գործնականում կիրառելու իսկական պատկերը:

Յես կարող եմ նույնպես վկայակոչել «Рабочий» *թերթում* (*Պետերբուրգ*, 11 *սեպտեմբերի* (29 *օգոստոսի*) 1917 *թ.* № 6) *տպագրված իմ՝* «Из дневника публициста. Крестьяне и рабочие» *հոդվածը: Այս հոդվածում մանրամասն կերպով վերլուծության է յենթարկված* «Известия Всероссийского совета крестьянских депутатов»*-ի սեպտեմբերի* 1*-ի (օգոստոսի* 19*-ի)* № 88*-ից առնված այն ընդհանուր գյուղացիական նակազը, որը մտել է* 1917 *թ. նոյեմբերի* 8*-ի (հոկտեմբերի* 26*-ի) հողի վերաբերյալ դեկրետի մեջ: Նոյեմբերի* 7*-ի (հոկտեմբերի* 25*-ի) հեղա-*

փոխումթյունից յերկու ամիս առաջ վերոհիշյալ հոդվածը բացատրում է «գյուղացուն բանվորի ուղղած ճառերի հիմնական գիծը փոխելու» անհրաժեշտությունը։

Ն. ԼԵՆԻՆ.

Պետերբուրգ

1917 *թ. դեկտեմբերի* 10 (*նոյեմբերի* 27)։

Տպագրված է 1917 թ. «Материалы по аграрному вопросу» բրոշյուրում։ Հրատ. «Прибой».

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԴԵԼԵԳԱՏՆԵՐԻՆ*

Ընկերնե՛ր—գյուղացիական դեպուտատնե՛ր։

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության (բոլշևիկների) Կենտրոնական Կոմիտեն, վորին յես պատիվ ունեմ պատկանելու, ուզում եր ինձ լիազորություն տալ ներկայացնելու մեր կուսակցությունը Գյուղացիական Համագումարում։ Հիվանդության պատճառով մինչև այժմ հնարավորություն չունենալով կատարել այդ հանձնարարությունը, յես ինձ թույլ եմ տալիս դիմել ձեզ այս բաց նամակով, վողջունելու համար գյուղացիության համառուսական միավորումը և համառոտակի ցույց տալու այն խորը տարաձայնությունները, վոր մեր կուսակցությունը բաժանում են «սոցիալիստ-հեղափոխականների» և «սոցիալ-դեմոկրատ մենշևիկների» կուսակցություններից։

Այդ խորը տարաձայնությունները վերաբերում են յերեք ամենակարևոր հարցերի՝ հողի, պատերազմի և պետության կառուցվածքի հարցերին։

Ամբողջ հողը պետք է պատկանի ժողովրդին։ Բոլոր կալվածատիրական հողերն առանց հատուցման պետք է անցնեն գյուղացիների ձեռքը։ Այս պարզ է։ Վեճն այն մասին է, թե պե՞տք է արդյոք գյուղացիները տեղերում անհապաղ վերցնեն ամբողջ հողը, կալվածատերերին չվճարելով վոչ մի վարձակալական վճար և չսպասելով Սահմանադիր ժողովին, թե այդպես չպետք է վարվեն։

Մեր կուսակցությունը կարծում է, վոր այդպես պետք է անել, և գյուղացիներին խորհուրդ է տալիս տեղերում անհապաղ վերցնեն ամբողջ հողը, այդ անելով ըստ կարելույն ավելի կազմակերպված ձևով, վոչ մի կերպ թույլ չտալով, վոր փչացնե

* 1917 *թ. հրատարակված «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրի մեջ վերնագրի տեքստը հետևյալն է. «Բաց նամակ գյուղացիական Դեպուտատների Համառուսական Խորհրդի դելեգատներին»։* Խմբ.։

գույքը, և գործ դնելով ամբողջ ջանքը, վոր հացի ու մսի արտադրությունն ավելանա, վորովհետև ճակատում զինվորները սարսափելի թշվառ վիճակում են: Սահմանադիր Ժողովը կսահմանի հողի վերջնական տնորինությունը, իսկ դրա նախնական տնորինումն այժմ, իսկույն ևեթ, գարնանացանի համար, միևնույն է, հնարավոր չէ այլ կերպ, քան տեղական հիմնարկությունների միջոցով, վորովհետև մեր ժամանակավոր Կառավարությունը, կալվածատերերի ու կապիտալիստների կառավարությունը, ձգձգում է Սահմանադիր Ժողովի հրավիրումը և մինչև այժմ նույնիսկ հրավիրման ժամկետը չի նշանակել:

Հողի նախնական տնորինումը կարող են անել միայն տեղական հիմնարկությունները: Դաշտերի ցանքն անհրաժեշտ է: Գյուղացիության մեծամասնությունը տեղերում միանգամայն կկարողանա հողը կազմակերպվածորեն տնորինել, ամբողջ հողը վարել ու ցանել: Այդ անհրաժեշտ է ճակատում զինվորների սնունդը բարելավելու համար: Ուստի Սահմանադիր Ժողովին սպասելն անթույլատրելի է: Մենք վոչ մի չափով չենք բացասում Սահմանադիր Ժողովի իրավունքը՝ վերջնականապես հաստատել հողի համաժողովրդական սեփականությունը և հողի տնորինման պայմանները: Սակայն նախապես, հենց հիմա, այս գարնանը, հողը պետք է տնորինեն իրենք գյուղացիները տեղերում: Զինվորները կարող են և պետք է ճակատից դելեգատներ ուղարկեն գյուղերը:

Այնուհետև: Վորպեսզի ամբողջ հողն ընկնի աշխատավորների ձեռքը, դրա համար անհրաժեշտ է քաղաքի բանվորների սերտ դաշինքն ամենաչքավորագույն գյուղացիների (կիսապրոլետարների) հետ: Առանց այդպիսի դաշինքի կապիտալիստներին չի կարելի հաղթել: Իսկ յեթե նրանց չհաղթենք, ապա ժողովրդի ձեռքը հողի վոչ մի անցում չի վերացնի ժողովրդական թշվառությունը: Հողը ուտել չի կարելի, իսկ առանց փողի, առանց կապիտալի վոչ մի տեղից չես կարող գործիքներ, անասուն, սերմացու ճարել: Կապիտալիստներին չէ և հարուստ մուժիկներին (սրանք էլ նույն կապիտալիստներն են) չէ, վոր պետք է հավատ ընծայեն գյուղացիները, այլ՝ միայն քաղաքի բանվորներին: Միայն նրանց հետ դաշինք կնքելով չքավորագույն գյուղացիները կարող են այնպես անել, վոր թե՛ հողը, թե՛ յերկաթուղիները, թե՛ բանկերը, թե՛ ֆաբրիկաները դառնան բոլոր աշխատավորների սեփականությունը, առանց դրան, մենակ հողը ժողովրդին անցնելով, չի կարելի վերացնել կարիքն ու թշվառությունը:

Ռուսաստանի մի քանի վայրերում բանվորներն արդեն սկսում են բանվորական հսկողություն (կոնտրոլ) սահմանել ֆաբրիկաների վրա: Բանվորների այդպիսի հսկողությունը գյուղացիների համար ձեռնտու է, դա արտադրության ավելացում և պրոդուկտների եժանացում կտա: Գյուղացիները պետք է ամեն կերպ աջակցեն բանվորների այդպիսի նախաձեռնությանը և չհավատան բանվորների դեմ կապիտալիստների զրպարտություններին:

Յերկրորդ հարցը պատերազմի հարցն է:

Այս պատերազմը զավթողական է: Դա մղում են բոլոր յերկրների կապիտալիստներն իրենց զավթողական նպատակների համար, իրենց շահույթներն ավելացնելու համար: Աշխատավոր ժողովրդին այս պատերազմը վոչ մի դեպքում բացի կործանումից, սարսափներից, ավերածություններից, վայրենացումից ուրիշ վոչինչ չի բերում և չի էլ կարող բերել: Դրա համար էլ մեր կուսակցությունը, գիտակից բանվորների կուսակցությունը, չքավորագույն գյուղացիների կուսակցությունը վճռաբար և անպայմանորեն դատապարտում է այս պատերազմը, հրաժարվում է մի յերկրի կապիտալիստներին մյուս յերկրի կապիտալիստների հանդեպ արդարացնելուց, հրաժարվում է վորևէ յերկրի կապիտալիստներին աջակցելուց, ջանում է շուտափույթ կերպով վերջ տալ պատերազմին՝ բոլոր յերկրներում կապիտալիստներին տապալելու միջոցով, բոլոր յերկրներում բանվորական հեղափոխության միջոցով:

Մեր այժմյան, նոր, ժամանակավոր Կառավարության մեջ 10 մինիստր պատկանում են կալվածատերերի ու կապիտալիստների կուսակցություններին, իսկ 6-ը—«նարոդնիկների» («սոցիալիստ-հեղափոխականների») և «մենշևիկ սոցիալ-դեմոկրատների» կուսակցություններին: Մենք համոզված ենք, վոր նարոդնիկներն ու մենշևիկները խորը և ճակատագրական սխալ են գործում, յերբ մտնում են կապիտալիստների կառավարության մեջ և համաձայնվում են ընդհանրապես աջակցել նրան: Այնպիսի մարդիկ, ինչպես Ծերեթելին ու Չերնովն են, հույս ունեն, վոր կապիտալիստներին կդրդեն, վոր նրանք ավելի շուտ և ավելի ազնվորեն վերջացնեն այս զավթողական պատերազմը: Բայց նարոդնիկների ու մենշևիկների կուսակցությունների այդ առաջնորդները սխալվում են՝ իրականում նրանք կապիտալիստներին օգնում են պատրաստելու ռուսական զորքերի հարձակումը Գերմանիայի դեմ, այսինքն՝ ձգձգելու պատերազմը, ավելացնե-

լու ռուս ժողովրդի կողմից պատերազմին տված հյուծված-ծանր զոհերը:

Մենք համոզված ենք, վոր բոլոր յերկրների կապիտալիստները խաբում են ժողովրդին, շուտափույթ և արդարացի հաշտություն խոստանալով, իսկ իրականում յերկարաձգելով զավթողական պատերազմը: Ռուս կապիտալիստները, վորոնց ձեռքումն էր հին ժամանակավոր Կառավարությունը և վորոնց ձեռքումն է, առաջվա պես, նոր կառավարությունը, չկամեցան մինչև իսկ հրապարակել այն գաղտնի թալանչիական պայմանագրերը, վոր կնքել էր նախկին ցարը, Նիկոլայ Ռոմանովը, Անգլիայի, Ֆրանսիայի և այլ յերկրների կապիտալիստների հետ այն նպատակով, վոր թյուրքերից խլի Կոստանդնուպոլիսը, ավստրիացիներից խլի Գալիցիան, թյուրքերից՝ Հայաստանը և այլն: Ժամանակավոր Կառավարությունը հաստատել և հաստատում է այդ պայմանագրերը:

Մեր կուսակցությունը գտնում է, վոր դրանք նույնպիսի հանցավոր, թալանչիական պայմանագրեր են, ինչպես և ավազակների՝ գերմանական կապիտալիստների և նրանց ավազակ Վիլհելմ կայսեր պայմանագրերն իրենց դաշնակիցների հետ:

Կապիտալիստների այդպիսի կողոպտիչ նպատակներին հասնելու համար բանվորների ու գյուղացիների արյունը չպետք է թափվի:

Հարկավոր է շուտափույթ վերջացնել այս հանցավոր պատերազմը, այն էլ ո՛չ թե սեպարատ (առանձին) հաշտությամբ Գերմանիայի հետ, այլ ընդհանուր հաշտությամբ, այն էլ վո՛չ թե կապիտալիստների հաշտությամբ, այլ աշխատավոր մասսաների հաշտությամբ ընդդեմ կապիտալիստների: Դրա համար մեկ ուղի կա՝ վողջ պետական իշխանության անցումն ամբողջությամբ Բանվորական, Զինվորական ու Գյուղացիական Դեպուտատների Խորհուրդների ձեռքը թե՛ Ռուսաստանում, թե՛ մյուս յերկրներում: Միայն այդպիսի խորհուրդներն են, վոր իրականում ի վիճակի յեն խանգարելու կապիտալիստներին՝ ժողովրդին խաբելու, չթողնելու, վոր պատերազմը յերկարաձգեն կապիտալիստները:

Յեվ այստեղ յես մոտեցա իմ նշած հարցերից յերրորդին ու վերջինին՝ պետության կառուցվածքի հարցին:

Ռուսաստանը պետք է լինի դեմոկրատական հանրապետություն: Դրա հետ համաձայն է մինչև իսկ մեծամասնությունը կալվածատերերի ու կապիտալիստների, վորոնք միշտ պաշտպա-

նում էին միապետությունը, բայց այժմ համոզվել են, վոր Ռուսաստանում ժողովուրդը վոչ մի կերպ թույլ չի տա միապետության վերականգնումը: Հիմա կապիտալիստներն իրենց բոլոր ջանքերն ուղղել են այն բանին, վոր հանրապետությունը Ռուսաստանում վորքան կարելի յե շատ նմանվի միապետությանը և կարելի լինի ըստ կարելույն հեշտ կերպով նորից փոխարկել միապետության (դրա օրինակները բազմիցս յեղել են շատ յերկրներում): Դրա համար կապիտալիստներն ուզում են պահպանել ժողովրդից վեր կանգնած չինովնիկությունը, վոստիկանությունը և մշտական բանակը, վորը ժողովրդից անջրպետված է և գտնվում է վոչ-ընտրովի գեներալների ու սպաների հրամանատարության տակ: Իսկ գեներալներն ու սպաները, յեթե նրանք ընտրովի չեն, գրեթե միշտ էլ կլինեն կալվածատերերից ու կապիտալիստներից: Այդ հայտնի յե անգամ աշխարհիս բոլոր հանրապետությունների փորձից:

Մեր կուսակցությունը, գիտակից բանվորների ու չքավորագույն գյուղացիների կուսակցությունը, դրա համար էլ ձգտում է ուրիշ տեսակի դեմոկրատական հանրապետության: Մենք այնպիսի հանրապետություն ենք ուզում, վորի մեջ չլինի ժողովրդին ծաղրանքի յենթարկող վոստիկանությունը. վորի բոլոր չինովնիկները, վարից-վեր, լինեն միայն ընտրովի և ուզած ժամանակ ժողովրդի պահանջով փոփոխելի, վոր նրանց ռոճիկը բարձր չլինի լավ բանվորի վարձատրությունից. վոր բանակում ամբողջ պետերը նույնպես ընտրովի լինեն և վոր մշտական բանակը, վորն անջատված է ժողովրդից, դրված է ժողովրդին խորթ դասակարգերի հրամանատարության տակ, փոխարինվի ժողովրդի ընդհանուր զինումով, համաժողովրդական միլիցիայով:

Մենք ուզում ենք այնպիսի հանրապետություն, վորպեսզի պետության մեջ ամբողջ իշխանությունը, վարից-վեր, ամբողջովին ու բացառապես պատկանի Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլ Դեպուտատների Խորհուրդներին:

Բանվորներն ու գյուղացիները բնակչության մեծամասնությունն են: Իշխանությունը պետք է գտնվի նրանց, և վոչ թե կալվածատերերի, վոչ թե կապիտալիստների ձեռքում:

Բանվորներն ու գյուղացիները բնակչության մեծամասնությունն են: Իշխանությունն ու կառավարումը պետք է լինի նրանց խորհուրդների և վոչ թե չինովնիկների ձեռքում:

Ահա մեր հայացքները, ընկեր գյուղացիական դեպուտատ-

ներ։ Մենք հաստատապես համոզված ենք, որ փորձը շուտով ժողովրդի ամենալայն մասսաներին ցույց կտա նարոդնիկների ու մենշևիկների քաղաքականության սխալը։ Փորձը շուտով մասսաներին ցույց կտա, որ կապիտալիստների հետ համաձայնության գալու միջոցով չի կարելի փրկել Ռուսաստանը, որը, ինչպես և Գերմանիան, ինչպես և մյուս յերկրները, գտնվում է կործանման յեզրին, չի կարելի փրկել պատերազմից տանջված ժողովուրդներին։ Բոլոր ժողովուրդները կարող են փրկվել միայն այն դեպքում, յեթե ամբողջ պետական իշխանությունն ուղղակի անցնի ազգաբնակչության մեծամասնության ձեռքը։

Ն. ԼԵՆԻՆ

1917 թ. մայիսի 7։
«Солдатская Правда» № 19,
1917 թ. մայիսի 24 (11)-ին։

ՃԱՌ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ 1917 Թ. ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ (ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ)*

Ընկերնե՛ր, այն բանաձևը, որ Գյուղացիական Խորհրդի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անունից պատիվ ունեմ առաջարկելու ձեր ուշադրությանը, տպագրված ու բաժանված է դելեգատներին։ Յեթե բոլորը չեն ստացել այդ բանաձևը, ապա մենք միջոցներ ձեռք կառնենք, որ վաղն իսկ այդ բանաձևը տպագրվի լրացուցիչ քանակով բոլոր ցանկացողներին բաժանելու համար։

Հակիրճ զեկուցման մեջ յես, իհարկե, կարող եմ կանգ առնել միայն գլխավոր, հիմնական, գյուղացիությանն ու բանվոր դասակարգին ավելի հետաքրքրող հարցերի վրա։ Ով ավելի յե հետաքրքրվում այդ հարցի մանրամասնությամբ, նրան կարող եմ հանձնարարել մեր կուսակցության՝ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական (բոլշևիկների) Կուսակցության բանաձևը, որ հրատարակված է իբր հավելված «Солдатская Правда» թերթի № 13-ի և շատ անգամ լուսաբանված է մեր «Правда» լրագրում։ Իսկ այժմ յես ստիպված եմ սահմանափակվել իմ բանաձևի ամենակարևոր, ամենավիճելի կամ թյուրիմացություններ հարուցող կետերի և ագրարային հարցին վերաբերյալ մեր կուսակցական ծրագրի լուսաբանությամբ։ Այդպիսի վիճելի կամ թյուրիմացություն հարուցող առաջին կետերից մեկն այն հարցն է, որ յերեկ կամ մեկել օրը շոշափվել է Գլխավոր Հողային Կոմիտեյի այն նիստում, որի մասին, հավանորեն, դուք բոլորդ լսել կամ կարդացել եք յերեկվա կամ մեկել օրվա լրագրերում։ Գլխավոր Հողային Կոմիտեյի նիստին ներկա յե յե-

* 1917 թ. հրատարակած «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրի մեջ վերնագրի տեքստը հետևյալն է. «Ընկեր Ն. Լենինի՝ 1917 թ. մայիսի 22-ին Գյուղացիների Դեպուտատների Համառուսական Խորհրդում արտասանած ճառը»։ Խմբ.։

դել մեր կուսակցության ներկայացուցիչներից մեկը, Կենտրոնական Կոմիտեյի իմ ընկեր Սմիլգան: Այնտեղ նա առաջարկ մըտցրեց այն մասին, վոր Գլխավոր Հողային Կոմիտեն արտահայտվի հօգուտ այն բանի, վոր գյուղացիությունն անհապաղ կազմակերպված ձևով գրավի կալվածատիրական հողերը, և այդ առաջարկի համար ընկեր Սմիլգայի վրա մի շարք առարկություններ տեղացին: (Մի ձայն. «Այստեղ էլ»): Ասում են այժմ ինձ, թե այստեղ էլ, այդ առաջարկի դեմ նույնպես, շատ ընկերներ հանդես կգան: Ուրեմն յես ավելի մեծ հիմք ունեմ կանգ առնելու մեր ծրագրի այդ կետի պարզաբանման վրա, վորովհետև ինձ թվում է, թե բոլոր առարկությունների, կարծում եմ մեծ մասը, վոր արվում են մեր ծրագրի դեմ, հիմնված են թյուրիմացության կամ մեր հայացքների սխալ լուսաբանման վրա:

Ի՞նչ են ասում մեր կուսակցության բոլոր բանաձևերը, մեր որգանի բոլոր հոդվածները, մեր «Правда» լրագիրը: Մենք ասում ենք, վոր ամբողջ հողն, առանց բացառության, ամբողջ ժողովրդի սեփականությունը պիտի դառնա: Այդ յեզրակացությանն ենք յեկել մենք 1905 թվականի հատկապես գյուղացիական շարժման ուսումնասիրման հիման վրա, առաջին և յերկրորդ Պետական Դումաների գյուղացի դեպուտատների հայտարարությունների ուսումնասիրման հիման վրա, վորտեղ համեմատաբար ազատ, իհարկե, համեմատաբար, կարող եյին խոսել գյուղացիական բազմաթիվ դեպուտատներ՝ Ռուսաստանի բոլոր ծայրերից:

Ամբողջ հողը պիտի ամբողջ ժողովրդի սեփականությունը լինի: Այստեղից արդեն բղխում է, թե պաշտպանելով կալվածատիրական հողերի անհապաղ ու ձրի անցումը տեղական գյուղացիների ձեռքը, մենք վոչ մի դեպքում չենք պաշտպանում այդ հողերի զավթումն ի սեփականություն, վոչ մի դեպքում չենք պաշտպանում այդ հողերի բաժանքը: Մենք յենթադրում ենք, թե ամբողջ հողը տեղական և գյուղացիական դելեգատների մեծամասնության վորոշումով պիտի մեկ ցանքի համար վերցնի տեղական գյուղացիությունը: Մենք վոչ մի դեպքում կողմնակից չենք, վոր այդ հողն այն գյուղացիների սեփականությունը դառնա, վորոնք այժմ վերցնում են մեկ անգամ ցանելու համար: Մեր առաջարկի դեմ նման բոլոր առարկությունները, վոր մշտապես առիթ եմ ունեցել լսել և պատահել կապիտալիստական լրագրերի եջերում, հիմնված են ուղղակի մեր հայացքների սխալ մեկնաբանության

վրա: Քանի վոր մենք ասել ենք, ու յես կրկնում եմ—մենք այդ ասել ենք մեր բոլոր բանաձևերում, թե հողը պիտի ամբողջ ժողովրդի սեփականությունը լինի և նրան անցնի ձրիաբար—ապա պարզ է, վոր այդ հողի վերջնական բաշխման տնօրինությունը, հողային հարաբերությունների վերջնական տնօրինությունը պետք է կատարի միայն կենտրոնական պետական իշխանությունը, այսինքն՝ Սահմանադիր Ժողովը կամ Համառուսական Խորհուրդների Խորհուրդը, յեթե գյուղացիական ու բանվորական մասսաները մի այդպիսի իշխանություն՝ Խորհուրդների Խորհուրդ ստեղծեն: Այս մասին վոչ մի տարաձայնություն չկա:

Տարաձայնություններն սկսվում են հետագայում, յերբ մեզ առարկում են և ասում. «յեթե այդպես է, ապա կալվածատիրական հողերի ամեն մի անհապաղ, անվճար անցումը գյուղացիության ձեռքը՝ ինքնագլխություն կլինի»: Ահա այս հայացքը, վորը շատ ավելի հստակ, շատ ավելի հեղինակավոր ձևով, առավելագույն ծանրակշռությամբ ասաց հողագործության մինիստր Շինգարյովն իր հայտնի հեռագրում, այդ հայացքը մենք համարում ենք ամենասխալը, գյուղացիության համար անձեռնտու, հողագործների համար անձեռնտու, յերկիրը հացով ապահովելու համար անձեռնտու և անարդարացի: Յես ինձ թույլ կտամ կարդալու այդ հեռագիրը, վորպեսզի ցույց տամ, թե մենք ամենից շատ ինչի դեմ ենք ուղղում մեր առարկությունները:

«Հողային հարցի ինքնուրույնաբար լուծումն անթույլատրելի յե առանց ընդհանուր պետական օրենքի: Ինքնագլխությունը պետական աղետի կհասցնի... Հողային հարցի օրենքով լուծումը—Սահմանադիր Ժողովի գործն է: Ներկայումս տեղերում վոլոստային պարենավորման կոմիտեներին կից հողագործների և հողատերերի կողմից կազմված են հաշտարար հողագործական կամերաներ»:

Ահա կառավարության՝ այս հարցին վերաբերող հայտարարության հիմնական հատվածը: Յեթե դուք ծանոթանաք Գլխավոր Հողային Կոմիտեյի յերեկ թե յերեք օր առաջ ընդունած այն բանաձևին, վոր այս հարցին է վերաբերում, մի բանաձև, վորը նույնպես այս օրերին ընդունել է Պետական Դումայի անդամների խորհրդակցությունը, ապա կտեսնեք, վոր մատնանշված յերկու բանաձևերը բղխում են նույն հայացքից: Նրանք ինքնագլխության մեջ են մեղադրում այն գյուղացիներին, վորոնք կամենում են իրագործել հողի անհապաղ ու ձրի հանձնումը տեղական գյուղացիական կոմիտեներին՝ յելակետ ունենալով այն, թե միայն գյուղացիների ու հողատերերի, հողագործների ու հողատերերի հոժարակամ համաձայնությունը, թե երբ միայն դա չի

համապատասխանում ընդհանուր պետական կարիքներին ու շահերին: Ահա այդ ենք ժխտում մենք, դրա դեմ ել վիճում ենք:

Քննենք այն առարկությունները, վոր արվում են մեր առաջարկի դեմ: Սովորական առարկություններ են, թե Ռուսաստանում հողը խիստ անհավասարաչափ է բաշխված թե՛ առանձին փոք-մեծ միավորների միջև, ինչպես գյուղն ու վոլոստը, թե՛ մեծ միավորների միջև, ինչպիսին են նահանգն ու մարզը: Ասում են, վոր յեթե տեղի բնակչությունը մեծամասնությամբ ընդունած իր վորոշումներով, հաշվի չառնելով կալվածատերերի կամքը, հողն իր ձեռքն առներ և այն ել անվճար, ապա անհավասարաչափությունը կմնար, կամ թե նույնիսկ այդ անհավասարաչափությունն ամրապնդվելու վտանգ կառաջանար: Մենք դրան պատասխանում ենք, թե նման փաստարկը հիմնված է թյուրիմացության վրա: Հողի բաշխման անհավասարությունը միևնույն է կմնա, մինչև վոր Սահմանադիր ժողովը կամ կենտրոնական պետական իշխանությունն առհասարակ վերջնականապես նոր կարգ չհաստատի: Մինչև այդ կարգը չհաստատվի,— միևնույն բանն է՝ ըստ գյուղացիների տեսակետի կլուծվի այդ խնդիրը, թե ըստ կալվածատերերի, արդյոք այնպես, ինչպես մենք ենք ցանկանում, վոր հողն անհապաղ գյուղացիության ձեռքն անցնի, կամ թե ինչպես կալվածատերերն են ցանկանում, վորոնք պատրաստ են հողը կապալով տալ բարձր վարձով, այն պայմանով, վոր գյուղացի-կապալառուն և կալվածատերը պահպանեն իրենց իրավունքները, այդպե՛ս լինի, դա, թե այլ կերպ,— անհավասարաչափ բաշխումը կմնա: Մեր դեմ յեղած այս առարկությունն ակնհայտնի կերպով սխալ և անարդարացի յե: Մենք խոսում ենք այն մասին, թե անհրաժեշտ է, վորքան կարելի յե շուտ, կենտրոնական պետական իշխանություն ստեղծել, վորը վոչ միայն հենվեր գյուղացիության մեծամասնության կամքի ու վորոշումների վրա, այլև ուղղակի այդ մեծամասնության կարծիքն արտահայտեր: Այս մասին վեճ չկա: Յեթե մենք առարկություններ ենք լսում բոլշևիկների դեմ, հարձակումներ նրանց վրա կապիտալիստական լրագրերի կողմից, պնդումներ—իբր մենք անարխիստներ ենք,—մենք այդ ժխտում ենք ամենավճռական կերպով և այդ հարձակումները չարամիտ սուտ ու զրպարտության տարածումն ենք համարում:

Անարխիստներ են կոչվում նրանք, ովքեր ժխտում են պետական իշխանության անհրաժեշտությունը, իսկ մենք ասում

ենք, թե իշխանությունն անպայման անհրաժեշտ է վոչ միայն այժմ Ռուսաստանի համար, այլև ամեն մի պետության համար, վորը թեկուզ ուղղակի սոցիալիզմին անցնելիս լիներ: Անպայման ամենամո՛ւր իշխանություն է անհրաժեշտ: Մենք ցանկանում ենք միայն, վոր այդ իշխանությունն ամբողջապես և բացառապես բանվորների, զինվորների և գյուղացիական դեպուտատների մեծամասնության ձեռքում լինի: Ահա ինչով ենք մենք տարբերվում մյուս կուսակցություններից: Մենք վոչ մի կերպ չենք ժխտում ամուր պետական իշխանության անհրաժեշտությունը. մենք միայն ասում ենք, թե տեղական գյուղացիական կոմիտեյի մեծամասնությամբ ընդունված վորոշումով կալվածատիրական ամբողջ հողը պիտի գյուղացիների ձեռքն անցնի անվճար, այն պայմանով, վոր գույքի վոչ մի փչացում չլինի: Դա շատ պարզ կերպով մատնանշված է մեր բանաձևում: Մենք վճռականորեն մերժում ենք մեր հայացքի դեմ յեղած առարկությունները, իբր թե դա ինքնագլխություն է:

Վո՛չ, մեր կարծիքով, յեթե կալվածատերերը հողը պահում են իրենց ոտքին կամ վճար են վերցնում դրա դիմաց, ահա դա յե ինքնագլխություն, իսկ յեթե գյուղացիության մեծամասնությունն ասում է, թե կալվածատիրական հողը չպետք է մնա կալվածատիրոջ ձեռքին, թե այդ կալվածատերերից, հողատերերից տասնյակ տարիների ընթացքում, դարերի ընթացքում գյուղացիությունը բացի ճնշումից ուրիշ բան չի տեսել, դա ինքնագլխություն չե, դա իրավունքի վերականգնում է և իրավունքի վերականգնման գործում չի կարելի սպասել: Յեթե այժմ իսկ հողը գյուղացիներին հանձնենք, մարզերի միջև յեղած անհավասարաչափությունը վերացնել չի կարելի—դա անվիճելի յե, բայց այդ անհավասարաչափությունը վոչ վոք չի վերացնի, քանի չի գումարվել Սահմանադիր ժողովը: Յեթե Շինգարյովին հարցնենք, վորը մեզ առարկում է և պաշտոնական թղթերում մեր հայացքների կողմնակիցներին հայհոյում «ինքնագլխության» համար, յեթե հարցնենք, թե ինչ է առաջարկում այդ անհավասարաչափության դեմ, նա պատասխան տալ չի կարող: Վոչի՛նչ չի առաջարկում և վոչի՛նչ ել չի կարող առաջարկել:

Նա ասում է—«գյուղացիների հոժարակամ համաձայնության կալվածատերերի հետ»: Ի՞նչ է նշանակում այդ: Յես յերկու հիմնական թիվ կբերեմ, վոր վերաբերում են հողատիրությանը՝ Յեվրոպական Ռուսաստանում: Այդ թվերը ցույց են տալիս, վոր ռուսական գյուղի մի ծայրին կանգնած են ամենահարուստ կալ-

վածատերերը, այդ թվում նաև Ռոմանովները, ամենից հարուստ և վատթար կալվածատերերը, իսկ մյուս ծայրին կանգնած են չքավորագույն գյուղացիները: Յես յերկու թիվ կբերեմ, վորպեսզի դուք տեսնեք, թե ինչ նշանակություն ունի Շինգարյովի այդ քարոզը, բոլոր կալվածատերերի ու կապիտալիստների այդ քարոզը: Ահա այդ յերկու թիվը: Յեթե վերցնենք Յեվրոպական Ռուսաստանի ամենահարուստ կալվածատերերին, ապա դուրս կգա, վոր դրանցից խոշորագույնները, վորոնք թվով 30·000 մարդուց քիչ են, ունեն մոտ 70 միլիոն դեսյատին հող: Այդ կնշանակի՝ 2000 դեսյատինից ավելի յե ընկնում նրանցից յուրաքանչյուրին: Յեթե վերցնենք հարուստ ռուս կալվածատերերի ամենավերին խավերն, առանց դասային խտրության (այստեղ մեծամասնությունն ազնվական է, բայց կան և այլ հողատերեր), նրանք 30·000 են, և ունեն 70 միլիո՛ն դեսյատին: Իսկ յեթե վերցնենք չքավորագույն գյուղացիությունը, 1905 թվականի նույն մարդահամարի տվյալներով, վորը տալիս է ամբողջ Ռուսաստանում միատեսակ ժողոված վերջին տեղեկությունները,— տեղեկություններ, վորոնք ըստ եյության շատ մեծ վստահության արժանի չեն, ինչպես և ամեն մի վիճակագրություն, վորը ցարի որով, ցարական չինովնիկներն են ժողովել, բայց և այնպես, տալիս է ճշմարտությանն ավելի մոտիկ, ավելի համեմատելի տվյալներ,—յեթե վերցնենք չքավորագույն գյուղացիությունը, կստանանք 10 միլիոն ծուխ, և նրանք մոտ 70—75 միլիոն դես. հող ունեն: Այս նշանակում է.—մեկը 2 հազար դեսյատինից ավելի ունի, իսկ մյուսը—յոթը և կես դեսյատին մի ծխին: Յեվ ասում են, ինքնագլխություն կլինի, յեթե գյուղացիները հոժարակամ համաձայնության չգնա՛ն: Բայց ի՞նչ է նշանակում այդ «հոժարակամ համաձայնությունը»: Դա նշանակում է, թե կալվածատերերը դուցե հողը զիջեն լավ կապալավարձով, բայց վոչ վոքի անվճար չեն տա: Մի՞թե արդարացի յե դա: Վո՛չ, արդարացի չէ՛: Ձեռնտո՞ւ յե արդյոք դա գյուղական բնակչությանը: Վո՛չ, ձեռնտու չէ: Թե հողային սեփականությունը վերջնականապես ինչ ձևով կհաստատվի, դա ապագա կենտրոնական իշխանության գործն է, բայց այժմ անհապաղ առանց փրկանավճարի կալվածատիրական հողը պիտի անցնի գյուղացիության ձեռքը կազմակերպված գավթման պայմանով: Գլխավոր Հողային Կոմիտեյում մինիստր Չերնովը, առարկելով իմ ընկեր Սմիլգային, ասաց, թե «կազմակերպված գավթումը»,—դա յերկու բառ է, վորոնք իրար վոչնչացնում են. յեթե գավթումն է, նշանակում

է կազմակերպված չէ, իսկ յեթե կազմակերպված է—նշանակում է գավթում չէ: Յես կարծում եմ, վոր այդ քննադատությունը սխալ է: Յես կարծում եմ, վոր գյուղացիությունը, յեթե նա մեծամասնությամբ վորոշում է ընդունում գյուղում կամ վոլոստում, գավառում, նահանգում,—իսկ վորոշ նահանգներում, յեթե վոչ բոլորում, գյուղացիական համագումարները իշխանություն են կազմել տեղերում, վորը ներկայացնում է մեծամասնության շահերն ու կամքը, մի իշխանություն, վորը ներկայացնում է բնակչության, այսինքն՝ հողագործների մեծամասնության կամքը, յերբ գյուղացիներն այդպիսի իշխանություն են ստեղծում տեղերում, նրա վորոշումներն այն իշխանության վորոշումներն են, վորին գյուղացիները կճանաչեն: Դա այն իշխանությունն է, դեպի վորը գյուղացիական բնակչությունը տեղերում չի կարող կատարյալ հարգանք չտածել: Թող գյուղացին իմանա, վոր նա վերցնում է կալվածատիրական հողը, յեթե նա վճարում է, ապա թող վճարի գյուղացիական, գավառական դրամարկղներին, թող նա իմանա, վոր այդ փողերը կերթան բարելավելու գյուղատնտեսությունը, կերթան սալարկների, ճանապարհների և այլնի վրա: Թող նա իմանա, թե այն հողը, վոր վերցնում է, իրենը չէ, բայց կալվածատիրական էլ չէ, այլ համաժողովրդական հողն է վերցնում, վորի մասին Սահմանադիր Ժողովը վերջնական տնօրինություն կանի: Այս պատճառով էլ հեղափոխության հենց սկզբից, հենց առաջին հողային կոմիտեյի կազմակերպումից սկսած կալվածատերը հողի վրա վոչ մի իրավունք չպետք է ունենա և վորևէ դրամական գանձում չպիտի կատարվի այդ հողի դիմաց:

Մեր և մեր հակառակորդների հիմնական հակասությունն այն բանի ըմբռնման մեջ է, թե ինչ է կարգը և ինչ է որենքը: Մինչև որս այնպես են կարծել, թե կարգը և որենքը՝ դա այն է, ինչ հարմար է կալվածատերերին ու չինովնիկներին, իսկ մենք պնդում ենք, թե կարգն ու որենքն այն է, ինչ հարմար է գյուղացիության մեծամասնությա՛նը: Քանի դեռ չկա Խորհուրդների Համառուսական Խորհուրդ, քանի գոյություն չունի Սահմանադիր Ժողով, մինչ այդ՝ ամեն մի իշխանություն տեղերում—գավառային կոմիտեներ, նահանգային կոմիտեներ—գերագույն կարգն ու որենքն են: Մենք ինքնագլխություն ենք անվանում այն, վոր մեկ կալվածատեր՝ հին դարավոր իրավունքների հիման վրա, «հոժարակամ» համաձայնություն է պահանջում յերեք հարյուր գյուղացիական ընտանիքներից, վորոնցից յուրաքան-

հյուրը տակ ու գլուխ 7 և կես դեսյատին հո՞ղ ունի: Մենք ասում ենք. «Թող վորոշումները մեծամասնությամբ ընդունվեն. մենք ուզում ենք, վոր այժմ, չկորցնելով վոչ մի ամիս, վոչ մի շաբաթ, վոչ մի օր, գյուղացիներն ստանա՛ն կալվածատիրական հողերը»:

Մեզ առարկում են. «Ձե՞ վոր յեթե գյուղացիներն այժմ իսկ զավթեն հողը, ապա, հավանորեն, կզավթեն ավելի հարուստները, վորոնք ունեն անասուն, գործիքներ և այլն. այս պատճառով արդյոք դա վտանգավոր չի՞ լինի հենց չքավորագույն գյուղացիության տեսակետից»: Ընկերնե՛ր, այդ փաստարկի վրա յես պիտի կանգ առնեմ, վորովհետև մեր կուսակցությունը մեր բոլոր վորոշումներում, ծրագրերում և ժողովրդին արած դիմումներում հայտարարում է.—«մենք վարձու բանվորների ու չքավորագույն գյուղացիների կուսակցություն ենք, նրանց շահերն ենք ցանկանում պաշտպանել, նրանց միջոցով և միայն նրանց միջոցով, այդ դասակարգերի միջոցով է, վոր մարդկությունը կարող է դուրս գալ այն սարսափներից, վորոնց մեջ գցել է նրանց կապիտալիստների այս պատերազմը»:

Այս պատճառով այն առարկությունների նկատմամբ, իբր թե մեր վորոշումներն անհամապատասխան են չքավորագույն գյուղացիների շահերին, նման առարկությունների նկատմամբ մենք խիստ ուշադիր ենք և հրավիրում ենք նրանց վրա առանձնապես ուշադրությամբ կանգ առնել, վորովհետև այդ առարկությունները վերաբերում են գործի բուն էությանը, հարցի հենց արմատին: Գործի էությունը հենց այն հարցն է, թե տեղի ունեցող հեղափոխության մեջ ինչպե՛ս կարելի յե և պետք է պաշտպանել վարձու բանվորների—քաղաքային ու գյուղական—շահերը, չքավորագույն գյուղացիների շահերն ընդդեմ կալվածատերերի կամ հարուստ գյուղացիների—նույն կապիտալիստների—շահերի: Իհարկե, սա յե հարցի արմատը, նրա վողջ էությո՛ւնը: Յեվ ահա մեզ առարկում են, վոր յեթե գյուղացիներին անհապաղ զավթելու խորհուրդ տանք, ապա կզավթի ամենից առաջ նա, ով գործիքներ, անասուն ունի, իսկ չքավորներին վոչինչ չի մնա: Յես հարցնում եմ ձեզ, իսկ մի՞թե կալվածատերերի հետ հոժարակամ համաձայնությունը կօգնի:

Դուք շատ լավ գիտեք, վոր կալվածատերերը հողը սիրով չեն կապալով տալիս այն գյուղացիներին, վորոնք կոպեկ չունեն գրպաններում, և ընդհակառակը՝ «հոժարակամ» համաձայնությունների յեն դիմում, յերբ խոստանում են լավ վճարել նրանց:

Կալվածատերերը մինչև օրս իրենց հողը ձրի չեն տվել, կարծես թե մեզ մոտ, Ռուսաստանում այդ բանը վոչ վոք չի նկատել:

Յեթե խոսելու լինենք կալվածատերերի հետ հոժարակամ համաձայնություն կնքելու մասին, ապա դա նշանակում է և՛ ավելի ուժեղացնել, մեծացնել, ամրացնել այն արտոնյալ, նախապատիվ դրությունը, այն շահերը, վորոնցից օգտվում են հարուստ գյուղացիները, վորովհետև հարուստ գյուղացիները, հավանորեն, կարող են վճարել կալվածատերերին, և յուրաքանչյուր կալվածատիրոջ համար հարուստ գյուղացին վճարունակ մարդ է: Կալվածատերը գիտե, վոր նա կարող է վճարել և նրան տվածը կորած չէ, այս պատճառով էլ կալվածատերերի հետ նման «հոժարակամ» գործարքներ կատարելիս պարզ է, վոր հարուստ գյուղացիներն ավելի յեն շահում, քան չքավորները: Ընդհակառակը—յեթե չքավոր գյուղացուն հենց այստեղ օգնություն ցույց տալու հնարավորություն կա, ապա կարելի յե միայն այն միջոցով, ինչ յես եմ առաջարկում, այն է՝ հողը հենց այժմ անվճար պիտի գյուղացիներին անցնի:

Կալվածատիրական սեփականությունը յեղել է և մնում է մեծագույն անարդարությունը: Գյուղացիների անվճար տիրապետումը այդ հողին, յեթե այդ տիրապետումը մեծամասնությամբ լինի, ինքնագլխություն չէ, այլ իրավունքի վերականգնում: Ահա մեր տեսակետը և ահա ինչու այն փաստարկը, իբր թե դրանից չքավորագույն գյուղացիությունը կտուժի, մենք մեծ անարդարացիություն ենք համարում: «Հոժարակամ» համաձայնություն է կոչվում—միայն Շինգարյովը կարող է հոժարակամ համաձայնություն անվանել,—յեթե մեկ կալվածատեր 2000 դեսյատին ունի, իսկ 300 գյուղացիներից յուրաքանչյուրը՝ 7 և կեսական դեսյատին: Այդպիսի համաձայնությունը հոժարակամ անվանել,—նշանակում է ծիծաղե՛լ գյուղացու վրա: Դա հոժարակամ համաձայնություն չէ, այլ հարկադրական գյուղացիության համար, հարկադրական մինչև այն օրը, յերբ յուրաքանչյուր գյուղացիական վոլոստային, նահանգային, գավառային և Համառուսական Խորհուրդ կհայտարարի, թե կալվածատիրական սեփականությունը մեծագույն անարդարությունն է, վորի վերացումը չի կարելի հետաձգել վոչ մի ժամ, վոչ մի րոպե:

Հողի սեփականությունը պիտի համաժողովրդական լինի, իսկ այդ պիտի հաստատի ընդհանուր պետական իշխանությունը: Քանի նա չի գումարվել, մի անգամ էլ եմ կրկնում, տեղական իշխանությունները վերցնում են կալվածատիրական հողը, և այդ

պիտի անեն մեծամասնությամբ կազմակերպված կերպով: Սխալ է, վոր լրագրերը աղաղակում են, իբր թե Ռուսաստանում անկարգությո՛ւն է իշխում: Սխալ է. գյուղում ավելի լավ կարգ տիրում, քան առաջ էր, վորովհետև վորոշումը մեծամասնությամբ է հանվում, բռնություններ կալվածատերերի վրա համարյա չեն յեղել, անարդարության և բռնության դեպքերը կալվածատերերի նկատմամբ միանգամայն յեզակի յեն, դրանք աննշան են և ամբողջ Ռուսաստանում չեն գերազանցում բռնության դեպքերի այն թվից, վոր առաջ էլ էյին պատահում:

Այժմ յես կշոշափեմ ևս մեկ փաստարկ, վոր յես առիթ եմ ունեցել լսել և քննել մեր «Правда» լրագրում՝ հողերն անհապաղ կերպով գյուղացիների ձեռքն անցնելու կապակցությամբ[10]:

Այդ փաստարկն այն է, վոր յեթե գյուղացուն խորհուրդ տալու լինենք անհապաղ անվճար իր ձեռքը վերցնել կալվածատիրական հողերը, ապա դա ճակատի զինվորների մեջ դժգոհություն կհարուցի, վրդովմունք, յերկմտություն և նույնիսկ խռովություն, վորոնք գուցե կասեն. «Յեթե գյուղացիներն այժմ վերցնեն հողը, իսկ մենք պետք է կանգնենք ճակատում, ապա մենք առանց հողի կմնանք»:—Գուցե բոլոր զինվորները հետ շարժվեն ճակատից և ստացվի քաոս ու անիշխանություն: Դրան մենք պատասխանում ենք այսպես, վոր այդ առարկությունն ամենևին չի վերաբերում հիմնական հարցին. միևնույն է՝ հողը վճարո՞վ են վերցնում արդյոք, համաձայնելով կալվածատերերի հետ, թե՞ գյուղացիության մեծամասնության վորոշումով,—միևնույն է, քանի պատերազմը շարունակվում է, զինվորները մնում են ճակատում և, իհարկե, նրանք կմնան ճակատում և գյուղ վերադառնալ չեն կարող: Իսկ ինչո՞ւ զինվորները ճակատում չեն վախենա, թե կալվածատերերը հոժարակամ համաձայնության անվան տակ անձեռնտու պայմաններ կկապեն, ինչո՞ւ նրանք պիտի յերկյուղ կրեն, վոր գյուղացիությունը մեծամասնությամբ ընդդեմ կալվածատերերի կվորոշի: Անհասկանալի յե: Ինչո՞ւ զինվորը ճակատում պիտի վստահություն տածի կալվածատիրոջը, կալվածատիրոջ հետ «հոժարակամ համաձայնությանը»: Յես հասկանում եմ, յերբ կալվածատերերի ու կապիտալիստների կուսակցություններն են ասում այդ, բայց վոր խնդրին այդպես նայի ճակատում յեղող ռուս զինվորը, չեմ հավատում: Յեթե «հոժարակամ» համաձայնություն լինի կալվածատիրոջ հետ, զինվորը դրան կարգ չի անվանի, վստահություն

չի ունենա դեպի այդ, ավելի շուտ նա այնպես պիտի նայի, թե շարունակվում է հին կալվածատիրական անկարգությունը:

Զինվորն ավելի մեծ վստահություն կտածի, յեթե նրան ասեն.—հողը ժողովրդին է անցնում, տեղական գյուղացիները կապալով են վերցնում այն և կապալավարձ վճարում են վոչ թե կալվածատիրոջը, այլ մուծում են իրենց կոմիտեն հանրոգուտ կարիքների համար, նույն այդ զինվորական ճակատի համար, բայց վոչ կալվածատիրոջը: Յեթե դա մեծամասնությամբ վորոշվի, ապա ճակատում գտնվող զինվորը կիմանա, թե այլևս վոչ մի «հոժարակամ» համաձայնություն չի կարող լինել կալվածատերերի հետ, բայց վոր կալվածատերերն էլ նույն իրավահավասար քաղաքացիներն են, վորոնց վոչ վոք չի կամենում վիրավորել: Հողը համաժողովրդական է—նշանակում է նա կալվածատիրոջն էլ է պատկանում, բայց վոչ ազնվականության արտոնությունների հիմունքով, այլ այնպես, ինչպես և ամեն մի քաղաքացու: Այն որվանից, ինչ տապալված է ցարի իշխանությունը, վորն ամենախոշոր կալվածատերն էր ու մասսաների կեղեքիչը, հողատեր-կալվածատերերը վոչ մի արտոնություն չպիտի ունենան: Ազատության հաստատումով՝ կալվածատիրական իշխանությունն ընդմիշտ պիտի տապալված համարվի: Այս հայացքից ճակատում գտնվող զինվորը վոչինչ չի կորցնի, այլ, ընդհակառակը, նա ավելի մեծ վստահություն կունենա դեպի պետական իշխանությունը և անդորր հավատ՝ տան համար, թե իր ընտանիքը զրկված, անպաշտպան չի մնա:

Մնում է էլի մեկ փաստարկ, վորը բերվում է մեր առաջարկի դեմ: Փաստարկն այն է, վոր յեթե գյուղացիներն անհապաղ գրավեն կալվածատիրական հողը, ապա նման անհապաղ, քիչ-նախապատրաստված զավթումը գուցե առաջ բերի հողի մշակման վատթարացումը, գուցե ցանքսն ավելի վատ լինի: Պիտի ասեմ, վոր մեծամասնության իշխանություն, ընդհանուր պետական իշխանություն դեռևս չի ստեղծվել, գյուղացիները դեռ բավական վստահություն չեն ստացել իրենց նկատմամբ, չեն կորցրել վստահությունը կալվածատերերի ու կապիտալիստների նկատմամբ. յես կարծում եմ, վոր մենք որեցոր մոտենում ենք դրան, որ-որի վրա գյուղացիությունը կորցնում է իր վստահությունը դեպի հին պետական իշխանությունը և գիտակցում է, վոր Ռուսաստանում կառավարություն պիտի լինեն գյուղացիական, զինվորական, բանվորական և այլն ընտրյալները, և ուրիշ վոչ վոք. յես կարծում եմ, վոր որեցոր մենք մոտենում

ենք այդ ժամանակին, վոչ թե այն պատճառով, վոր վորևե կուսակցություն է այդ խորհուրդը տալիս—յերբեք միլիոնավոր մարդիկ չեն լսի կուսակցությունների խորհուրդներին, յեթե այդ խորհուրդները չեն զուգադիպում այն բանին, ինչ սովորեցնում է նրանց սեփական կյանքի փորձը: Արագ քայլերով մենք մոտենում ենք այն ժամանակին, յերբ Ռուսաստանում բացի գյուղացիական ու բանվորական ընտրյալների իշխանությունից այլ իշխանություն չի լինի: Յեվ յերբ ինձ ասում են, թե հողի անհապաղ զավթումը, հավանորեն, այն հետևանքը կունենա, վոր հողը վատ կմշակվի, ցանքսը վատ կլինի, ապա յես պետի խոստովանեմ, թե մեր գյուղացիները, շնորհիվ այն բանի, վոր ճնշված են, դարերի ընթացքում հարստահարվել են կալվածատերերից, շնորհիվ այդ բանի մշակումը շատ վատ է: Իհարկե, Ռուսաստանում զարհուրելի ճգնաժամ է տիրում, վոր ծանրացել է նրա վրա, ինչպես և բոլոր կռվող յերկրների վրա, և Ռուսաստանի համար փրկություն չկա, յեթե նա չանցնի լավագույն մշակման, մարդկային աշխատանքի մեծագույն խնայողության: Բայց այժմ, առաջին ցանքսի ժամանակ, մի՞թե կարող է «հոժարակամ» համաձայնությունը կալվածատերերի հետ վորևե բան փոխել: Ի՞նչ է, կալվածատերերը ավելի լա՞վ պետի հսկեն հողի մշակմանը, գյուղացիները ավելի վա՞տ պետի ցանեն հողը, յեթե իմանան, վոր իրենք ցանում են վոչ թե կալվածատիրական, այլ համաժողովրդական հողը, վոր իրենք վճարում են վոչ թե կալվածատիրոջը, այլ իրենց գյուղացիական դրամարկղներին: Դա մի այնպիսի անմտություն է, վոր յես զարմանում եմ, յերբ լսում եմ նման փաստարկներ. դա միանգամայն անհավատալի է և ամբողջապես կալվածատերերի խորամանկությունն է:

Կալվածատերերը հասկացել են, վոր այլևս մահակով չի կարելի տիրապետել, այդ նրանք լավ են հասկացել ու անցնում են տիրապետության այն յեղանակին, վորը Ռուսաստանի համար նորություն է, իսկ Արևմտյան Յեվրոպայում վաղուց գոյություն ունի: Վոր այլևս չի կարելի մահակով տիրապետություն անել, մեզ մոտ այդ ցույց տվին յերկու հեղափոխությունները, իսկ արևմտա—յեվրոպական յերկրներում այդ ցույց են տվել տասնյակ հեղափոխություններ: Այդ հեղափոխությունները սովորեցնում են կալվածատերերին ու կապիտալիստներին, սովորեցնում են, թե ժողովրդին պետի կառավարել խաբեբայությունով, շողոքորթությամբ, պետք է հարմարվել, պիջակին կարմիր նշան փակցնել և—թեկուզ դա գյուղական ցեց լինի—ասել. «Մենք հեղափոխական դեմոկրատիա յենք, բարի յեղեք միայն սպասել և մենք ամեն ինչ կանենք ձեզ համար»: Այն փաստարկը, իբր թե գյուղացիներն այժմ ավելի վատ կցանեն հողը, յեթե նրանք ցանեն արդեն վոչ թե կալվածատիրական, այլ համաժողովրդական հողը, ուղղակի մի ծաղր է գյուղացիների նկատմամբ, մի փորձ՝ խաբեբայությամբ տիրապետություն պահպանելու նրանց վրա:

Կրկնում եմ—կալվածատիրական սեփականություն ամենևին չպետի լինի. տիրապետումը դեռևս սեփականություն չէ, տիրապետումը ժամանակավոր միջոց է և տիրապետումը փոխվում է ամեն տարի: Գյուղացին, վորը կապալով մի կտոր հող է ստանում, չի համարձակվի հողն իրենը համարելու: Հողը վոչ նրանն է և վոչ էլ կալվածատիրոջը, այլ ժողովրդական: Կրկնում եմ—դրանով այս տարվա դաշտերի ցանքսը, այս գարնան համար, չի կարող վատանալ: Այդ յենթադրությունն այնքան հրեշավոր է ու անհավանական, վոր յես ձեզ միայն մի բան եմ ասում, թե պետք է զգուշանալ կալվածատերերից, չվստահանալ նրանց, չխաբվել նրանց փաղաքշական խոսքերից ու խոստումներից. Պետք է հիշել, վոր գյուղացիների մեծամասնության վորոշումը, վորոնք իրենց վորոշումների մեջ բավականաչափ զգույշ են, դա արդիական ու ընդհանուր պետական վորոշում է: Այս տեսակետից գյուղացիներին վստահել կարելի յե: Որինակ՝ ինձ մոտ կա Պենզայի գյուղացիների վորոշումը, վորն առաջին կետից մինչև վերջինը տոգորված է անչափ զգուշությամբ. վորևե անհապաղ վերակազմավորում ամբողջ Ռուսաստանի համար՝ գյուղացիները չեն ձեռնարկում, բայց նրանք չեն ցանկանում իրենց անտանելի ստրկացման յենթարկել և այդտեղ նրանք իրավացի յեն: Ամենամեծ ստրկացումը յեղել է կալվածատիրականը և մնում է կալվածատիրականը, հողատերերի և հարստահարիչների ստրկացումը: Այս պատճառով էլ նույնիսկ մի շաբաթ, նույնիսկ մի ժամ սպասել չի կարելի. պետք է վերացնել այդ ստրկացումը, բայց յուրաքանչյուր զավթում պետի կազմակերպված զավթում լինի, վոչ թե սեփականություն դարձնելու, վոչ թե բաժանքի յենթարկելու, այլ համաժողովրդական հողը միայն ընդհանուրով օգտագործելու համար:

Զավթման այս հարցը յես կարող եյի վերջացնել, պատասխանելով, վոր կալվածատերերի ու կապիտալիստների կողմից մեր առաջարկի դեմ յեղած առարկությունները հիմնված են խաբեբայության վրա, իսկ վոչ-կալվածատերերի, վոչ-կապիտալիստների կողմից, այն մարդկանց կողմից, վորոնք ցանկանում

են պաշտպանել աշխատավորների շահերը, հիմնված են թյուրիմացության, չափազանց վստահության վրա՝ դեպի այն բանը, ինչ ստաբար ասում են մեր դեմ կապիտալիստներն ու կալվածատերերը: Յեթե քննելու լինենք մեր փաստարկները, ապա դուք կտեսնեք, թե կալվածատիրական սեփականությունը հենց այժմ վոչնչացնելու արդարացի պահանջը, ինչպես և հողային սեփականությունը ժողովրդին անցնելը, չի կարելի իրագործել, մինչև վոր չգումարվի կենտրոնական պետական իշխանությունը, բայց հողի տիրապետումը բուն գյուղացիներին անհապաղ անցնելը մենք խորհուրդ ենք տալիս ամենավճռական կերպով, մի պայմանով սակայն, վոր կարգի վոչ մի խախտում չթույլատրվի: Մենք մեր բանաձևերում տալիս ենք այդ խորհուրդը, և գուցե այդ խորհուրդն ավելորդ է, վորովհետև առանց դրան էլ գյուղացիներն այդ կիրառում են կյանքի մեջ:

Յես կանգնեմ յերկրորդ հարցին, վորի վրա հարկավոր է ամենից ավելի ուշադրություն դարձնել. այն հարցին, թե մեզ համար ինչպե՞ս է ցանկալի և աշխատող մասսաների շահերի տեսակետից ինչպե՞ս պետք է վարվել հողի հետ, յերբ դա արդեն համաժողովրդական սեփականություն կլինի, յերբ կվոչնչացվի մասնավոր սեփականությունը: Ռուսաստանում այդ ժամը շատ մոտ է: Յեվ իսկապես, կալվածատիրական իշխանության հզորությունը յեթե չի վոչնչացված, ապա խարխլված է: Յերբ հողը բոլոր գյուղացիների տիրության տակ կլինի, յերբ կալվածատերեր չեն լինի, ի՞նչպես անել, ի՞նչպես բաշխել հողը: Ինձ թվում է, թե այս հարցում անհրաժեշտ է մի ընդհանուր հայացք սահմանել, վորովհետև ինքնին հասկանալի յե, վոր տեղերում տնորինումը միշտ էլ գյուղացիության ձեռքին է մնում: Դեմոկրատիկ պետության մեջ այլ կերպ չի էլ կարող լինել. դա այնքան պարզ է, վոր այդ մասին խոսելն էլ ավելորդ է: Բայց յերբ հարց է դրվում այն մասին, թե ինչպես անել, վոր հողը բաժին ընկնի աշխատողներին, ապա մենք ասում ենք.— մենք ուզում ենք պաշտպանել վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների շահերը: Սա իր գործն է համարում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների բոլշևիկների մեր կուսակցությունը: Մենք հարց ենք տալիս մեզ. յեթե ասենք, թե հողը կանցնի ժողովրդին, նույն բա՞նն է, արդյոք, ասել, թե հողը կանցնի աշխատավորներին: Յեվ մենք պատասխան ենք տալիս. չե՛, այդ նույն բանը չե՛: Յեթե ասենք, թե հողը կանցնի ժողովրդին—դա նշանակում է, թե կալվածատիրական սեփականու-

թյունը կվոչնչացվի. դա նշանակում է, թե ամբողջ հողն ամբողջ ժողովրդին է պատկանում. դա նշանակում է, թե յուրաքանչյուր վոք, ով հող է վերցնում, վերցնում է կապալով ամբողջ ժողովրդից: Յեթե այս կարգը սահմանվի, դա նշանակում է հողատիրության տեսակետից վոչ մի տարբերություն չի մնա, ամբողջ հողը միատեսակ է, ինչպես գյուղացիներն են հաճախ ասում—«հողի ամեն կարգի հին միջնակները, ցանկապատերը կփլվեն, հողը ցանկաթափ կլինի—կլինի ազատ հող և ազատ աշխատանք»:

Արդյոք դա նշանակո՞ւմ է, թե հողը տրվում է բոլոր աշխատավորներին: Չե՛, չի նշանակում: Ազատ աշխատանք ազատ հողի վրա,—դա նշանակում է, թե հողատիրության բոլոր հին ձևերը ջնջված են, չկա վորևէ այլ հողատիրություն, քան համապետականը. յուրաքանչյուր վոք հողը պետությունից կապալով է վերցնում—կա ընդհանուր պետական իշխանություն, բոլոր բանվորների ու գյուղացիների իշխանություն. այդ իշխանությունից մեկ գյուղացի վերցնում է իբրև կապալառու. պետության և գյուղացու միջև վորևէ միջնորդ չկա. բոլորն էլ հավասար սկզբունքներով են վերցնում. սա յե ազատ աշխատանքն ազատ հողի վրա:

Արդյոք դա նշանակո՞ւմ է, թե հողը տրվում է բոլոր աշխատողներին: Չե՛, չի նշանակում: Հողն ուտել չի կարելի, իսկ տնտեսություն անելու համար պետք է գործիքներ, անասուն, հարմարանք, փող ունենալ. առանց փողի, առանց գործիքների չի կարելի տնտեսություն անել: Այս պատճառով, յերբ դուք այնպիսի կարգ սահմանեք, վոր ազատ աշխատանք լինի ազատ հողի վրա, վոչ մի կալվածատիրական հողատիրություն, վոչ մի տարբակարգ հողի վրա չի լինի, այլ կլինի միայն համաժողովրդական սեփականություն և հողի ազատ կապալառուներ վողջ պետության հանդեպ: Յերբ դուք կսահմանեք այդ—դա հողի անցնել չի լինի բոլոր աշխատավորներին, դա կնշանակի միայն այն, վոր յուրաքանչյուր տնտեսատեր հողի ազատ տնորինողը կլինի. ով կուզենա, նա էլ ազատորեն համապետական հող կվերցնի: Ցարական, կալվածատիրական Ռուսաստանի հետ համեմատած՝ դա մի մեծ քայլ կլինի դեպի առաջ: Դա մի մեծ առաջադիմական քայլ կլինի, վորովհետև կալվածատիրական, ցարական Ռուսաստանը այն Ռուսաստանն էր, վորտեղ 70·000·000 դեսյատինը տրված էր 30·000 Մարկովներին, Ռոմանովներին և նման կալվածատերերին. դա կլինի այնպիսի Ռուսաստան, վորտեղ կլինի

ազատ աշխատանք ազատ հողի վրա։ Արդեն այժմ էլ շատ անգամ կատարված է դա։ Ռուսաստանը հենց այժմ էլ առաջ է քայլել ցարական կալվածատիրական Ռուսաստանի հանդեպ, բայց դա հողի անցնելը չէ աշխատավորներին, դա հողի անցնելն է տնտեսատիրոջը, վորովհետև յեթե հողը համայնական է, և դա կվերցնեն նրանք, ովքեր կամենում են տնտեսություն անել դրա վրա,—դա դեռ քիչ է, քիչ է միայն տնտեսություն անելու ցանկությունը, հարկավոր է և հմտություն, բայց հմտությունն էլ դեռ քիչ է։ Ամեն մի բատրակ ու գյուղացի հմտություն ունի, բայց անասուն, գործիքներ, կապիտալ չունի։ Այս պատճառով էլ վորքան վորոշեք, վորքան էլ խոսեք, դրանով մենք չենք հաստատի ազատ աշխատանք ազատ հողի վրա։ Յեթե նույնիսկ մենք ազատ հողի մասին գրություններ կախենք ամեն մի վոլոստային վարչության մեջ, դրանով գործը դեպի լավը չի գնա հողյա աշխատավորների, ինչպես արևմտա-յեվրոպական հանրապետություններում, վորտեղ բանտերում գրված է «ազատություն, հավասարություն և յեղբայրություն»,—դրանով բանտերը չեն դադարում բանտեր լինելուց։ Յեթե ֆաբրիկայի վրա գրվեն այս խոսքերը—«ազատություն, հավասարություն և յեղբայրություն», ինչպես Ամերիկայումն է,—ապա դրանով ֆաբրիկան չի դադարում տաժանակիր աշխատանքի վայր լինելուց բանվորների և արքայություն՝ կապիտալիստների համար։

Նշանակում է, այժմ հարկավոր է մտածել հետագայի մասին՝ ինչպես անենք, վոր վոչ միայն ազատ աշխատանք լինի—դա մի քայլ է դեպի առաջ, բայց դա դեռ քայլ չէ դեպի աշխատավորների շահերի պաշտպանությունը, դա մի քայլ է ազատագրվելու կալվածատիրական ճնշումից, կալվածատերերի շահագործումից, ազատագրվելու Մարկովներից, վոստիկանությունից և այլն—բայց դա դեռ քայլ չէ դեպի աշխատավորների շահերի պաշտպանությունը, վորովհետև առանց անասունի, առանց գործիքների, առանց կապիտալի աղքատ, չունևոր գյուղացին հողը տնօրինել չի կարողանա։ Ահա ինչու յես մեծ անվստահությամբ եմ վերաբերվում դեպի այսպես կոչված յերկու չափերի կամ յերկու նորմաների հարցը—դեպի աշխատանքային ու պարենային նորման։ Յես գիտեմ, վոր նարոդնիկական կուսակցությունների մեջ այդ նորմաների մասին շարունակ դատողություններ ու լուսաբանություններ են հանդիպում։ Յես գիտեմ, վոր այդ կուսակցությունները կանգնած են այդ յերկու նորմաները, այդ յերկու չափերը սահմանելու անհրաժեշտության տեսակետի վրա,—աշխատանքային նորմայի—հողի մի քանակ, վորից ավելին ընտանիքը մշակել չի կարող, և պարենային նորմայի—հողի մի քանակ, վորից պակասն արդեն կնշանակեր սով։ Յես ասում եմ, թե այդ նորմաների կամ չափերի հարցին յես մեծ անվստահությամբ եմ վերաբերվում և կարծում եմ, վոր դա չինովնիկական պլան է, վորը ոգուտ չի տա, վորը կյանքի մեջ մտնել չի կարող, թեկուզ դուք այստեղ հաստատեք էլ այդ պլանը։ Դա յե խնդրի ամբո՛ղջ էությունը։ Այդ պլանը վորևէ նկատելի թեթևացում չի բերի վարձու բանվորների ու չքավորագույն գյուղացիների վիճակին, այդ պլանը, յեթե նույնիսկ ընդունենք, կմնա թղթի վրա, քանի դեռ տիրապետում է կապիտալիզմը։ Այդ պլանը չի ոգնի կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ճիշտ ճանապարհ գտնելուն։

Յերբ խոսում են այդ յերկու չափերի, այդ յերկու նորմաների մասին, գործն այնպես են պատկերացնում, կարծես գոյություն ունեն միայն հող ու քաղաքացիներ, կարծես թե աշխարհում էլ ուրիշ վոչինչ չկա։ Յեթե դա այդպես լիներ, ապա այդ պլանը լավ կլիներ։ Բայց այդպես չէ։ Գոյություն ունի կապիտալի իշխանություն, փողի իշխանություն։ Առանց փողի ամենաազատ հողի վրա էլ, ինչ «չափեր» էլ լինեն, տնտեսություն չի կարող լինել, վորովհետև քանի մնում է փողը—մնում է և վարձու աշխատանքը։ Իսկ այդ նշանակում է, վոր հարուստ գյուղացիները, վորոնք այստեղ, Ռուսիայում, մի միլիոն ընտանիքից պակաս չեն, հարստահարում, շահագործում են վարձու բանվորներին և կհարստահարեն նրանց նաև «ազատ» հողի վրա։ Այդ հարուստ գյուղացիները,—վոչ իբրև բացառություն, այլ մշտապես իբրև ընդհանուր կանոն, վարձու բանվոր են բանեցնում—տարեկան, ժամկետային, որավարձով, այսինքն՝ չքավորագույն գյուղացիներին, պրոլետարներին շահագործում են։ Իսկ դրա կողքին կան միլիոնավոր ու միլիոնավոր ձիազուրկ գյուղացիներ, վորոնք չեն կարող իրենց գոյությունը պահպանել, յեթե չվաճառեն իրենց բանվորական ուժը, արտագնացության չգնեն և այլն։ Քանի դեռ փողի իշխանությունը մնում է, ինչ «նորմաներ» էլ դուք սահմանեք, լավագույն դեպքում նրանք պիտանի չեն լինի կյանքի համար, վորովհետև նրանք հաշվի չեն առնում այն գլխավոր գործոնը, վոր գործիքների, անասունի, փողի սեփականությունն անհավասարաչափ է բաշխված, հաշվի չեն առնում այն, թե գոյություն ունի վարձու աշխատանք, վորը շահագործման է յենթարկվում։ Դա Ռուսաստանի արդի կյանքի

հիմնական փաստն է, դա չի կարելի աչքաթող անել, և յեթե մենք վորևէ «չափեր» սահմանենք, կյանքը կանցնի նրանց մոտով, և «չափերը» թղթի վրա կմնան: Ահա ինչու վորպեսզի կարելի լինի չունևոր և չքավորագույն գյուղացիների շահերը պաշտպանել Ռուսաստանի այս մեծագույն վերակազմավորման ընթացքում, վորը դուք այժմ կատարում եք և վորն անտարակույս կկատարեք, յերբ կվոչնչացվի հողի մասնավոր սեփականությունը, յերբ մի քայլ դեպի առաջ կդնանք՝ մոտենալու լավագույն սոցիալիստական ապագային. վորպեսզի այդ մեծ վերակազմավորման ժամանակ, վորը դուք հենց նոր սկսում եք, վորը շատ առաջ կգնա, վորովհետև չկա այնպիսի ուժ, վորը խանգարի դրան. վորպեսզի պաշտպանվեն բանվորների ու չքավորագույն գյուղացիների շահերը,—չի կարելի նորմաներ կամ չափեր սահմանելու ուղիով ընթանալ, պետք է ուրիշ ուղի վորոնել:

Յես և իմ կուսակցական ընկերները, այն կուսակցության, վորի անունից յես պատիվ ունեմ խոսելու, գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների շահերի պաշտպանության համար այդպիսի միայն յերկու ուղի գիտենք. մենք այդ յերկու ուղիներն ել հանձնարարում ենք Գյուղացիական Խորհրդի ուշադրությանը:

Առաջին ուղին—դա գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների կազմակերպումն է: Մենք ցանկանում ենք և խորհուրդ ենք տալիս, վոր յուրաքանչյուր գյուղացիական կոմիտեյում, յուրաքանչյուր վոլոստում, գավառում, նահանգում կազմակերպվի գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների առանձին ֆրակցիա կամ առանձին խմբակ, այնպիսի մարդկանց խմբակ, վորոնք իրենք իրենց հարց պիտի տան.—յեթե վաղը հողը համաժողովրդական դառնա,—իսկ այն անպայման այդպիսին պիտի դառնա, վորովհետև ժողովուրդը կամենում է այդ,—ի՞նչ պիտի անենք մենք: Մենք, վոր անասուն, գործիքներ չունենք, վո՞րտեղից կստանանք մենք այդ բոլորը: Մենք ի՞նչպես տնտեսություն վարենք: Ի՞նչպես պիտի պաշտպանենք մեր շահերը: Ի՞նչպես հոգանք այն մասին, վորպեսզի հողը, վորը համաժողովրդական պիտի լինի, վորպեսզի այդ հողը միայն տնտեսատերերի ձեռքը չընկնի: Յեթե դա նրանց ձեռքն ընկնի, ովքեր բավականաչափ անասուն ու գործիքներ ունեն, արդյոք մենք շա՞տ կշահենք: Մի՞թե մենք դրա համար կատարեցինք այս մեծ հեղաշրջումը: Մի՞թե այս եր հարկավոր մեզ:

«Ժողովուրդը» հող կունենա, բայց գյուղատնտեսական վարձու բանվորների շահերի պաշտպանության համար դա բավական չե: Հիմնական ուղին այն չե, ինչ վոր այստեղից, վերևից, կոմիտե կամ ել գյուղացիական կոմիտեն հողատիրության զատ-զատ «չափ» կսահմանի: Այդ միջոցները չեն ոգնի, քանի կապիտալն է տիրապետում, և չեն դուրս հանի կապիտալիզմի տիրապետությունից: Կապիտալիզմի լծի տակից դուրս գալու համար, համաժողովրդական հողն աշխատողների ձեռքն անցնելու համար, միայն մեկ հիմնական ուղի կա—դա գյուղատնտեսական վարձու բանվորների կազմակերպման ուղին է, բանվորների, վորոնք կղեկավարվեն իրենց փորձով, իրենց դիտողություններով, իրենց անվստահությամբ դեպի այն, ինչ գյուղական ցեցերն են ասում նրանց, թեև նրանք կարմիր ժապավեն են կապում և իրենց «հեղափոխական դեմոկրատիա» անվանում:

Միայն տեղերում ինքնուրույն կազմակերպությունը, միայն սեփական փորձը կսովորեցնի չքավորագույն գյուղացիներին: Իսկ այդ փորձը հեշտ չի լինի, մենք չենք կարող խոստանալ և չենք խոստանում, թե մեղրածոր ափերով կաթնագետեր կհոսեն: Չե՛, կալվածատերերը կտապալվեն, վորովհետև ժողովուրդն այդ է կամենում, բայց կապիտալիզմը մնում է: Նրան տապալելը շատ ավելի դժվար է, դեպի նրա տապալումն ուրիշ ուղի յե տանում:—Դա գյուղատնտեսական վարձու բանվորների և չքավորագույն գյուղացիների ինքնուրույն, առանձին կազմակերպությունների ուղին է:

Ահա առաջին հերթին ինչ է առաջադրում մեր կուսակցությունը: Միայն այդ ուղուց կարելի յե սպասել հողի աստիճանական, դժվար, բայց հաստատուն անցումն իսկապես աշխատավորների ձեռքը:

Յերկրորդ քայլը, վոր հանձնարարում է մեր կուսակցությունը, այն է, վոր յուրաքանչյուր խոշոր տնտեսությունից, յուրաքանչյուր, որինակ, խոշորագույն կալվածատիրական տընտեսություններից, վորոնց թիվը Ռուսաստանում 30·000 է, վորքան հնարավոր է շուտով կազմակերպվեն որինակելի տնտեսություններ և տրվեն ընդհանուր ու միատեղ մշակման գյուղատնտեսական բանվորներին և գիտնական գյուղատնտեսներին, գործադրելով դրա համար կալվածատիրական անասունը, գործիքները և այլն: Առանց այդ ընդհանուր մշակումի, վոր կկատարվի գյուղատնտեսական բանվորների Խորհրդի ղեկավարությամբ, չի կարող այնպես լինել, վոր ամբողջ հողը աշխատողների ձեռքն անց-

նի։ Իհարկե, ընդհանուր մշակումը դժվար բան է, իհարկե, յեթե վորևէ մեկը յերևակայեր, թե նման ընդհանուր մշակումը կարելի յե վերևից սահմանել ու պարտադրել,—դա խելագարություն կլիներ, վորովհետև առանձին տնտեսությունների դարավոր սովորությունը միանգամից չի կարող չքանալ, վորովհետև այստեղ փող է պահանջվում, պահանջվում է համակերպումն կյանքի նոր հիմունքներին։ Յեթե այդ խորհուրդները, այդ կարծիքն ընդհանուր մշակումի, ընդհանուր ինվենտարի, ընդհանուր անասունների նկատմամբ, գործիքների լավագույն գործադրումով հանդերձ, գյուղատնտեսների հետ միասին, յեթե այդ խորհուրդներն առանձին կուսակցությունների հնարածը լինեն, ապա գործը վատ կլիներ, վորովհետև վորևէ կուսակցության խորհրդով վորևէ փոփոխություն տեղի չի ունենում ժողովրդի կյանքում, վորովհետև կուսակցության խորհրդով տասնյակ-միլիոնավոր մարդիկ հեղափոխություն չեն անում, իսկ նման փոփոխությունը շատ ավելի մեծ հեղափոխություն կլինի, քան Թուլամիտ Նիկոլայ Ռոմանովի տապալումը։ Կրկնում եմ, պատվերով տասնյակ-միլիոնավոր մարդիկ հեղափոխություն չեն անում, այլ անում են այն ժամանակ, յերբ վրա յե հասնում անելանելի կարիքը, յերբ ժողովուրդն անհնարին վիճակի մեջ է ընկնում, յերբ տասնյակ-միլիոնավոր մարդկանց ընդհանուր գրոհը, վճռականությունը փշրում է բոլոր հին միջնորմները և իսկապես ի վիճակի յե նոր կյանք ստեղծելու։ Յեթե մենք հանձնարարում ենք նման մի միջոց, խորհուրդ ենք տալիս նրան դիմել զգուշորեն, ասելով, թե դա անհրաժեշտություն է դառնում, ապա մենք այդ յեզրակացնում ենք վոչ մեր ծրագրից, վոչ մեր սոցիալիստական ուսմունքից, այլ միայն նրա համար, վոր սոցիալիստ լինելով և դիտելով արևմտա-յեվրոպական ժողովուրդների կյանքը, մենք այդ յեզրակացությանն ենք յեկել։ Մենք գիտենք, վոր այնտեղ շատ հեղափոխություններ են յեղել, վորոնք ստեղծել են դեմոկրատիկ հանրապետություններ. մենք գիտենք, վոր Ամերիկայում 1865 թվականին պարտություն կրեցին ստրկատերերը[11], և ապա ձրի, կամ համարյա ձրի հարյուրավոր միլիոն դեսյատին հող բաժանվեց գյուղացիներին, և այնուամենայնիվ այնտեղ ավելի, քան վորևէ մի այլ տեղ, տիրապետում է կապիտալիզմը և ճնշում է աշխատավոր մասսաներին նույնպես, յեթե վոչ ավելի սաստիկ, քան ուրիշ յերկրներում։ Ահա այն սոցիալիստական ուսմունքը, ահա այն դիտողությունը ուրիշ

ժողովուրդների կյանքի նկատմամբ, վորը մեզ բերել է այն հաստատ համոզման, թե առանց հողի ընդհանուր մշակման գյուղատնտեսական բանվորների կողմից՝ լավագույն մեքենաների գործադրմամբ և գիտականորեն-ուսյալ գյուղատնտեսների ղեկավարությամբ, կապիտալիզմի լծից ուրիշ յելք չկա։ Բայց յեթե մենք հիմք ունենայինք միայն արևմտա-յեվրոպական պետությունների փորձը, մեր գործը Ռուսաստանում վատ կլիներ, վորովհետև ռուս ժողովուրդը մասսայորեն այն ժամանակ միայն ընդունակ է լուրջ քայլ անել նոր ուղիով, յերբ ծայրահեղ կարիք է ստեղծվում։ Ու մենք ասում ենք,—հասել է հենց այնպիսի ժամանակը, յերբ ամբողջ ռուս ժողովրդի համար այդ ծայրահեղ կարիքը բաղխում է դուռը։ Այդ ծայրահեղ կարիքն այն է, վոր հին ձևով տնտեսություն վարել անկարելի յե։ Յեթե հին ձևով մենք շարունակենք նստել մանր տնտեսությունների վրա, թեկուզ և ազատ քաղաքացիներով ազատ հողի վրա, միևնույն է, մեզ անխուսափելի կործանում է սպառնում, վորովհետև ամեն որ, ամեն ժամ փլուզումը մոտենում է։ Դրա մասին խոսում են բոլորը, դա փաստ է, վոր առաջ է բերել վոչ թե առանձին անհատների չար կամքը, այլ համաշխարհային զավթողական պատերազմը, կապիտալիզմը։

Պատերազմը վոչնչացրել է բազմաթիվ մարդկանց, ամբողջ աշխարհն արյունով է վողողված, ամբողջ աշխարհին պատերազմը կործանի յե հասցրել։ Սա չափազանցություն չէ, վոչ վոք չի կարող յերաշխավորել վաղվա որվա համար, բոլորն են խոսում այս մասին։ Վերցրե՛ք «Известия Совета Рабочих и Солдатских Депутатов» լրագիրը, այնտեղ բոլորն են ասում. կապիտալիստները դիմում են իտալական գործադուլի և լոկաուտների։ Այդ նշանակում է աշխատանք չկա և կապիտալիստները բանվորների մասսայական արձակում են կազմակերպում։— Ահա ուր հասցրեց այս վոճրագործ պատերազմը վոչ միայն Ռուսաստանին, այլև բոլոր յերկրներին։

Ահա ինչու մենք ասում ենք.—առանձին հողամասերի վրա ունեցած տնտեսությունները, թեկուզ «ազատ աշխատանք ազատ հողի վրա»—դա յելք չէ՛ զարհուրելի կրիզիսից, ընդհանուր քայքայումից, դա փրկություն չէ՛։ Անհրաժեշտ է ընդհանուր աշխատավորական պարհակ, պետք է մարդկային աշխատանքի մեծագույն խնայողական ոգտագործում։ Պետք է արտասովոր ուժեղ և ամուր իշխանություն, վորն ի վիճակի լինի իրագործելու այդ ընդ-

հանուր աշխատավորական պարհակը. դա չեն կարող կիրառել չինովնիկները, կարող են կիրառել միայն Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Դեպուտատների Խորհուրդները, վորովհետև դա ինքը ժողովուրդն է, ինքը ժողովրդական մասսաները, վորովհետև դա չինովնիկական իշխանություն չէ, վորովհետև նրանք վոտից գլուխ ճանաչելով ամբողջ գյուղացիական կյանքը՝ կարող են սահմանել աշխատավորական պարհակ, կարող են սահմանել մարդկային աշխատանքի այն պահպանությունը, վորի ժամանակ չհափշտակվի գյուղացու աշխատանքը, և այս կերպ ընդհանուր մշակումին անցնելը կկատարվեր աստիճանաբար ու հրջանկատորեն: Սա դժվար գործ է,—բայց անհրաժեշտ է անցնել ընդհանուր մշակումի օրինակելի խոշոր տնտեսություններում. առանց դրան չի կարելի դուրս գալ այն փլուզումից, այն ուղղակի հուսահատական վիճակից, վորի մեջ գտնվում է Ռուսաստանը, չի կարելի և դա շատ մեծ սխալ կլինի, յեթե վորևէ մեկը մտածի, թե նման մեծագույն վերափոխումը ժողովրդի կյանքում կարելի յե մի հարվածով անցկացնել: Վո՛չ, դա պահանջում է մեծագույն աշխատանք, պահանջում է յուրաքանչյուր առանձին գյուղացուց և բանվորից լարվածություն, վճռականություն ու յեռանդ—իր տեղում այն գործի նկատմամբ, վորը նա գիտե, այն արտադրության մեջ, վորը նա վարում է տասնյակ տարիներ: Այսպիսի բան վորևէ մեկի կարգադրությամբ չի կարելի անել, բայց այսպիսի բան անելն անհրաժեշտ է, վորովհետև զավթողական պատերազմն ամբողջ մարդկությանը կործանի յեզրին է հասցրել, տասնյակ-միլիոնավոր կյանքեր փչացան, էլ ավելի կփչանան այս զարհուրելի պատերազմից, յեթե մեր բոլոր ուժերը չլարենք, յեթե Բանվորների ու Գյուղացիական դեպուտատների Խորհուրդների բոլոր կազմակերպությունների ընդհանուր վճռական յելույթներ չունենան այն ուղիով, վորը տանում է դեպի հողի ընդհանուր մշակումն առանց կապիտալիստների, առանց կալվածատերերի: Միայն այդ ուղին կտա հողի իսկական անցումն աշխատողների ձեռքը:

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԻ ՈՐԱԳՐԻՑ:
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

«Известия Всероссийского Совета Крестьянских Депутатов» թերթի[12] օգոստոսի 19-ի № 88-ում տպագրված է չափազանց հետաքրքրական մի հոդված, վորը հիմնական փաստաթղթերից մեկը պիտի դառնա գյուղացիության հետ գործ ունեցող կուսակցական ամեն մի պրոպագանդիստի և ագիտատորի ձեռքում, գյուղ ուղևորվող կամ նրա հետ շփումն ունեցող ամեն մի գիտակից բանվորի ձեռքում:

Այս հոդվածն է—«Օրինակելի նակազ, վորը կազմված է տեղերի դեպուտատների կողմից Պետրոգրադի 1917 թվի Համառուսական Գյուղացիական Դեպուտատների I Համագումար բերված 242 նակազների հիման վրա»:

Չափազանց ցանկալի կլիներ, վորպեսզի Գյուղացիական Դեպուտատների Խորհուրդը վորքան հնարավոր է ավելի մանրամասն տվյալներ հրապարակեր այդ բոլոր նակազների մասին (յեթե արդեն բացարձակապես անկարելի յե բոլորը տպագրել լրիվ կերպով, վորն, իհարկե, ամենից լավը կլիներ: Օրինակ՝ առանձնապես անհրաժեշտ է նահանգների, գավառների, վոլոստների լրիվ ցուցակը, մատնանշելով, թե յուրաքանչյուր վայրից վորքան նակազ է ուղարկված, նրանց կազմելու կամ ներկայացնելու ժամանակը, գոնե հիմնական պահանջների վերլուծությունը, վորպեսզի կարելի լինի տեսնել, թե արդյոք ըստ հրջանների տարբերություններ նկատելի՞ յեն արդյոք այս կամ այն կետի նկատմամբ: Դիցուք՝ առանձին տնտեսությունների ու համայնական հողատիրության հրջան, վելիկոռուսական և այլազգի հրջաններ, կենտրոնական հրջաններ ու ծայրամասերի հրջաններ, ճորտատիրական իրավունք չտեսած հրջաններ և այլն—տարբերվո՞ւմ են արդյոք այդ հրջանները հարցերի դրումով գյուղացիական բոլոր հողերի սեփականության իրավունքի վերացման խնդրում, պարբերական հողաբաժանության, վարձու աշխատանք

չթուլացնելու, կալվածատերերի ինվենտարն ու անասունները բռնագրավելու խնդիրներում և այլն, և այլն: Առանց այսպիսի մանրամասն տվյալների՝ գյուղացիական նակազների արտասովոր արժեք ունեցող նյութերը գիտականորեն ուսումնասիրելն անկարելի է: Իսկ մենք, մարքսիստներս, բոլոր ուժերով պետք է ձգտենք գիտական ուսումնասիրության յենթարկել այն փաստերը, վորոնք մեր քաղաքականության հիմքն են կազմում:

Ավելի լավ նյութ չունենալու պատճառով՝ նակազների ամփոփումը (այսպես պիտի կոչենք «օրինակելի նակազը»), քանի դեռ վորևէ փաստացի անճշտություն չի ապացուցված նրա մեջ, մնում է իր տեսակի մեջ միակ նյութը, վորը, կրկնում ենք, մեր կուսակցության ամեն մի անդամ անպայման պետք է ունենա իր ձեռքին:

Նակազների ամփոփման առաջին մասը նվիրված է քաղաքական ընդհանուր դրույթներին, քաղաքական դեմոկրատիայի պահանջներին. յերկրորդը՝ հողային հարցին: (Հույս ունենանք, վոր Գյուղացիական Դեպուտատների Համառուսական Խորհուրդը կամ ուրիշ վորևէ մեկը գյուղացիական նակազների ու բանաձևերի ամփոփումը կկազմի պատերազմի հարցի վերաբերյալ): Առաջին մասի վրա այժմ մենք մանրամասն կանգ չենք առնի և կնշենք միայն յերկու կետ: § 6-ը պահանջում է բոլոր պաշտոնատար անձերի ընտրականություն. § 11-ը—մշտական զորքի վերացում պատերազմը վերջանալուց հետո: Այս կետերը գյուղացիների քաղաքական ծրագիրն ամենից ավելի յեն մոտեցնում բոլշևիկների կուսակցության ծրագրին: Այս կետերի վրա հենվելով՝ մենք մեր ամբողջ պրոպագանդայի ու ագիտացիայի մեջ պետք է ցույց տանք և ապացուցենք, վոր մենշևիկյան ու եսերական առաջնորդները վո՛չ միայն սոցիալիզմի, այլև դեմոկրատիայի դավաճաններ են, վորովհետև հակառակ բնակչության կամքի, հակառակ դեմոկրատիայի սկզբունքների, ի հաճույս կապիտալիստների, օրինակ, Կրոնշտադտում, պաշտպանում եյին, վոր կոմիսարի պաշտոնը հաստատվի կառավարության կողմից, այսինքն՝ լինի վոչ-զուտ ընտրովի պաշտոն: Եսերական ու մենշևիկյան առաջնորդները Պիտերի ռայոնական դումաներում և տեղական ինքնավարության մյուս հիմնարկություններում, հակառակ դեմոկրատիայի սկզբունքների, պայքարում են բոլշևիկյան պահանջի դեմ՝ անհապաղ սկսել բանվորական միլիցիա մտցնել և ապա համաժողովրդական միլիցիայի անցնել:

Նակազների ամփոփման համաձայն՝ գյուղացիության հողային պահանջներն են—ամենից առաջ բոլոր տեսակի հողերի, ընդհուպ մինչև գյուղացիների հողերի, մասնավոր սեփականության անվճար վերացում, բարձր կուլտուրա ունեցող տնտեսությունների հողամասերի հանձնումը պետությանը կամ համայնքներին. բռնագրավված հողերի (բացառվում են սակավահող գյուղացիները) ամբողջ կենդանի ու մեռյալ ինվենտարի բռնագրավումն ու հանձնումը պետությանը կամ համայնքներին. վարձու աշխատանքի արգելում. հողի հավասարար բաժանումն աշխատավորների միջև՝ պարբերական վերաբաժանումներով և այլն: Իբրև անցողիկ շրջանի միջոցառումներ, մինչև Սահմանադիր ժողովի գումարումը, գյուղացիները պահանջում են անհապաղ օրենքներ հրատարակել՝ հողը գնելն ու վաճառելն արգելելու մասին, համայնքից ազատվելու, ոտրուբների և այլ օրենքների վերացման մասին, անտառների, ձկնորսական ձեռնարկությունների և այլնի պաշտպանության մասին, յերկարատև վարձակալության պայմանագրերի վերացման և կարճատև վարձակալության պայմանագրերի վերանայման մասին և այլն:

Բավական է այս պահանջների վրա փոքր ինչ մտածել, վորպեսզի պարզ տեսնի, վոր կապիտալիստների հետ միացած, առանց լիակատար խզման նրանց հետ, առանց ամենավճռական ու անխնա պայքար մղելու կապիտալիստների դասակարգի դեմ, առանց նրա տիրապետությունը տապալելու՝ հիշյալ պահանջների իրագործումը միանգամայն անհնարին է:

Սոցիալիստ-հեղափոխականների ինքնախաբեությունը և գյուղացիներին խաբելը նրանց կողմից հենց այն է, վոր նրանք հնարավոր են համարում և տարածում են այն միտքը, թե իբր այսպիսի բարեփոխություններ, թե իբր նման բարեփոխություններ հնարավոր են առանց կապիտալիստների տիրապետությունը տապալելու, առանց պետական ամբողջ իշխանությունը պրոլետարիատին անցնելու, առանց՝ կապիտալիստների դեմ պրոլետարական պետական իշխանության ամենավճռական, հեղափոխական միջոցառումների պաշտպանության ամենաչքավոր գյուղացիության կողմից: «Սոցիալիստ-հեղափոխականների» անջատվող ձախ թևի նշանակությունը հենց այն է, վոր նա ապացուցում է այդ խաբեությունը գիտակցելու աճումը բուն այդ կուսակցության մեջ:

Իսկապես, ամբողջ մասնատիրական հողի բռնագրավումը

նշանակում է այն բանկերի հարյուրավոր միլիոն կապիտալի բռնագրավում, վորոնց մոտ այդ հողերը մեծ մասամբ գրավ են դրված: Մի՞թե խելքի մոտ բան է այսպիսի միջոցառում կիրառել, քանի դեռ հեղափոխական դասակարգը հեղափոխական միջոցներով չի կոտրել կապիտալիստների դիմադրությունը: Այս դեպքում խոսքը վերաբերում է ամենից ավելի կենտրոնացված, բանկային կապիտալին, վորը միլիարդավոր թելերով կապված է հսկայական յերկրի կապիտալիստական տնտեսության բոլոր կարևորագույն կենտրոնների հետ և վորը կարող է պարտվել միայն քաղաքային պրոլետարիատի վոչ պակաս կենտրոնացված ուժով:

Այնուհետև: Բարձր կուլտուրա ունեցող տնտեսությունների հանձնումը պետությանը: Մի՞թե ակներև չէ, վոր այդ տնտեսությունը վերցնելու և տնտեսությունն իսկապես աշխատավորության ոգտին և վոչ թե չինովնիկների ու նույն կապիտալիստների ոգտին վարելու ընդունակ «պետությունը» — պրոլետարական հեղափոխական պետություն պետք է լինի:

Ձիաբուծարանների և այլնի, ապա ամբողջ կենդանի ու մեռյալ ինվենտարի բռնագրավումը — սրանք միայն կրկին ու կրկին վիթխարի հարվածներ չեն արտադրության միջոցների մասնավոր սեփականությանը: Սրանք քայլեր են դեպի սոցիալիզմը, վորովհետև ինվենտարը «պետության կամ համայնքի բացառիկ ոգտագործմանն» անցնելը նշանակում է խոշոր, սոցիալիստական յերկրագործության անհրաժեշտությունը, կամ առնվազն՝ միավորված մանր տնտեսությունների սոցիալիստական հսկողության, նրանց տնտեսության սոցիալիստական կարգավորման անհրաժեշտությունը:

Իսկ վարձու աշխատանք «չթույլատրե՞լը»: Այդ դատարկ ֆրազ է, ծեծկված մանր տնտեսատերերի անճարակ, անգիտակից, միամիտ ցանկությունն է, վորոնք չեն տեսնում, վոր ամբողջ կապիտալիստական արդյունաբերությունը կանգ կառնի, յեթե վարձու աշխատանքի պահեստի բանակ չլինի գյուղում, վոր չի կարելի վարձու աշխատանքը «չթույլատրել» գյուղում, յերբ այն թույլատրվում է քաղաքում, վոր, վերջապես, վարձու աշխատանքը «չթույլատրելը» վոչ այլ ինչ է նշանակում, քան յեթե մի քայլ դեպի սոցիալիզմը:

Յեվ այստեղ մենք մոտեցանք արմատական հարցին՝ բանվորների հարաբերությանը դեպի գյուղացիները:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական մասսայական շարժումը 20 տարուց ավելի յե գոյություն ունի Ռուսաստանում (յեթե հաշվենք 1896 թվի մեծ գործադուլներից): Այս խոշոր ժամանակամիջոցում, յերկու մեծ հեղափոխությունների միջով, Ռուսաստանի քաղաքական ամբողջ պատմության միջով կարմիր թելի նման անցնում է այն հարցը, թե արդյոք գյուղացիներին բանվոր դասակա՞րգը պիտի առաջ տանի դեպի սոցիալիզմ, թե՞ լիբերալ բուրժուան պիտի հետ քաշի նրան դեպի հաշտություն կապիտալիզմի հետ:

Սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական թևը շարունակ դատում է հետևյալ դերիմաստուն ֆորմուլայի համաձայն. վորովհետև սոցիալիստ-հեղափոխականները մանր բուրժուաներ են, այդ պատճառով էլ հանուն սոցիալիզմի բուրժուական բացառման «մենք» դեն ենք շպրտում նրանց մեշչանական-ուտոպիական հայացքը սոցիալիզմի վերաբերմամբ: Մարքսիզմը բարեհաջող կերպով նենգափոխվում է ստրուվիզմով և մենշևիզմը գլորվում է մինչև կադետական լակեյի դերը, վորը գյուղացիներին «հաշտեցնում է» բուրժուազիայի տիրապետության հետ: Ծերեթելին ու Սկոբելևը[13], Չերնովի ու Ավկսենտյևի[14] հետ թևանցուկ, զբաղված են, «հեղափոխական դեմոկրատիայի» անունից, կադետների ռեակցիոն կալվածատիրական հրամաններն ստորագրելով — այսպես է այդ դերի վերջին ու ամենաակնբախ արտահայտությունը:

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, վորը յերբեք չի հրաժարվել էսէռների մանր-բուրժուական ցնորքները քննադատելուց, վորը յերբեք բլոկի մեջ չի մտել նրանց հետ այլ կերպ, քան ընդդեմ կադետների, շարունակ պայքարում է գյուղացիներին կադետների ազդեցությունից դուրս կորզելու համար և սոցիալիզմի մասին յեղած մեշչանական ուտոպիական հայացքին հակադրում է վո՛չ թե լիբերալ հաշտություն կապիտալիզմի հետ, այլ հեղափոխական-պրոլետարական ուղի՝ դեպի սոցիալիզմ:

Այժմ, յերբ պատերազմն անսովոր չափով արագացրել է զարգացումը, անհավատալի չափով սրել է կապիտալիզմի կրիզիսը, ժողովուրդներին դրել է անհապաղ ընտրանքի առջև — կործանում կամ անմիջական վճռական քայլեր դեպի սոցիալիզմ, այժմ կիսալիբերալ մենշևիզմի և հեղափոխական-պրոլետարական բոլշևիզմի միջև յեղած տարաձայնության ամբողջ անդունդը

յերևան է գալիս ակնբախորեն, գործնական կերպով, երբ է տասնյակ-միլիոնավոր գյուղացիների գործողության հարց:

Հաշտվեցե՛ք կապիտալիզմի տիրապետության հետ, վորովհետև սոցիալիզմի համար «մենք» դեռ չենք հասունացել,— ահա թե ինչ են ասում գյուղացիներին մենշևիկները, նենգափոխելով, ի միջի այլոց, ընդհանրապես «սոցիալիզմի» վերաբերյալ աբստրակտ հարցով այն կոնկրետ հարցը, թե կարելի՞ յե արդյոք պատերազմի հասցրած վերքերը բուժել առանց վճռական քայլեր անելու դեպի սոցիալիզմը:

Հաշտվեցե՛ք կապիտալիզմի հետ, վորովհետև սոցիալիստ-հեղափոխականները մանր-բուրժուական ուտոպիստներ են,— ահա թե ինչ են ասում գյուղացիներին մենշևիկները և եսերների հետ միասին գնում են աջակցելու կադետական կառավարությանը...

Իսկ եսերները, իրենց կուրծքը ծեծելով, հավատացնում են գյուղացիներին, թե իրենք դեմ են ամեն տեսակի հաշտության կապիտալիստների հետ, թե իրենք ռուսական հեղափոխությունը յերբեք բուրժուական չեն համարել,—այդ պատճառով էլ բլոկի մեջ են մտնում հատկապես օպորտունիստ սոցիալ-դեմոկրատների հետ, գնում են աջակցելու հատկապես բուրժուական կառավարությանը... Եսերներն ստորագրում են գյուղացիության ամեն տեսակի, ամենահեղափոխական ծրագրերը,—վորպեսզի չիրագործեն դրանք, վորպեսզի քնացնեն դրանք, վորպեսզի ամենադատարկ խոստումներով խաբեն գյուղացիներին, իրականում կոալիցիոն մինիստրության մեջ կադետների հետ ամիսներ շարունակ «համաձայնողականությամբ» զբաղվեն:

Եսերների այս աղաղակող, գործնական, անմիջական, շոշափելի դավաճանությունը գյուղացիության շահերին՝ միանգամայն կերպարանափոխում է դրությունը: Պետք է հաշվի առնել այս փոփոխությունը: Եսերների դեմ միայն հին ձևով ագիտացիա մղել չի կարելի, միայն այնպես, ինչպես մենք այդ անում եյինք 1902—1903 թվերին և 1905—1907 թվերին: Չի կարելի սահմանափակվել «հողի սոցիալիզացիայի», «հավասարար հողօգտագործման», «վարձու աշխատանքի արգելման» և այլ մանր-բուրժուական ցնորքների թեորիական մերկացումներով:

Այն ժամանակ բուրժուական հեղափոխության նախօրյակն եր կամ անավարտ բուրժուական հեղափոխություն եր, և ամբողջ խնդիրն այն եր, վորպեսզի հեղափոխությունը հասցվի, ամենից առաջ, մինչև միապետության տապալումը:

Այժմ միապետությունը տապալված է: Բուրժուական հեղափոխությունն ավարտված է այն չափով, ինչ չափով Ռուսաստանը դուրս է յեկել դեմոկրատական հանրապետություն՝ կադետներից, մենշևիկներից և եսերներից կազմված կառավարությամբ: Իսկ պատերազմը յերեք տարվա ընթացքում յերեսուն տարով մեզ առաջ տարավ, Յեվրոպայում ընդհանուր աշխատանքային պարհակ և ձեռնարկությունների պարտադիր սինդիկատացում առեղծեց, ամենից առաջավոր յերկրները սովի և չլսված քայքայման հասցրեց՝ հարկադրելով քայլեր անել դեպի սոցիալիզմ:

Միայն պրոլետարիատն ու գյուղացիությունը կարող են տապալել միապետությունը—այս եր, այն ժամանակվա համաձայն, մեր դասակարգային քաղաքականության հիմնական վորոշումը: Յեվ այս վորոշումը ճիշտ եր: 1917 թվի փետրվարն ու մարտը մի ավելորդ անգամ հաստատեցին այդ:

Միայն պրոլետարիատը, վորը ղեկավարում է չքավորագույն գյուղացիությանը (ինչպես մեր ծրագիրն է ասում՝ կիսապրոլետարներին), կարող է դեմոկրատական հաշտությամբ վերջացնել պատերազմը, բուժել նրա վերքերը, սկսել անպայման անհրաժեշտ ու անհետաձգելի դարձած քայլերը դեպի սոցիալիզմ—այս է մեր դասակարգային քաղաքականության վորոշումը հիմա:

Այստեղից յեզրակացություն. եսերների դեմ մղվող պրոպագանդայի ու ագիտացիայի ծանրության կենտրոնը պետք է փոխադրել այն բանի վրա, վոր նրանք դավաճանեցին գյուղացիությանը: Նրանք ներկայացնում են վո՛չ թե գյուղացիական չքավորության մասսան, այլ ունևոր տնտեսատերերի փոքրամասնությունը: Նրանք առաջնորդում են գյուղացիներին վո՛չ թե դեպի դաշինք բանվորների հետ, այլ դեպի դաշինք կապիտալիստների հետ, այսինքն՝ նրանց յենթարկվելու: Մինիստրական պաշտոնների համար, մենշևիկների ու կադետների հետ բլոկ կազմելու համար նրանք վաճառեցին աշխատավոր ու շահագործվող մասսաների շահերը:

Պատերազմի շնորհիվ արագ ընթացք ստացած պատմությունն այնքան է առաջ գնացել, վոր հին ֆորմուլաները նոր բովանդակությամբ են լցվել: «Վարձու աշխատանք չթույլատրելը»—այդ առաջ նշանակում եր միայն՝ մանր-բուրժուական ին-

տնկիզենտի մի դատարկ ֆրազ: Այժմ կյանքում այդ ուրիշ բան է նշանակում. միլիոնավոր չքավոր գյուղացիներ 242 նակազներում ասում են, վոր իրենք ուզում են գնալ դեպի վարձու աշխատանքի վերացումը, բայց չգիտեն, թե ինչպես անեն այդ: Մենք գիտենք, թե ինչպես պետք է անել այդ: Մենք գիտենք, վոր այդ կարելի յե անել միայն դաշինք կնքելով բանվորների հետ, նրանց ղեկավարությամբ, կապիտալիստների դեմ և վոչ թե «համաձայնողականությամբ» կապիտալիստների հետ:

Ահա թե ինչպես պետք է փոխվի այժմ մեր պրոպագանդայի ու ագիտացիայի հիմնական գիծը եսէռների դեմ, մեր ճառերի հիմնական գիծը՝ գյուղացիության նկատմամբ:

Եսէռական կուսակցությունը դավաճանեց ձեզ, ընկե՛ր գյուղացիներ: Նա դավաճանեց խրճիթներին և անցավ պալատների կողմը, յեթե վոչ միապետի պալատների, ապա այն պալատների կողմը, վորտեղ կադետները, հեղափոխության և առանձնապես գյուղացիական հեղափոխության ամենակատաղի թշնամիները, նիստեր են անում Չերնովների, Պեշեխոնովների[15], Ավկսենտյեվների հետ միասին միևնույն կառավարության կազմում:

Միայն հեղափոխական պրոլետարիատը, միայն նրան միավորող ավանգարդը, բոլշևիկների կուսակցությունն է, վոր իրոք կարող է կատարել գյուղացիական չքավորության այն ծրագիրը, վոր շարադրված է 242 նակազների մեջ: Վորովհետև հեղափոխական պրոլետարիատն, իսկապես, ընթանում է դեպի վարձու աշխատանքի վերացումը—միակ ճիշտ ուղիով, կապիտալը տապալելով, բայց վոչ թե գործավոր վարձելն արգելելով, վոչ թե այն չթույլատրելով: Հեղափոխական պրոլետարիատն, իսկապես, ընթանում է դեպի հողերի, ինվենտարի, գյուղատնտեսական տեխնիկական ձեռնարկությունների բռնագրավումը, դեպի այն, ինչ ցանկանում են գյուղացիները և ինչ նրանց չեն կարող տալ եսէռները:

Ահա թե ինչպես պետք է փոխել այժմ բանվորների՝ գյուղացուն ուղղված ճառերի հիմնական գիծը: Մենք, բանվորներս, կարող ենք տալ և կտանք ձեզ այն, ինչ գյուղացիական չքավորությունն ուզում է ու վորոնում, վոչ միշտ իմանալով, թե վորտեղ և ինչպես վորոնել: Մենք, բանվորներս, ընդդեմ կապիտալիստների պաշտպանում ենք մեր շահերը և, միաժամանակ, գյուղացիության վիթխարի մեծամասնության շահերը, իսկ եսէռները, կապիտալիստների հետ դաշնակցած ընթանալով, դավաճանում են այդ շահերին:

* * *

Ընթերցողին հիշեցնենք, թե ինչ էր ասում Էնգելսը գյուղացիական հարցի մասին իր մահվանից քիչ առաջ: Էնգելսն ընդգծում էր, վոր սոցիալիստների մտքում չկա մանր գյուղացիներին էքսպրոպրիացիայի յենթարկել, վոր միայն օրինակի ուժով կպարզվեն նրանց համար սոցիալիստական մեքենայացված հողագործության առավելությունները[16]:

Պատերազմն այժմ գործնականորեն հենց այս տեսակի հարց է դրել Ռուսաստանի առջև: Ինվենտարը քիչ է: Բռնագրավել այն և «չբաժանել» բարձր մշակության տնտեսությունները:

Գյուղացիներն սկսել են այս հասկանալ: Կարիքն ստիպեց հասկանալ: Պատերազմն ստիպեց, վորովհետև ինվենտար վերցնելու տեղ չկա: Պետք է խնայել այն: Իսկ խոշոր տնտեսությունը—դա հենց նշանակում է աշխատանքի խնայողություն ինվենտարի միջոցով, ինչպես և ուրիշ շատ բաների միջոցով:

Գյուղացիներն ուզում են պահել իրենց մանր տնտեսությունը, հավասարեցուցիչ նորմայի յենթարկել այն, պարբերաբար կրկին հավասարեցնել... Թող այդպես լինի: Վոչ մի խելացի սոցիալիստ դրա համար չի տարաձայնի գյուղական չքավորության հետ: Յեթե հողերը բռնագրավվեն, նշանակում է՝ բանկերի տիրապետությունն է խախտվում, յեթե ինվենտարը բռնագրավվի, նշանակում է՝ կապիտալի տիրապետությունն է խախտվում, ապա յեթե կենտրոնում պրոլետարիատի տիրապետություն լինի, յեթե քաղաքական իշխանությունը պրոլետարիատին անցնի, մնացածն ինքն իրեն դուրս կգա, «օրինակի ուժով»-ի հետևանքով, կթելադրվի հենց իրեն՝ պրակտիկայի կողմից:

Քաղաքական իշխանության անցումը պրոլետարիատին—ահա թե ինչն է էականը: Ցեվ այն ժամանակ 242 նակազների ծրագրի ամբողջ էականը, հիմնականը, արմատականը իրականանալի կդառնա: Իսկ կյանքը ցույց կտա, թե ինչ ձևափոխություններով կիրականանա այն: Սա շատ յերկրորդական բան է: Մենք դոկտրինյորներ չենք: Մեր ուսմունքը վո՛չ թե դոգմա, այլ գործունեյության ուղեցույց է:

Մենք չենք հավակնում, վոր Մարքսը կամ մարքսիստները գիտեն դեպի սոցիալիզմ տանող ուղին իր բոլոր կոնկրետությամբ: Այդ անհեթեթություն է: Մենք գիտենք այդ ճանապարհի ուղղությունը, մենք գիտենք, թե դասակարգային վո՛ր ուժե-

քըն են տանում նրանով, իսկ կոնկրետ կերպով, գործնականորեն՝ միլիոնների փորձը միայն ցույց կտա այն, յերբ նրանք գործի կձեռնարկեն:

Վստահացե՛ք բանվորներին, ընկե՛ր գյուղացիներ, խզեցե՛ք ձեր դաշինքը կապիտալիստների հետ: Միայն սերտորեն դաշնակցելով բանվորների հետ դուք կարող եք իրոք ձեռնարկել 242 նակազների ծրագրի իրագործմանը: Կապիտալիստների հետ դաշնակցած, եսերների ղեկավարությամբ, դուք այդ ծրագրի վոգով յերբեք և վոչ մի վճռական, անդառնալի քայլ չեք անենի:

Իսկ յերբ դուք, քաղաքի բանվորների հետ դաշնակցած, կապիտալի դեմ մղվող անխնա պայքարում սկսեք իրագործել 242 նակազների ծրագիրը, այն ժամանակ ձեզ և մեզ օգնության կգա ամբողջ աշխարհը, այն ժամանակ այդ ծրագրի հաջողությունը—վոչ իր տվյալ ձևակերպությամբ, այլ իր էությամբ—ապահոված կլինի: Այն ժամանակ կհասնի կապիտալի պետության և վարձու ստրկության վախճանը: Այն ժամանակ կսկսվի սոցիալիզմի թագավորությունը, խաղաղության թագավորությունը, աշխատավորների թագավորությունը:

«Рабочий» № 6,

1917 թ. սեպտեմբերի 11 (օգոստոսի 29):

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Նամակ «Правда»-յի խմբագրությանը *

Այսօր, շաբաթ օրը դեկտեմբերի 1-ին (նոյեմբերի 18-ին), յերբ ինձ վիճակվեց գյուղացիական համագումարում հանդես գալ, ինձ հրապարակով մի հարց տրվեց, վորին յես իսկույն ևեթ պատասխանեցի: Անհրաժեշտ է, վոր այդ հարցը և իմ պատասխանն անհապաղ հայտնի դառնան ամբողջ ընթերցող հասարակությանը, վորովհետև ձևականորեն, միմիայն իմ սեփական անունից խոսելով, յես ըստ եյության խոսել եմ բոլշևիկների ամբողջ կուսակցության անունից:

Գործի յեղելությունն այսպես եր:

Շոշափելով բանվոր-բոլշևիկների դաշինքի հարցը ձախ եսերների հետ, վորոնց ներկայումս հավատ են ընծայում շատ գյուղացիներ, յես իմ ճառում ապացուցում եյի, վոր այդ դաշինքը կարող է լինել մի «ազնիվ կոալիցիա», մի ազնիվ դաշինք, քանի վոր վարձու բանվորների և աշխատավոր ու շահագործվող գյուղացիների շահերի միջև արմատական տարաձայնություն չկա: Սոցիալիզմը կատարելապես կարող է բավարարել թե՛ մեկի և թե՛ մյուսի շահերը: Մ ի մ ի ա յ ն սոցիալիզմը կարող է բավարարել նրանց շահերը: Այստեղից ել՝ պրոլետարիատի և աշխատավոր ու շահագործվող գյուղացիների միջև «ազնիվ կոալիցիայի» հնարավորությունն ու անհրաժեշտությունը: Ընդհակառակը, «կոալիցիան» (դաշինքը), մեկ կողմից, աշխատավոր և շահագործվող դասակարգերի, մյուս կողմից՝ բուրժուազիայի միջև չի կարող «ազնիվ կոալիցիա» լինել, վորովհետև այդ դասակարգերի շահերի միջև արմատական տարաձայնություններ կան:

Պատկերացրե՛ք ձեզ,—ասում եյի յես,—վոր կառավարության

* 1917 թ. հրատարակած «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրում այս նամակը տրված է մեջդիր թերթով: Խմբ.:

մեջ բոլշևիկները լինեն մեծամասնություն, իսկ ձախ էսէռները՝ փոքրամասնություն, յենթադրենք նույնիսկ, թե կա ընդամենը մեկ ձախ էսէռ, հողագործության կոմիսարը: Բոլշևիկները կարո՞ղ են արդյոք այդ դեպքում ազնիվ կոալիցիա իրագործել:

Կարող են, վորովհետև հակահեղափոխական տարրերի (դրանց թվում աջ էսէռների և պաշտպանողականների) դեմ անհաշտ պայքար մղելով՝ բոլշևիկները պարտավոր կլինեյին ձեռնպահ մնալ այնպիսի հարցերի քննարկության ժամանակ, վորոնք ուղղակի վերաբերում են խորհուրդների Յերկրորդ Համառուսական համագումարի հաստատած հողային ծրագրի զուտ էսէռական կետերին: Որինակ, այդպես է հավասարար հողօգտագործման և հողը մանր տնտեսատերերի միջև վերաբաժանելու վերաբերյալ կետը:

Այդպիսի կետի քննարկման ժամանակ ձեռնպահ մնալով՝ բոլշևիկները մի կաթիլ անգամ իրենց ծրագրին չեն դավաճանում: Վորովհետև սոցիալիզմի հաղթության պայմանում (բանվորական վերահսկողությունը ֆաբրիկաների վրա, դրան հետևող նրանց էքսպրոպրիացիան, բանկերի նացիոնալիզացիան, բարձրագույն տնտեսական խորհրդի ստեղծումը, վորը կարգավորելու յե յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը), այդպիսի պայմանում բանվորները պարտավոր են համաձայնել մանր աշխատավոր և շահագործվող գյուղացիների կողմից առաջարկվող անցման միջոցներին, յեթե այդ միջոցները սոցիալիզմի գործին չեն վնասում: Յեվ Կաուցկին, դեռևս իր մարքսիստ յեղած ժամանակ (1899—1909 թվերին), բազմիցս խոստովանել է,— ասում էյի յես,—վոր դեպի սոցիալիզմ տանող անցման միջոցները խոշոր յերկրագործության յերկրներում և մանր յերկրագործության յերկրներում չեն կարող միատեսակ լինել:

Մենք, բոլշևիկներս, պարտավոր կլինեյինք ձեռնպահ մնալ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդում կամ Կենտգործկոմում այդպիսի կետի քննարկման ժամանակ, վորովհետև ձախ էսէռները (ինչպես և նրանց կողմնակից գյուղացիները)՝ բանվորական վերահսկողությանը, բանկերի նացիոնալիզացիային և այլն համաձայնելու դեպքում, հավասարար հողօգտագործումը կլիներ դեպի լիակատար սոցիալիզմ տանող անցման միջոցներից մեկը: Անհեթեթություն կլիներ, յեթե այդ անցման միջոցները պրոլետարիատը փաթաթեր գյուղացիների վզին. նա պարտավոր է, սոցիալիզմի հաղթության շահերը նկատի ունենալով, զիջել աշխատավոր և շահագործվող գյուղացիներին այդ անցման միջոցների ընտրության մեջ, վորովհետև նրանք սոցիալիզմի գործին վնաս չեյին բերի:

Մի ձախ-էսէռ (յեթե չեմ սխալվում, դա ընկեր Ֆեոֆիլակտովն եր) այն ժամանակ ինձ հետևյալ հարցը տվեց.

«Իսկ ի՞նչ կերպ կվարվեն բոլշևիկները, յեթե Սահմանադիր Ժողովում գյուղացիները ցանկանան անցկացնել հավասարար հողօգտագործման վերաբերյալ օրենքը, բուրժուազիան դեմ լինի գյուղացիներին, իսկ հարցի լուծումը բոլշևիկներից կախված լինի»:

Յես պատասխանեցի. բանվորների դաշինքն աշխատավոր ու շահագործվող գյուղացիների հետ այդպիսի դեպքում կպարտավորեցնի պրոլետարիատի կուսակցությանը, յերբ սոցիալիզմի գործն ապահովված կլինի բանվորական վերահսկողություն մտցնելով, բանկերի նացիոնալիզացիայով և այլն, ձայն տալու գյուղացիների օգտին ընդդեմ բուրժուազիայի: Իմ կարծիքով՝ այդ դեպքում բոլշևիկները քննարկության ժամանակ իրավացի կլինեն մտցնելու իրենց առանձին հայտարարությունը, իրենց անհամաձայնության մասին վերապահում անելով և այլն, սակայն այդպիսի դեպքում ձեռնպահ մնալ՝ կնշանակեր սոցիալիզմի համար մղվող պայքարի մեջ դավաճանել իր դաշնակիցներին՝ նրանց հետ ունեցած մասնավոր տարաձայնության պատճառով: Այդպիսի դրության դեպքում բոլշևիկները յերբեք գյուղացիներին չեն դավաճանի: Յերբեք հավասարար հողօգտագործումը և նման միջոցները սոցիալիզմին չեն վնասի, յեթե իշխանությունը բանվորական և գյուղացիական կառավարության ձեռքին է, յեթե մտցված է բանվորական վերահսկողություն, մտցված է բանկերի նացիոնալիզացիա, ստեղծված է ամբողջ ժողովրդական տնտեսության ուղղություն տվող (կարգավորող) բանվորական և գյուղացիական տնտեսական բարձրագույն հիմնարկություն և այլն:

Այս եր իմ պատասխանը:

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 1-ին (նոյեմբերի 18-ին):
Տպագրված է 1917 թ. դեկտեմբերի 2-ին (նոյեմբերի 19-ին):
«Правда»-յի № 194-ում:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱՁԵՎԻ ՆԱԽԱԳԻԾ *

1. Բոլոր կալվածատիրական, մասնատիրական, ինչպես նաև ուդելային, յեկեղեցապատկան և այլ հողերն անհապաղ պետք է անցնեն ժողովրդին առանց վորևէ փրկավճարի:

2. Գյուղացիությունը կազմակերպված ձևով, իր Գյուղացիական Դեպուտատների Խորհուրդների միջոցով, տեղերում անհապաղ պետք է վերցնի ամբողջ հողը՝ տնտեսական տնօրինության համար, դրանով ամենևին չնախորոշելով հողային կարգերի վերջնական սահմանումը Սահմանադիր Ժողովի կամ Խորհուրդների Համառուսական Խորհրդի կողմից, յեթե ժողովուրդը կենտրոնական պետական իշխանությունը տա Խորհուրդների այդպիսի Խորհրդի ձեռքը:

3. Հողի մասնավոր սեփականությունն առհասարակ պետք է վոչնչացվի, այսինքն՝ ամբողջ հողի նկատմամբ սեփականության իրավունքը պետք է պատկանի միայն ամբողջ ժողովրդին· իսկ հողը պետք է տնօրինեն տեղական դեմոկրատիկ հիմնարկությունները:

4. Գյուղացիները պետք է մերժեն կապիտալիստների, կալվածատերերի և նրանց Ժամանակավոր Կառավարության խորհուրդը՝ հողի անհապաղ տնօրինումը սահմանելու համար տեղերում կալվածատերերի հետ «համաձայնության գալու» մասին· հողի տնօրինումը պետք է վորոշվի տեղական գյուղացիների մեծամասնության կազմակերպված վճռով, այլ վոչ թե մեծամասնության, այսինքն՝ գյուղացիների, համաձայնությամբ փոքրամասնության հետ, այն ել չնչին փոքրամասնության, այսինքն՝ կալվածատերերի հետ:

* «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրի 1917 թ. հրատարակության մեջ վերնագրի տեքստը հետևյալն է. «Ագրարային հարցի վերաբերյալ բանաձևի նախագիծ, վոր Ն. Լենինը ներկայացրել է Գյուղացիական Դեպուտատների Համառուսական Խորհրդին սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անունից»: Խմբ.:

5. Բոլոր կալվածատիրական հողերն առանց փրկավճարի գյուղացիությանն անցնելու դեմ բոլոր միջոցներով պայքարում են և կպայքարեն վոչ միայն կալվածատերերը, այլև կապիտալիստները, վորոնք ունեն վոչ միայն դրամական մեծ ուժ, այլև ազդեցության ուժ դեռևս խավար մասսաների վրա լրագրերի, կապիտալի տիրապետությանն ընտելացած շատ չինովնիկների միջոցով և այլն: Այս պատճառով առանց փրկավճարի բոլոր կալվածատիրական հողերի անցումը գյուղացիության ձեռքը չի կարող վոչ իր վախճանին հասցվել, վոչ ել ամրացվել, առանց գյուղացիական մասսաների մեջ կապիտալիստների նկատմամբ յեղած վստահությունը խորտակելու, առանց սերտ դաշինքի գյուղացիության և քաղաքային բանվորների միջև, առանց ամբողջ պետական իշխանությունը Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլ Դեպուտատների Խորհուրդների ձեռքն անցնելու: Միայն այն պետական իշխանությունը, վոր գտնվում է նման Խորհուրդների ձեռքում և պետությունը կառավարում է վոչ թե վոստիկանության, վոչ թե չինովնիկների, վոչ թե ժողովրդից կտրված մշտական բանակի միջոցով, այլ համաժողովրդական, բանվորների ու գյուղացիների գլխովին զինված միլիցիայի միջոցով, միայն այդպիսի պետական իշխանությունն ի վիճակի յե ապահովելու վերը շարադրված և ամբողջ գյուղացիության կողմից պահանջվող հողային ձևափոխությունները:

6. Գյուղատնտեսական վարձու բանվորները և չքավորագույն գյուղացիները, այսինքն՝ այն գյուղացիները, վորոնք չունենալով բավականաչափ հող, անասուն, գործիքներ, իրենց ապրուստի միջոցներն են հայթայթում մասամբ վարձու աշխատանքով, այսպիսի գյուղացիները բոլոր ուժով պետք է ձգտեն ինքնուրույն կազմակերպման առանձին Խորհուրդների մեջ, կամ առանձին խմբակներ կազմեն ընդհանուր գյուղացիական Խորհուրդներում, վորպեսզի իրենց շահերը պաշտպանեն հարուստ գյուղացիների դեմ, վորոնք անխուսափելիորեն ձգտում են դաշնակցել կապիտալիստների ու կալվածատերերի հետ:

7. Պատերազմի հետևանքով Ռուսաստանին, ինչպես և բոլոր պատերազմող, այլ և չեզոք (չպատերազմող) յերկրներից շատերին սպառնում է փլուզում, կատաստրոֆա, սով, բանվորական ձեռքերի պակասություն, ածխի, յերկաթի և այլնի պակասության պատճառով: Յերկիրը փրկել կարող է միայն այն բանը, վոր Բանվորների և Գյուղացիների Դեպուտատներն իրենց հսկողության ու ղեկավարության տակ առնեն ամբողջ արտադրու-

թյունը և պրոդուկտների բաշխումը: Այս պատճառով անհրաժեշտ է հենց այժմ նախապատրաստել Գյուղացիների Դեպուտատների Խորհուրդների համաձայնություններ Բանվորների Դեպուտատների Խորհուրդների հետ, հաց և ուրիշ գյուղական մթերքներ փոխանակելու գործիքների, կոշիկեղենի, հագուստի և այլնի հետ առանց կապիտալիստների միջնորդության և հեռացնելով նրանց՝ ֆաբրիկաները կառավարելուց: Այդ նույն նպատակներով պետք է խրախուսել կալվածատիրական անասունի ու գործիքների անցումը գյուղացիական կոմիտեների ձեռքը՝ այդ գործիքները և այդ անասուններն ընդհանուր օգտագործման ծառայեցնելու համար: Հավասարապես պետք է խրախուսել յուրաքանչյուր խոշոր կալվածքից օրինակելի տնտեսություն կազմելը՝ կիրառելով հողի ընդհանուր մշակում լավագույն գործիքների օգնությամբ, ագրոնոմների ղեկավարությամբ և գյուղատնտեսական բանվորների Դեպուտատների Խորհուրդների վորոշումներով:

ՌՍԴԲԿ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) 1917 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ 1917 ԹՎԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ (ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ) ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ *

Կալվածատիրական հողատիրության գոյությունը Ռուսաստանում ճորտատեր-կալվածատերերի իշխանության նյութական պատվարը և միապետության հնարավոր վերականգնման գրավականն է: Այս հողատիրությունը Ռուսաստանի բնակչության ճնշող մասսային՝ գյուղացիությանն անխուսափելիորեն դատապարտում է աղքատության, ստրկացման և ընկճվածության, իսկ ամբողջ յերկիրը՝ հետամնացության—կյանքի բոլոր բնագավառներում:

Ռուսաստանում գյուղացիական ինչպես բաժնային (համայնական ու ծխապատկան), նույնպես և մասնավոր (վարձակալած ու ու գնովի հող) հողատիրությունը, վարից-վեր և յերկայնքով ու լայնքով կաշկանդված է հին, կիսաճորտատիրական կապերով ու հարաբերություններով, գյուղացիներին՝ ճորտատիրական իրավունքի ժամանակներից ժառանգած՝ տարակարգերի բաժանմամբ, չերտընդմիջությամբ և այլն և այլն: Այս բոլոր հնացած ու վնասակար միջնապատերը ջախջախելու անհրաժեշտությունը, հողը «ցանկաթափելու» անհրաժեշտությունը, հողատիրության և հողօգտագործության բոլոր հարաբերությունները համառուսական ու համաշխարհային տնտեսության նոր պայմանների համաձայն նորից վերակառուցելու անհրաժեշտությունը՝ կազմում է պետության մեջ յեղած բոլոր հողերի նացիոնալիզացիայի նկատմամբ գյուղացիության ունեցած ձգտումների նյութական հիմքը:

Ինչպես էլ լինեն մանր-բուրժուական այն ուտոպիաները, վորոնցով նարոդնիկական բոլոր կուսակցություններն ու խմբերը

* 1917 թ. հրատարակված «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրի մեջ վերնագրի տեքստը հետևյալն է. «Բանաձև հողային հարցի մասին, ընդունված ՌՍԴԲԿ (բոլշևիկների) Համառուսական կոնֆերենցիայում, 1917 թ. ապրիլի 24—29-ին»: Խմբ.:

պարուրում են գյուղացիական մասսաների պայքարն ընդդեմ ճորտատիրական կալվածատիրական հողատիրության և ընդդեմ ամբողջ հողատիրության ու հողօգտագործման մեջ ընդհանրապես Ռուսաստանում գոյություն ունեցող ճորտատիրական բոլոր կապանքների,—այս պայքարն ինքն արտահայտում է միանգամայն բուրժուական-դեմոկրատական, անպայման առաջադիմական և տնտեսապես անհրաժեշտ ձգտում դեպի բոլոր այդ կապանքների վճռական փշրումը։

Հողի նացիոնալիզացիան, լինելով բուրժուական միջոցառում, նշանակում է դասակարգային պայքարի ամենամեծ հնարավորություն և կապիտալիստական հասարակության մեջ հնարավոր ազատություն, ինչպես և հողօգտագործման ազատագրում վոչ-բուրժուական ամեն տեսակի հավելուկներից։ Բացի այդ՝ հողի նացիոնալիզացիան իբրև հողի մասնավոր սեփականության վերացում գործնականում կնշանակեր այնպիսի ուժգին հարված առհասարակ արտադրական բոլոր միջոցների մասնավոր սեփականատիրությանը, վոր պրոլետարիատի կուսակցությունը պետք է ամեն տեսակի աջակցություն ցույց տա նման ձևափոխությանը։

Մյուս կողմից՝ Ռուսաստանի ունևոր գյուղացիությունն արդեն վաղուց ստեղծել է գյուղացիական բուրժուազիայի տարրերը, և Ստոլիպինի ագրարային ռեֆորմն անկասկած ուժեղացրեց, բազմապատկեց, ամրացրեց այդ տարրերը։ Գյուղի մյուս բևեռում նույնքան ուժեղացել, բազմապատկվել են գյուղատնտեսական վարձու բանվորները, պրոլետարները, և նրանց մոտիկ կանգնած կիսապրոլետարական գյուղացիության մասսաները։

Վորքան ավելի վճռական ու ավելի հետևողական լինի կալվածատիրական հողատիրության խորտակումն ու վերացումը, վորքան ավելի վճռական ու ավելի հետևողական լինի բուրժուական-դեմոկրատական ագրարային ձևափոխությունը Ռուսաստանում ընդհանրապես, այնքան ավելի մեծ ուժով ու արագությամբ կզարգանա գյուղատնտեսական պրոլետարիատի դասակարգային պայքարն ընդդեմ ունևոր գյուղացիության (գյուղացիական բուրժուազիայի)։

Նայած այն հանգամանքին՝ քաղաքային պրոլետարիատին կհաջողվի՞ արդյոք իր հետևից տանել գյուղական պրոլետարիատին և միացնել նրան գյուղի կիսապրոլետար մասսաներին, թե այդ մասսան կգնա գյուղացիական բուրժուազիայի հետևից, վորը ձգտում է Գուչկովի, Միլյուկովի, կապիտալիստների, կալ-

վածատերերի և ընդհանրապես հակահեղափոխության հետ դաշնակցելուն,—նայած այդ հանգամանքին կվորոշվի ռուսական հեղափոխության բախտն ու ելքը, ինչ չափով Յեվրոպայում սկսվող պրոլետարական հեղափոխությունն իր անմիջական, հզոր ազդեցությունը չի գործի մեր յերկրի վրա։

Յելնելով դասակարգային այսպիսի դրությից և ուժերի այսպիսի հարաբերակցությունից՝ կոնֆերենցիան վորոշում է

1) Պրոլետարիատի կուսակցությունը բոլոր ուժերով պայքարում է կալվածատիրական (ինչպես նաև արքունական, յեկեղեցապատկան, կաբինետային և այլն և այլն) բոլոր հողերը Ռուսաստանում անհապաղ ու լիովին կոնֆիսկացիայի յենթարկելու համար։

2) Կուսակցությունը վճռականորեն հանդես է գալիս պաշտպանելու բոլոր հողերի անհապաղ անցումը Գյուղացիական Դեպուտատների Խորհուրդներում կամ իսկապես լիովին դեմոկրատականորեն ընտրված և կալվածատերերից ու չինովնիկներից լիովին անկախ տեղական ինքնավարության այլ մարմիններում կազմակերպված գյուղացիության ձեռքը։

3) Պրոլետարիատի կուսակցությունը պահանջում է պետության մեջ յեղած բոլոր հողերի նացիոնալիզացիան, վոր նշանակում է բոլոր հողերի սեփականության իրավունքի հանձնումը պետության ձեռքը· նացիոնալիզացիան հողերի տնորինության իրավունքը հանձնում է տեղական դեմոկրատական հիմնարկությունների ձեռքը։

4) Կուսակցությունը վճռականորեն պետք է պայքարի ինչպես Ժամանակավոր Կառավարության դեմ, վորը թե՛ Շինգարյովի բերանով և թե՛ իր կոլեկտիվ յելույթներով գյուղացիների վզին է փաթաթում «կալվածատերերի հետ կամովին համաձայնության գալը», այսինքն՝ իրապես ռեֆորմի կալվածատիրական բնույթը, և սպառնում է պատժել գյուղացիներին իրենց «ինքնագլխության» համար, այսինքն՝ սպառնում է բնակչության փոքրամասնության (կալվածատերերի ու կապիտալիստների) կողմից մեծամասնության նկատմամբ բռնության անցնելով,—այնպես էլ ընդդեմ նարոդնիկների և մենշևիկ սոցիալ-դեմոկրատների մեծամասնության մանր-բուրժուական տատանումների, վորոնք խորհուրդ են տալիս գյուղացիներին չվերցնել բոլոր հողերը մինչև Սահմանադիր Ժողովը։

5) Կուսակցությունը խորհուրդ է տալիս գյուղացիներին

կազմակերպված ձևով վերցնել հողերը, բնավ թույլ չտալով գույքի ամենափոքր փչացում և հոգ տանելով արտադրության ավելացման մասին։

6) Ընդհանրապես ագրարային բոլոր ձևափոխությունները կարող են հաջող և կայուն լինել ամբողջ պետության լրիվ դեմոկրատականացման դեպքում միայն, այսինքն՝ մի կողմից վոստիկանությունը, մշտական բանակը և փաստորեն արտոնյալ չինովնիկությունը վոչնչացնելու դեպքում, իսկ մյուս կողմից՝ ամենալայն, վերևի հսկողությունից և խնամակալությունից լիովին ազատ տեղական ինքնավարություն ունենալու դեպքում։

7) Անհրաժեշտ է անհապաղ և ամենուրեք ձեռնարկել գյուղատնտեսական պրոլետարիատի առանձին և ինքնուրույն կազմակերպմանը, ինչպես Գյուղատնտեսական բանվորների Դեպուտատների Խորհուրդների (նաև կիսապրոլետար գյուղացիության Դեպուտատների առանձին Խորհուրդների) ձևով, այնպես էլ պրոլետարական խմբեր ու ֆրակցիաներ կազմակերպելու ձևով՝ Գյուղացիների Դեպուտատների ընդհանուր Խորհուրդներում, տեղական և համաքաղաքային վարչության բոլոր մարմիններում և այլն և այլն։

8) Կուսակցությունը պիտի պաշտպանի գյուղացիական այն կոմիտեների նախաձեռնությունը, վորոնք Ռուսաստանի մի շարք վայրերում կալվածատիրական կենդանի և մեռյալ ինվենտարը հանձնում են այդ կոմիտեներում կազմակերպված գյուղացիության ձեռքը, վորպեսզի դրանք հասարակականորեն-կարգավորված ձևով ոգտագործվեն բոլոր հողերը մշակելու համար։

9) Պրոլետարիատի կուսակցությունը գյուղի պրոլետարներին ու կիսապրոլետարներին խորհուրդ պիտի տա, վորպեսզի նրանք ջանան կալվածատիրական յուրաքանչյուր կալվածքից կազմել բավականաչափ խոշոր որինակելի տնտեսություն, վորը պիտի վարեն հասարակական հաշվով գյուղատնտեսական բանվորների Դեպուտատների Խորհուրդները՝ ագրոնոմների ղեկավարությամբ և տեխնիկական լավագույն միջոցների կիրառմամբ։

«Солдатская Правда» № 13,
1917 թ. մայիսի 16 (3)։

ԴԵԿՐԵՏ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

(Ընդունված է 1917 թ. նոյեմբերի 8-ի (հոկտեմբերի 26-ի) նիստում, գիշերվա ժամը 2-ին) *

1) Հողի կալվածատիրական սեփականությունը վերացվում է անհապաղ, առանց վորևէ փրկավճարի։

2) Կալվածատերերի կալվածքները, ինչպես և բոլոր ուդելային, վանքապատկան, յեկեղեցապատկան հողերը, նրանց ամբողջ կենդանի և մեռյալ ինվենտարով, դաստակերտային շենքերով և բոլոր պատկանելիքներով՝ անցնում են վոլոստային հողային կոմիտեների և գյուղացիների Դեպուտատների գավառային Խորհուրդների տնորինության տակ՝ մինչև Սահմանադիր ժողովի գումարումը։

3) Կոնֆիսկացիայի յենթարկվող գույքի, վորն այսուհետև պատկանում է ամբողջ ժողովրդին, վորևէ փչացումը հայտարարվում է ծանր հանցագործություն, վոր պատժվում է հեղափոխական դատարանով։ Գյուղացիների դեպուտատների գավառային Խորհուրդները ձեռք են առնում բոլոր անհրաժեշտ միջոցները, վորպեսզի խստագույն կարգ պահպանվի կալվածատիրական կալվածքների գրավման ժամանակ, վորպեսզի կարելի լինի վորոշել, թե մինչև ինչքան տարածություն բռնող և վոր հողամասերն են կոնֆիսկացիայի յենթակա, վորպեսզի կոնֆիսկացիայի յենթարկվող ամբողջ գույքի ճիշտ ցուցակը կազմվի և խստագույն հեղափոխական պահպանման յենթարկվի ժողովրդի ձեռքն անցնող հողերի վրա գտնվող տնտեսությունն իր բոլոր շենքերով, գործիքներով, անասուններով, մթերքների պաշարով և այլն։

* Վերնագրի տեքստը տրված է ըստ 1917 թ. հրատարակված «Նյութեր ագրարային հարցի շուրջը» բրոշյուրի։ Խմբ.։

4) Հողային մեծ ձևափոխումները կենսագործելիս, մինչև նրանց վերջնական լուծումը Սահմանադիր ժողովի կողմից, ամենուրեք պետք է ղեկավարվել հետևյալ գյուղացիական նակազով, որ կազմված է 242 գյուղացիական տեղական նակազների հիման վրա «Известия Всероссийского Совета Крестьянских Депутатов» լրագրի խմբագրության կողմից և հրապարակված այդ «Известия»-յի № 88-ում (Պետրոգրադ, № 88, 1917 թ. սեպտեմբերի 1-ին (օգոստոսի 19-ին)):

5) Շարքային գյուղացիների և շարքային կազակների հողերը կոնֆիսկացիայի չեն ենթարկվում:

Գյուղացիական նակազ հողի մասին

«Հողային հարցը, իր ամբողջ ծավալով, կարող է լուծել միմիայն համաժողովրդական Սահմանադիր ժողովը:

Հողային հարցի ամենաարդարացի լուծումը պետք է լինի այսպես.

1) Հողի մասնավոր սեփականությունը վերացվում է ընդմիշտ. հողը չի կարելի ո՛չ վաճառել, ո՛չ գնել, ո՛չ կապալով տալ կամ գրավ դնել, ո՛չ էլ որևէ այլ եղանակով օտարել:

Ամբողջ հողը՝ պետական, ուդելային, կաբինետային, վանքապատկան, եկեղեցապատկան, պոսեսիոն, մայորատային, մասնատիրական, հասարակական ու գյուղացիական և այլն, օտարվում է անվճար, լեր է ածվում համաժողովրդական սեփականության և անցնում է նրա վրա բոլոր աշխատողների օգտագործմանը:

Գույքային հեղաշրջումից տուժածներին վերապահվում է միայն հասարակական օգնություն վայելելու իրավունք այնքան ժամանակվա համար, որքան անհրաժեշտ է, որպեսզի նրանք հարմարվեն գոյության նոր պայմաններին:

2) Հողի ամբողջ ընդերքը, հանքերը, նավթը, ածուխը, աղը և այլն, ինչպես նաև համապետական նշանակություն ունեցող անտառներն ու ջրերը, անցնում են պետության բացառիկ օգտագործման: Բոլոր փոքր գետերը, լճերը, անտառները և այլն անցնում են համայնքների օգտագործման, պայմանով, որ դրանք գտնվեն ինքնավարության տեղական մարմինների վարչության տակ:

3) Այն հողամասերը, որոնք ունեն կուլտուրապես բարձր տնտեսություններ՝ այգիներ, պլանտացիաներ, սածիլանոցներ, տնկարաններ, ջերմոցներ և այլն, ենթակա չեն բաժանման, այլ վեր են ածվում ցուցադրականի և հանձնվում են պետության կամ համայնքի բացառիկ օգտագործման, նայած իրենց ծավալին ու նշանակությանը:

Դաստակերտային, քաղաքային և գյուղական հողը, տնամերձ այգիներով ու բանջարանոցներով, թողնվում են իրենց այժմյան տիրակալների օգտագործման, ընդ որում բուն հողամասերի չափը և նրանցից օգտվելու համար գանձելիք հարկի մեծությունը որոշվում է օրենսդրական կարգով:

4) Ձիաբուծարանները, արքունական և մասնավոր ցեղական անասնաբուծարաններն ու թռչնաբուծարանները և այլն կոնֆիսկացիայի յեն ենթարկվում, վերածվում համաժողովրդական սեփականության և անցնում կա՛մ պետության, կա՛մ համայնքի բացառիկ օգտագործման, նայած նրանց մեծությանն ու նշանակությանը:

Հետգնման հարցը ենթակա յէ Սահմանադիր ժողովի քննության:

5) Կոնֆիսկացիայի ենթարկված հողերի ամբողջ տնտեսական ինվենտարը, կենդանի և մեռյալ, անցնում է պետության կամ համայնքի բացառիկ օգտագործման՝ նայած նրանց մեծությանն ու նշանակությանը, առանց փրկանքի:

Ինվենտարի կոնֆիսկացիան չի վերաբերում սակավահող գյուղացիներին:

6) Հողի օգտագործման իրավունք ստանում են Ռուսական պետության բոլոր քաղաքացիները (առանց սեռի խտրության), որոնք ցանկանում են մշակել այդ հողն իրենց աշխատանքով, իրենց ընտանիքի օգնությամբ, կամ ընկերություն կազմելով, և միայն մինչև այն ժամանակ, քանի իրենց ուժը պատում է մշակել այդ հողը: Վարձու աշխատանք չի թույլատրվում:

Եթե գյուղական հասարակության որևէ անդամը պատահականորեն զրկվում է աշխատունակությունից 2 տարի ժամանակով, գյուղական հասարակությունը պարտավորվում է այդքան ժամանակով, մինչև նրա աշխատունակության վերականգնումը, օգնություն տալ նրան. հողը համայնորեն մշակելու միջոցով:

Ծերության կամ հաշմանդամության հետևանքով հողն անձամբ մշակելու հնարավորությունն ընդմիշտ կորցրած հողագործները կորցնում են հողի օգտագործման իրավունքը, բայց դրա փոխարեն պետությունից ստանում են կենսաթոշակային ապահովություն:

7) Հողօգտագործումը պետք է լինի հավասարար, այսինքն՝ հողը բաժանվում է աշխատավորների միջև՝ նայած տեղական պայմաններին, աշխատանքային կամ սպառողական նորմայով:

Հողի օգտագործման ձևերը պետք է լինեն բոլորովին ազատ—ըստ տնտեսությունների, խուտորային, համայնական, արտելային, ինչպես կվորոշվի առանձին գյուղերում և ավաններում:

8) Ամբողջ հողը, նրա օտարումից հետո, կազմում է համաժողովրդական հողային ֆոնդ: Հողն աշխատավորների միջև բաժանելու գործը վարում են տեղական և կենտրոնական ինքնավարությունները, սկսած դեմոկրատականորեն կազմակերպված անդասային գյուղական և քաղաքային համայնքներից ու վերջացրած կենտրոնական մարզային հաստատություններով:

Հողային ֆոնդը ենթարկվում է պարբերական վերաբաժանումների՝ նայած բնակչության աճման և գյուղատնտեսության արտադրողականության ու կուլտուրայի բարձրացման:

Հողաբաժինների սահմանների փոփոխման դեպքում հողաբաժնի նախնական կորիզը պետք է մնա անձեռնմխելի:

Հեռացող անդամների հողը վերստին մտցվում է հողային ֆոնդի մեջ, ընդ որում հեռացող անդամների հողամասերն ստանալու նախամեծար իրավունք ունենում են նրանց մերձավոր ազգականները և հեռացողների մատնանշած անձերը:

Հողում ներդրված պարարտացման ու մելիորացիայի (արմատական բարելավումներ) արժեքը, որչափով դրանք չեն օգտագործված հողաբաժինը հողային ֆոնդին վերադարձնելու ժամանակ, պետք է հատուցվի:

Եթե առանձին վայրերում առկա հողային ֆոնդը բավական չլինի ամբողջ

տեղական բնակչությանը բավարարելու համար, ապա բնակչության ավելուրդը յենթակա յե վերաբնակեցման:

Վերաբնակեցման կազմակերպումը, ինչպես նաև վերաբնակեցման ու ինվենտարի հայթայթման և այլ ծախսերը, պետք է պետությունն իր վրա վերցնի:

Վերաբնակեցումը կատարվում է հետևյալ կարգով. գաղթել ցանկացող հողազուրկ գյուղացիները, ապա համայնքի արատավոր անդամները, դասալիքները և այլն ու, վերջապես, վիճակահանությամբ, կամ ըստ համաձայնության»:

Այն ամենը, ինչ բովանդակում է այս նակազը, որպես ամբողջ Ռուսաստանի գիտակից գյուղացիների հսկայական մեծամասնության անխախտ կամքի արտահայտություն, հայտարարվում է ժամանակավոր օրենք, որը մինչև Սահմանադիր ժողովը կիրառվում է կյանքում ըստ հնարավորության անհապաղ, իսկ որոշ մասերում՝ այն անհրաժեշտ հաջորդականությամբ, որը պետք է որոշեն գյուղացիների դեպուտատների գավառային խորհուրդները:

* * *

Այստեղ ձայներ են լսվում այն մասին, որ հենց դեկրետն ու նակազը սոցիալիստ-հեղափոխականների կազմածն են: Թող այդպես լինի: Միևնույն չէ՞, թե ով է այն կազմել, բայց, որպես դեմոկրատական կառավարություն, մենք չենք կարող զանց առնել ժողովրդական ստորին խավերի վորոշումը, թեկուզ և համաձայն չլինեյինք դրա հետ: Կյանքի բովում, գործնականում կիրառելով այն, գործադրելով այն տեղերում, գյուղացիներն իրենք կհասկանան, թե որտեղ է ճշմարտությունը: Ցեվ յեթե գյուղացիներն անգամ այսուհետև էլ գնան սոցիալիստ-հեղափոխականների հետևից և յեթե նրանք նույնիսկ այդ կուսակցությանը մեծամասնություն տան Սահմանադիր ժողովում, այս դեպքում էլ մենք կասենք.—Թող այդպես լինի: Կյանքը լավագույն ուսուցիչն է, իսկ նա ցույց կտա, թե ով է իրավացի, և թող գյուղացիները մի ծայրից, իսկ մենք մյուս ծայրից՝ լուծենք այդ հարցը: Կյանքը կհարկադրի մեզ մերձենալ իրար հեղափոխական ստեղծագործության ընդհանուր հոսանքում, նոր պետական ձևեր մշակելու աշխատանքի ասպարեզում: Մենք պետք է հետևենք կյանքին, մենք պետք է ստեղծագործության լիակատար ազատություն տանք ժողովրդական մասսաներին: Զինված ապստամբությամբ տապալված հին կառավարությունն ուզում էր լուծել հողային հարցը անփոփոխելի հին ցարական բյուրոկրատիայի միջոցով: Բայց հարցը լուծելու փոխարեն՝ բյուրոկրատիան միայն կռվում էր գյուղացիների դեմ: Գյուղացիները վորոշ բան սովորել են մեր ութամսյա հեղափոխության ընթացքում, նրանք իրենք են ուզում լուծել հողի վերաբերյալ բոլոր հարցերը: Այս պատճառով՝ մենք դեմ ենք այս օրինագծի ամեն տեսակի ուղղումներին, մենք չենք ուզում մանրամասնել, վորովհետև մենք դեկրետ ենք գրում և վոչ թե գործողությունների ծրագիր: Ռուսաստանը լայնատարած է, և նրա տեղական պայմանները տարբեր են. մենք հավատում ենք, վոր գյուղացիությունն ինքը կկարողանա մեզնից ավելի լավ, այնպես, ինչպես հարկավոր է, լուծել հարցը: Մեր վոգով, թե եսերական ծրագրի վոգով—այդ չէ եյականը: Եյականն այն է, վոր գյուղացիությունը հաստատապես վստահ լինի, թե կալվածատերեր գյուղում այլևս չկան, թե՝ թող իրենք գյուղացիները լուծեն բոլոր հարցերը, թող իրենք կարգավորեն իրենց կյանքը:

Տպագրված է
1917 թ. նոյեմբերի 10-ին (հոկտեմբերի 28-ին)
«Известия ЦИК» № 209-ում
և «Правда» № 171-ում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Կաուցկի Կ. (1854—1938)—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և II Ինտերնացիոնալի ղեկավարներից մեկն եր: Իր առաջին աշխատությունների, հատկապես «Ագրարային հարցի» մեջ Կաուցկին հանդես եր գալիս վորպես մարքսիստ, թեև վոչ ամբողջովին հետևողականորեն: «Ցենտրիստ» եր—թաքնված, ուստի և՝ բանվորական շարժման համար ամենից վտանգավոր օպորտունիստ: Բոլշևիկների և մենշևիկների պայքարի մեջ Կաուցկին պաշտպանում եր վերջիններին: 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ՝ սոցիալ-շովինիստ, կեղծավորաբար քողարկում եր իր սոցիալ-շովինիզմը ցենտրիզմի դիմակով: «Կաուցկին մարքսիզմի պոռնկացման գործում իրեն ցույց ավեց վորպես առաջնակարգ կեղծավոր և վիրտուոզ» (Լենին): Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո Խորհրդային իշխանության թշնամի յեր:—7:

2 «Московские Ведомости» — ազնվական-ճորտատիրական, սևհարյուրյակային շրջանների լրագիր: Փակվեց 1917 թ. նոյեմբերին:—12:

3 «Вперед» լրագիրը — բոլշևիկյան առաջին թերթն է, լույս եր տեսնում 1905 թ. Ժընևում Վ. Ի. Լենինի խմբագրությամբ: 1905 թ. մարտի 29 (16)-ի № 12-ում զետեղված եր «Մեր ագրարային ծրագրի մասին» (նամակ III համագումարին) հոդվածը «—Ъ» ստորագրությամբ: Այդ հոդվածը սխալմամբ վերագրվել եր Վ. Ի. Լենինին և մտցվել է Յերկերի II և III հրատարակությունների VII հատորի մեջ (եջ 170—174):—21:

4 «Революционная Россия»—եսէռների կուլակային կուսակցության թերթն է, վորը լույս եր տեսնում 1900—1905 թ. թ.:—22:

5 Խոսքը Վ. Ի. Լենինի բոլշևիկյան «Вперед» լրագրի № 11 և 15-ում զետեղված յերկու՝ «Պրոլետարիատը և գյուղացիությունը» և «Մարքսն ամերիկական չորնի պերեդելի մասին» հոդվածների մասին է: № 12-ում զետեղված եր «Մեր ագրարային ծրագրի մասին» հոդվածը «Ъ» ստորագրությամբ:—34:

6 Այստեղ Վ. Ի. Լենինը նկատի ունի Ջացկու խոսքերը՝ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կոմեդիայի III գործողությունից:—37:

7 «Յերկու ազգություններ»—«Սիբիլլա» վեպի յենթավերնագիրը, վոր գրել է Վ. Դիզրաելին (1804—1881), Անգլիայի պետական հայտնի գործիչը և գրողը:—39:

8 «Рассвет» — Լեհական սոցիալիստական կուսակցության (ԼՍԿ) որգանն է: Այդ նախագծի քննադատական վերլուծությունը տվել է Վ. Ի. Լենինը «Սոցիալիզմ և գյուղացիություն» և «ԼՍԿ ագրարային ծրագրի նախագիծը» թեզերում և ուրվագծերում, վորոնք տպագրված են «Ленинский сборник» V-ում, եջ 390—394:—42:

9 Համառուսական գյուղացիական առաջին համագումարը կայացավ Պետրոգրադում 1917 թ. մայիսի 17-ից մինչև հունիսի 10-ը (մայիսի 4—28): Ճակատից և տեղերից ներկա եյին 1.115 դելեգատ:—59:

10 Նկատի ունի Վ. Ի. Լենինի «Հողի «ինքնագլուխ գրավման» մասին: «Սոցիալիստ-հեղափոխականների» վատ փաստարկները» հոդվածը, վոր զետեղված է «Правда»-յի № 62-ում 1917 թ. հունիսի 2-ին (մայիսի 20-ին): Տես Յերկեր, հատ. XX, եջ 394—397:—74:

11 Քաղաքացիական պատերազմի հետևանքով Հյուսիսային Ամերիկայում հյուսիսային և արևելյան արդյունաբերական նահանգները Ա. Լինկոլնի ղեկավարությամբ հաղթեցին ստրկատերերին, վորոնք անցել եյին հարավային հողագործական նահանգների գլուխ: 1865 թ. փետրվարի 1-ին ամերիկական կոնգրեսն ազատագրեց նեգրերին, վերացնելով ստրկությունը:—84:

12 «Известия Всероссийского совета крестьянских депутатов» գյուղացիական դեպուտատների Խորհրդի լրագիրը, լույս եր տեսնում 1917 թ.:—87:

13 Ծերեթելի Ի. Գ. (ծ. 1882)—մենշևիկ, սոցիալ-դավաճան: Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում՝ իմպերիալիստական պատերազմի շարունակման և բուրժուազիայի հետ դաշնակցելու թունդ կողմնակից. բուրժուական ժամանակավոր կառավարության մեջ յեղել է փոստի և հեռագրի մինիստր, այժմ՝ էմիգրանտ, ԽՍՀՄ թշնամի:

Սկոբելեվ Մ. Ի. (ծ. 1885 թ.)—մենշևիկ: Իմպերիալիստական պատերազմի տարիներին՝ ցենտրիստ: Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում աշխատանքի մինիստր եր բուրժուական ժամանակավոր կառավարության մեջ:—91:

14 Չերնով Վ. Մ. (ծ. 1876)—եսէռների կուլակային կուսակցության իդեոլոգ: Բուրժուական ժամանակավոր կառավարության հողագործության մինիստր, 1918 թ. չեխո-եսէռների ապստամբության կազմակերպման մասնակից, աջակցեց Կրոնշտադտի խռովությանը 1921 թ.: Սպիտակ էմիգրանտ, Խորհրդային Միության քինախնդիր թշնամին:

Ավկսենտյեվ Ն. Դ. (ծ. 1878)—եսէռների կուլակային կուսակցության պարագլուխ: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ՝ ծայրահեղ շովինիստ: Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանում՝ բուրժուական ժամանակավոր կառավարության մինիստր: Հոկտեմբերի նախօրյակին՝ տխրահռչակ Նախապառլամենտի նախագահ: Չեխո-սլովակյան ճակատում քաղաքացիական պատերազմի կազմակերպիչներից մեկը: Սպիտակ էմիգրանտ, Խորհրդային Միության թշնամի:—91:

15 Պեշեխոնով Ա. Վ. (1867—1934)—նարոդնիկ, վիճակագիր և հրապարակախոս: 1906 թվից՝ ժողովրդական սոցիալիստների կուսակցության (կադետների և եսէռների միջև միջնակա կուսակցություն) պարագլուխն եր: 1917 թ.՝ բուրժուական ժամանակավոր կառավարության պարենավորման մինիստրն եր:—94:

16 «Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում» հոդվածի մեջ, վոր առաջին անգամ տպագրվել է «Neue Zeit»-ի 1894 թ. № 10-ում, Էնգելսն ասում է. «Նախ՝ անպայման ճիշտ է ֆրանսական ծրագրի հետևյալ դրույթը. մենք նախատեսում ենք մանր գյուղացու անխուսափելի կործանումը, բայց բնավ կոչված չենք արագացնելու այդ կործանումը մեր միջամտությամբ:

[1] Իսկ յերկրորդ՝ նույնպես ակնհայտ է, վոր յերբ կտիրանանք պետական

իշխանությունը, մենք չենք մտածի այն մասին, որ մանր գյուղացիներին բռնի կերպով էքսպրոպրիացիայի յենթարկենք (միևնույն է՝ վճարով թե անվճար), ինչպես այդ ստիպված կլինենք անել խոշոր կալվածատերերի նկատմամբ: Մանր գյուղացիների նկատմամբ մեր խնդիրն ամենից առաջ կլինի այն, որ նրա մասնավոր արտադրությունը և մասնավոր սեփականությունը վերածվի ընկերականի, բայց ոչ թե բռնի կերպով, այլ օրինակի միջոցով և այդ նպատակի համար հասարակական օգնություն առաջարկելով: Եվ այդ ժամանակ, իհարկե, բավականաչափ միջոցներ կլինեն, որ մանր գյուղացուն ապահովենք այն օգուտները, վորոնք արդեն այժմյանից նրան պարզ պիտի լինեն» (Маркс и Энгельс, Сочинения, т. XVI, ч. 2, стр. 454—455. ИМЭЛ, 1936 г.):—95:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Հրատարակչության կողմից 3

1905 թիվ

Պրոլետարիատը և գյուղացիությունը 5
Լիբերալների ագրարային ծրագիրը 12
Մարքսն ամերիկական «չորնի պերեդելի մասին» 21
Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը դեպի գյուղացիական շարժումը 29
Սոցիալիզմը և գյուղացիությունը 39
Պրոլետարիատը և գյուղացիությունը 49
«Սոցիալ-դեմոկրատիայի ագրարային ծրագիրը 1905—1907 թ. թ. առաջին ռուսական հեղափոխության մեջ» գրքի վերջաբանը 54

1917 թիվ

«Ագրարային հարցի վերաբերյալ նյութեր» բրոշյուրի առաջաբանը . 57
Բաց նամակ գյուղացիական դեպուտատների Համամիութենական Համագումարի դելեգատներին 59
Ճառ գյուղացիական դեպուտատների Համառուսական Համագումարում ագրարային հարցի մասին 1917 թ. հունիսի 4-ին (մայիսի 22-ին) 65
Հրապարակախոսի օրագրից: Գյուղացիներն ու բանվորները . . . 87
Բանվորների դաշինքն աշխատավոր և չահագործվող գյուղացիների հետ 97
Ագրարային հարցի վերաբերյալ բանաձևի նախագիծ 100
ՌՍԴԲԿ (բոլշևիկների) 1917 թ. ապրիլյան կոնֆերենցիայի 1917 թ. մայիսի 11-ին (ապրիլի 28-ին) ընդունած բանաձևն ագրարային հարցի մասին 103
Դեկրետ հողի մասին՝ Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհուրդների Համագումարի 107
Ծանոթագրություններ 112

Խմբագիր Բ. Ն. Դավթյան
Համեմատությունն և ստիլիստական
աշխատանքները կատարել է Հ. Մանուկյանը
Տեխ. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Ջիդեչյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավլիտի լիազոր Վ. 1111, Հրատ. № 796 պ. 57, տիրաժ 6000, թղթի չափը
60×92 $^{1}/_{16}$ (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 7 $^{1}/_{4}$ տպ. մամուլ 3 $^{3}/_{4}$ թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 17/II 1940 թ.
Ստորագրվել է տպագրության 20/III 17 1940 թ.
Գինը 1 ռ. 35 կ., կազմը 1 ռ. 15 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Երևան, Ալլահվերդյան № 65

ՈՒՂՂՈՒՄ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
98	15—16 վ.	Ծրագրերն չեն պակասեցնում:	Ծրագրերը չեն փոփոխում:

4

ՀՀ Ազգային գրադարան
NL0172700

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.

В. И. ЛЕНИН
МАТЕРИАЛЫ ПО АГРАРНОМУ ВОПРОСУ
Государственное издательство политической литературы
Ереван • 1940